

# ԷԶՄԻԱԾԻՆ

1970 - ժԱ

Ռ Ն Ի  
Ի Է Տ Ա Ր Ի

Նոյեմբեր

# ԷԶՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ  
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՒՅ  
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ


ԺԲ

1970





ԵՐԵՎԱՆ. ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻ  
ԿՈՆԴԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ  
ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԻՄՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ**

ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ,  
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ  
ԱԶԳԻՍ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ  
ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՒՈՅ  
ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱԿՆԵՐԻ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՐՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՂԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ Տ. Տ. ԽՈՐԵՆԱՅ ԱՌԱԶՆՈՅ,  
ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Տ. ԵՂԻՇԷԻ  
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՅ  
Տ. ԾՆՈՐՀՔԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՀԱՄՕՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ,  
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԳԱՊԵՏԱՅ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱԻԱԳԱՅ,  
ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՎԱՆԻԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ  
ԽՈՐՀՐԳՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ  
ՀԱԻԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

ՅՆԾՄ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԳ, ՔԱՆՁԻ ՍՈՒՐԲ ԳՐԱԿԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՍՏՈՐՈՏԻՆ, ԱՀԱ ՅԻՍՈՒՆ  
ՏԱՐԻՆԵՐԷ Ի ՎԵՐ ԿԱՅ ՈՒ ԿԸ ԶԱՐԳԱՆԱՅ ՔՈՒ ՆԱԽԱՀԱՅՐԵՐՈՒԳ ՄԱՅՐ ԵՐԿԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆ,  
ԽԱՂԱՂ ՈՒ ԱՊԱՀՈՎ:

ԱՅՍ ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՐԵԳԱՐՁԻ ՍԵՄԻՆ, ՊԱՀ ՄԸ ՆԱՅԷ ԴԷՊԻ ԱՆՑԵԱԼԸ ՀԵՌԱԻՈՐ,  
ԱՆԾՓՈԹ ՏԵՍՆԵԼՈՒ ԵՒ ՈՒՂԻՂ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԼՈՒՍԱԻՈՐ ՆԵՐԿԱՆ:

ՓԱՌՔԻ ԴԱՐԵՐԷ ՈՒ ԱՆԿՐԿՆԵԼԻ ԼՈՅՍ ԻՐԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԷ ՅԵՏՈՅ, ԴՈՒՆ ՏԵՍԱՐ ԱՆ-  
ԿՈՒՄԸ ԹԱԳՈՒՀԻ ՄԱՅՐ ՔԱՂԱՔ ԱՆԻԻՆ, ԵՒ ԱՊԱ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԵՐՁԻՆ ՊԵ-  
ՏՈՒԹԵԱՆ Ի ԿԻԼԻԿԻԱ: ՅԱԶՈՐԳԵՑԻՆ ՎԵՑ ԱՀԱՐԿՈՒ ԴԱՐԵՐ, ՈՐՈՆՔ ՏԱՐԻՆ ՔԵԶ ԴԷՊԻ

եջրը մշակուան անհունհոյն: Գարե՞ր ստրկութեան, ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒ, ԳԱՐԵ՞ր ԿԵՐՈՒՄ-  
 ներո՞ւ, ԿՈՏՈՐԱԾՆԵՐՈՒ, ԳԱՐԵ՞ր ԳԱՂԹԻ ՈՒ ԱՆՎԵՐՋ ՅՐԻՈՒՄԻ ՂԵՊԻ ՀԵՌԱՍՈՐ ԱՓԵՐ  
 ԿՈՐՍԵԱՆ:

ՀԱՅԱՍՏԱՆ, ՇԱՏԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԳԱՐՁԱԾ ԷՐ ԼՈԿ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹԻՒՆ,  
 ԻՍԿ ԴՈՒՆ, ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ, ԱՆՈՒՆ ԶՈՒՆԵՑՈՂ ԱՄԲՈՒ: ԳՈՒ ԻՍԿ ՊԱՊԵՆԱԿԱՆ ՀՈՂԻ ՎՐԱՅ,  
 ԴՈՒՆ ՇՈՐՏ ԷՒՐ, ԻՐԱՄԱՋՈՒՐԿ ՅԵՂ, ՀԱՆԴՈՒՐԺՈՒՄՈՒ ՓՈՔՐԱՄԱՆՈՒԹԻՒՆ:

ԲԱՅՑ ԵԿԱՒ ԺԹ ԳԱՐԸ ԵՒ ՔԵԶԻ ԲԵՐԱՒ ԼՐԱՇՔԻ ՀԱՄԱՋՐ ԶԱՐԹՕՆՔԻ ԱՒԵՏԱԸ:  
 ԱՐԹՆՑԱԻ ՀՈԳԻԴ, ՀԱՒԱՔԵՑԻՐ ՈՒԺԵՐԻ ԿԱՄՔԻ, ՓՇՐԵՑԻՐ ԿԱՊԱՆՔՆԵՐԻԳ ԳԱՐԱՍՈՐ ԵՒ ԽԱ-  
 ԻԱՐԵՆ ԴԵՊԻ ԼՈՅՍ ԹՌԱՐ ԻԲՐԵԻ ՄՀԵՐ ՍԱՍՈՒՆՑԻ, ՇՈՂԱՑՆԵԼՈՎ ԹՈՒՐ ԿԱՅՆԱԿԻՆ:

ՀՆՁԱԾ ԷՐ ԺԱՄԸ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԻՆ: ՀԵՐՈՍԱԿԱՆ ՄԱՔԱՊՈՒՄՆԵՐ,  
 ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԿԵՐՏՈՂ ՔԱԶԵՐ, ԱՆՀԱՄԱՍԱՐ ԿՈՒԻ, ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ, ԾԱՆՐ ՅՈՒՍԱՊՈՒՄՈՒ-  
 ԹԻՒՆՆԵՐ, ԵՒ ՅԵՏՈՅ, ՅԵՏՈՅ՝ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՂԷՏԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ, 1915-Ի ԵՂԵՆՔԸ ԱԿ-  
 ՐԻԼԵԱՆ, ԱՌԱՋԻՆ ՑԵՂԱՄԱՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՔԱՂԱՔԱԿԵՐԹ ԿՈՉՈՒՄՈՒ ՄԵՐ ԳԱՐՈՒՆ:

ԿԸ ԹՈՒԷՐ ԹԷ ՓԱԿՈՒԱԾ Է ԳԻՐՔԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԵՐՋՆ Է ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԿ-  
 ՐԻՆ:

ԲԱՅՑ Ո՞Ր, ԱՍՏՈՒԱԾ ԶԷՐ ԼՔԱՆ ԶԲԵԶ: ՆՈՐ ՅՈՅԱ, ՆՈՐ ՀԱՒԱՏՔ ԵՒ ՆՈՐ ՈՒԺ ՏՈՒԱԾ  
 ՔԵԶԻ, ԵՒ ՔԱԶ ՈՐԳԻՆԵՐԴ, ԻՐԵՆՑ ՍՈՒՐԲ ԱՐԻՆՈՎ՝ ԿԵՐՏԵՑԻՆ, ԲԱՐՁՐԱՑՈՒՑԻՆ ՅԱՂԹՈՒ-  
 ԹԵԱՆ ՆՈՐ ԿՈՒՐՈՂԸ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ, ԱՐԱՐԱՏԻՆ ԸՆԾԱՅ: ՈՒ ԹԷՒԵ ԴԱՀ ՄԸ, ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈՒ-  
 ԼԻ ՄԵՒ ԹՈՒՂՈՔ ՍՊԱՌՆԱՑ ԽԵՂՂԱՄԱՀ ԸՆԵԼ ՔԵԶ ԵՒ ՈՏՔԻ ԿԵՐԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՍՈՒՐԲ, ԱՀԱ  
 1920-Ի ՎԵՐՋԻՆ ԱՄՍՈՒ ՍԵՄԻՆ, ՌՈՒՍԱՅ ԵՂԲԱՅՐ ԱԶԳՈՒԹԵԱՆ ՀՈՒԺԿՈՒ ԲԱԶՈՒԿԸ ՕԳՆՈՒ-  
 ԹԵԱՆ ՀԱՍՍԻ ՔԵԶԻ ԵՒ ԻՍՊԱՌ ԶՔԱՑԱՒ ՎՏԱՆԳԸ ՄԱՀԱՑՈՒ: ՊԱՅՆԱՌԱՑԱԻ ԵՐԿԻՐԸ ԱՆ-  
 ԽԱՐՀԻՆ ՀԱՅՈՑ: ԾԱԳԵՑԱԻ ԱՐԵԳԱԿԸ ԱՐԳԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ, ԵՒ ՇԵՆԱՐԱՐ ՅԱ-  
 ՌԱԶԸՆԹԱՑՔԻ: ՍԿՍԱՐ ԱԺԻՂ ՈՒ ԾԱՂԿԻԼ, ՀԱՑՈՎ ՈՒ ԼՈՅՍՈՎ ԱՌԱՏ:

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ ԵՒ ԱՆՈՒՔ ՈՐ ՊԱՏՈՑԵՑԻՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈՒԻ ԹՈՒՂՈՔ Ա-  
 ՆԻՐԱԻ, ՎԵՐՋՆԱՊԷՍ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ ԱՄՈՒՐ ՀԻՄ ԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐ ՊԵՏՈՒԹԵԱՆ: ԱՌԱՅՑ ՄԱ-  
 ՅԻՍԵԱՆ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ, ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈՒԻ ՄԱՀԱՑՈՒ ԾՐԱԳԻՐԸ Ի ԿԱՍԱՐ ՊԻՏԻ ԱՇՈՒՂԸ  
 1918-ԻՆ, ԱՌԱՆՑ 1920-Ի ՆՈՅՆԵՐԵՐԵԱՆ ՎԱՀԱՆԻՆ, ՊԻՏԻ ՓԷԼԻ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ԿԱՄԱՐԸ  
 ՅԱՂԹՈՒԹԵԱՆ:

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏՈՎ ԵՒ ՆՈՅՆԵՐԵՐԵԱՆ ԼՈՒՍԱՐԱՅՈՎ, ՎԵՐՋ ԳՏԱՒ ԹՇՈՒՄԸ  
 ՈՒ ԱՆՏԷՐ ՎԻՃԱԿԸ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ:

ԱՅՍՊԷՍ Է ՈՐ, ՎԵՑ ԳԱՐԵՐՈՒ ՔԱՌՈՐ ԵՏԵԻ ԹՈՂԱԾ, ԳՈՒՆ ԱԶԳՈՒԹԻՒՆ ԳԱՐՁԱՐ՝ ԳՈՒ  
 ՍԵՓԱԿԱՆ ԱՆՈՒՆՈՎԴ ՊԱՅՄԱՆ, ԳՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆԴ ՈԳԻՈՎ ԱՆՊԱՐՏ, ԳՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԳՐՈ-  
 ՇԱԿՈՎԴ ՀՊԱՐՏ: ԵՒ ԱՅՍՊԷՍ ՅԱՌԱՋ ԸՆԹԱՑԱՐ ՀԱՍՏԱՏ ՔԱՅԼԵՐՈՎ, ԶԵՌՔ-ԶԵՌՔԻ ՏՈՒԱԾ  
 ԵՂԲԱՅՐ ԺՈՂՈՎՈՒՐԿՆԵՐՈՒ ՀԵՑ: ԵՒ ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻՆԵՐՈՒ ԱՐԻՆ ԿՐՏԻՆՅՈՎ, ՇԻՆԱՐԱՒ  
 ԿԻՐՔՈՎ, ԿԱՌՈՒՑՈՂ ԶԵՌՔԵՐՈՎ ԵՒ ՀՈԳԻՈՅ ԼՈՅՍՈՎ, ԿԵՐՏԵՑԻՐ ՄԵՐ ՕՐԵՐՈՒ ՊԵՐՑ ԵՐԿԻՐԴ  
 ԱՐՄԵՆԱԿԱՆ, ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: ՀԻՆԳ ԱՆԳԱՍ ՏԱՐԱՑՈՒ ՏԱՐԻՆԵՐՈՒ ԸՆ-  
 ԹԱՅՔԻՆ, ԴՈՒՆ, ԶԱՐՔԱՇ ՈՒ ՀՈԳԻՈՎ ԱԶԱՏ ԺՈՂՈՎՈՒՐԴ, ԳՈՒՆ, ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ԺՈՂՈ-  
 ՎՈՒՐԴ, ՍՏԵՂՇԵՑԻՐ ՇՈՒՅԼՈՐԷՆ՝ ԱՅՆՔԱՆ, ԻՆԶՔԱՆ ՀԻՆԳ ԱՆԳԱՍ ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻՆԵՐՈՒ  
 ՄԷՋ:

ՅԱՐԳԱՆՔ ՔԵԶ ՆԱՀԱՏԱԿ ԺՈՂՈՎՈՒՐԴ:  
 ՅԱՐԳԱՆՔ ՔԵԶ ՎԵՐԱԾՆԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴ:

ԱՅՍ ՊԱՏՄԱԿԱՆ ՏՕՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ ԿԸ ՈԳԵԻՐԸ ՈՒ ԿԸ ՄԻԹԱՐԸ: ՆԱԵԻ ՄԵՐ ՍՈՒՐԲ  
 ԵԿԵՂԵՑԻՆ, ՄԵՐ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ ԳԱՌԸ ԵՒ ՀԱՄՄԱՅՆ ՄԵՐ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԶԱՒԱԿՆԵՐԸ, ՎԱՄՆՁԻ  
 ՄՕՑ ԵՐԿՈՒՀԱԶԱՐԱՄԵԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՄԲ, ՆՈՒԻՐԱԳՈՐԾՈՒԱԾ Է: ԱՆՔԱՅՏԵԼԻ ՄԻԱՄՆՈՒ-  
 ԹԻՒՆԸ ՄԵՐ ԱԶԳԻՆ ՈՒ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ: ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆ ԶՕՐԱՎԱՐ ԵՒ ՍՈՒՐԲ ՅՈՎԱԼԷՓ ԿԱ-  
 ԹՈՂԻԿՈՍ, ՄԻԱՑԱՆ ՈՒ ՆՈՅՆԱՑԱՆ՝ «ՎԱՄՆ ՅԻՍՈՒՍԻ, ՎԱՄՆ ՀԱՅՐԵՆԵԱՅ» ՈՒԹՏՈՎ ՈՒ ԳՈՐ-  
 ԾՈՎ: ԱՅԴ ՆՈՅՆ ՈՒԹՏՈՎ ՈՒ ԳՈՐԾՈՎ՝ ԱԶԳ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ ԿԱՊՈՒԱԾ ՄՆԱՑԻՆ ԳԱՐԵՐ ՈՒ ԳԱ-  
 ՐԵՐ, ՄԻՆՁԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ: ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ՝ ԻՐ ԾԱԳՈՒՄՈՎ, ԻՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՄԲ  
 ԵՒ ԻՐ ՀՈԳԵՔԱՆՈՒԹԵԱՄԲ ԱՆՀԱՅՐԵՆԻՔ ԶԷ, ԱՊԱԶԳԱՅԻՆ ԶԷ: ԱՒԵԼԻՆ, ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ, ԲՈ-  
 ԼՈՐ ԺԱՄՄԱԿԱՆԵՐՈՒ ՄԷՋ, ԶՕՐԱՎԻԳ ԿԱՆԳԱՆՈՒ Է ՀԱՅ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՅԱՃԱՍԻ ՀԱՆԴԻ-  
 ՍԱՑԱԾ Է ԱԶԳՈՒԹԵԱՆ ԳՐՕՇԱԿ, ՀԱՅՐԵՆԻՔ ԿԵՐՏՈՂ ՈՒԺ, ԵՐԲԵՄՆ ԻՐ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ  
 ԻՍԿ ԳՆՈՎ:

ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵՒՈՒԹԵԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԵԱՆ ՄԷՋ, ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱՒԱՏՔՈՎ Ա-  
 ՌԱԽԵԼ ԱՄՐԱՊՆԴՈՒԱԾ Է ՄԻԱՄՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՑ ԱԶԳՈՒԹԵԱՆ, ԵՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱԶԳԱ-  
 ՅԻՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ՇՆՈՐՀԻՒ, ԱՌԱԽԵԼ ԱՄՈՒՐ ԽԱՐՍՈՒՈՒԱԾ Է ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱՒԱՏՔԸ ՀԱՅ  
 ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՀՈԳԻՈՅՆ ՈՒ ԿԵՍՆՔԻՆ ՄԷՋ:

ԱՅՍՕՐ ԱՎ ՈՒՐԵՄՆ, ԻՆՉՊԷՍ ՄԻՇՏ, ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ԻՐ ՍՊԱՍԱԿՈՐՆԵՐԸ ԵՐՋԱՆԻԿ ԵՆ ՈՂՋՈՒՆԵԼՈՒ ՎԵՐԱԾՆՈՒՆԿԸ ՀԱՅՐԵՆԻ ՊԵՏՈՒԹԵԱՆ, ՈՐ ՅԱՂԹԱՆԱԿՆ Է ՀԱՅ ԱԶԱՏԱ- ԳՐԱԿԱՆ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՅՔԱՐԻՆ, ՊԱՅՔԱՐ, ՈՐՈՒՆ ԼԱՅՆ ՉԱՓԵՐՈՎ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԵՆ ԲԱԶՈՒՄ ԱՆՋՆՈՒՐԱՅ ՈՒ ՔԱԶ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐ, ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԻ ՀԵՐՈՍՈՒԹԵԱՄԲ:

ՎԵՐԱԾՆԱԾ ՄԵՐ ԵՐԿԻՐԸ, ՀԱՅԱՍՏԱՆ, ԻՐԱԿԱՆԱՑԱԾ ԵՐԱԶՆ Է ԲՈՎԱՆԳԱԿ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԳԻՆ, ՈՒ ԲՈՎԱՆԳԱԿ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ:


ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԲԱՐՋՈՒՆՔԷՆ, ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՅՍՕՐ ԿՕՐԸՆԷ ՅԻՇԱՏԱԿԸ ՀԱՅ ԱԶԳԻ ԲԻՒՐԱԲՈՐ ՄԱՐՏԻՐՈՍՆԵՐՈՒՆ ԵՒ ՔԱԶՈՐԳԻՆԵՐՈՒՆ, ՈՐՈՆՔ ՀԵՐՈՍԱՑԱՆ ԱԶԱՏՈՒ- ԹԵԱՆ ԱՐԻԿՆՈՑ ԾԱՆԱՊԱՐՀԻՆ ՎՐԱՅ՝ «ՎԱՍՆ ՅԻՍՈՒՍԻ, ՎԱՍՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ»:

ՅՈՐԲԵԼԻՆԱԿԱՆ ՍՈՅՆ ՏԱՐԻՈՅՆ ՆՈՅԵՄԲԵՐ ԱՄՍԻ 29-ԻՆ, ՄԵՐ ԲՈՂՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔԻ ՀԱՆԳԻՍՏԱԻՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԻՏԻ ԿԱՏԱՐՈՒՄ ԵՒ ԿԵՆԳԱՆԻ ԽՕՍՔՈՎ ՊԻՏԻ ՈԳԵԿՈՉՈՒԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԿԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐ- ԳԻՆ, Ի ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ Ի ՍՓԻՐՈՍ ԱՇԽԱՐՀԻ:

«ԿԵՑՈՐ՝ ՏԷՐ, ԶԺՈՂՈՎՈՒՐԳ ԲՈ ԵՒ ՕՐԸՆԵԱ՝ ԶԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ ԲՈ, ՀՈՎԵԱ՝ ԵՒ ԲԱՐՋ- ՐԱՅՈՐ՝ ԶՍՈՍԱ ՅԱՅՍՄԷՆԵՏԷ ՄԻՆՉԵԻ ՅԱԻԻՏԵԱՆ»: ԱՄԷՆ:

Տոսա կոնդակս ի 24-ն ապրիլի  
1970 փրկչական ամի,  
և ի տումարիս հայոց ՌՆԺԹ,  
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի  
ՀՄՐ. 682

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





## Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

### ՎԵՐԱԾՆՆԴՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԵ ՈՒ ՀՐԱԾԲԸ

Այս տարի նոյեմբերի 29-ին լրացավ Հայաստանում սովետական կարգերի հաստատման հիսնամյակը:

Հայ ժողովուրդը և՛ մայր հողում, և՛ սփյուռքի ողջ տարածքի վրա համագապին բզեռությունը և հպարտության զգացումներով է դիմավորում իր հայրենի փրկության և իր հոգևոր, մշակութային վերածրության պատմական տարեդարձը:

Վերածնված հայ ժողովուրդը իր պատմության այս մեծ հանգրվանին հպարտ է և ուրախ, որ երկար դարերի ստրկությունից, թշվառությունից, անարև կյանքից հեռու, հերոսական ու համատ պայքարով, նվաճել է իր ազատությունը, հիմնել է իր պետականությունը և հարստացրել է իր հոգևոր գանձերն ու դարավոր մշակույթը՝ իրավ ու մեարուն արժեքներով:

Այս համաժողովրդական քերկրալի տունը ստիժով Մայր Աթոռ ս. Էջմիածինը ևս, իր հայրենասեր Հայրապետի գլխավորությամբ, իր գոհունակությունն ու ցնծությունն է բերում հայ ժողովրդի ուրախությանն ու ոգևորությանը:

Մայր Աթոռ ս. Էջմիածնի վերջին շրջանի պատմության 50 տարին անցել է Հայաստանում սովետական կարգերի հաստատման պայմաններում, հայրենի պետության խաղաղ և ապահով հովանու ներքո:

Անցնող 50 տարիներին Մայր Աթոռ ս. Էջմիածինը հայրենասիրական իր

արբազան պարտքը կատարել է պատվով հայ ժողովրդի և նրա վերածնված հայրենիքի հանդեպ:


Այս ոգով և ուղղությամբ հայրենասիրական մեծ գործունեություն են ծավալել Կեփորց Ե (1920—1930), Խորեն Ա (1932—1938), Գևորգ Զ (1945—1954) և մեր արդի Տ. Վազգեն Ա կաթողիկոսները՝ իրավացյորեն վկայելով, որ մեր երկիրն ու ժողովուրդը ազգային վերածննդյան փրկարար ու լուսավոր ուղի են բռնել՝ շնորհիվ Հայաստանում սովետական կարգերի հաստատման:

Մեր ազգային վերածննդյան 50-ամյակի ստիժով 1970 թվականի ապրիլի 24-ին գրած Իր հայրապետական կոնդակով Հայոց Հայրապետը հաստատում էր.

**«Այս պատմական տոնական տարին կոգեվորեն ու կմխիթարեն նաև մեր սուրբ եկեղեցին, մեր հոգևոր դասը և համայն մեր հավատացյալ զավակները, վասնզի մոտ երկուհազարամյա պատմությամբ, նվիրագործված է անքակտելի միասնությունը մեր ազգին ու մեր եկեղեցիին»:**

Հիսուն տարիներ առաջ թշնամին փորձում էր հայ ժողովրդի արևելյան հատվածի վրա էլ արձակել «ամբողջ չարիքն աշխարհի» և ողջ-ողջ գերեզմանել հայությունը, ու ջնջել մեր անունը պատմության էջերից:

**«Կթվեր թե փակված է գիրքը հայոց պատմության և վերջն է Հայաստան երկիրն: Բայց ոչ, Աստված չէր լքած քեզ: Նոր**



ԵՐԵՎԱՆ. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՊԱԼԱՏԸ

հույս, նոր հավատք և նոր ուժ սովալ քեզի, և քաջ որդիներդ, իրենց սուրբ արյունով կերտեցին, բարձրացուցին հաղթության նոր կոթողը Մարդարապատի, Արարատին ընծա»,—գրում է Վեհափառ Հայրապետը Իր կոնդակում:

1920 թվականի նոյեմբերի 29: Մի բուռ հայ ժողովուրդ, հյուծված ու արյունաքամ, տարագրության մտալլ ճանապարհներից անցած, մահվան անդնդի եզրին հասած, աշխարհի մեծ պետությունների կողմից չարաչար խաբված ու դաժանորեն լքված, ոտքի էր կանգնում վիրավոր, բզկտված, բայց արի ու անկկուն շտկում էր կորացած մեջքը, սրբում՝ ցավի ու թշվառության արցունքները և հերոսական խոյանքով, ստեղծագործ աշխատանքով ու ամուր բազուկներով հիմքը դնում իր նոր հայրենիքի:

Այդ, կշնջվեր հայ ժողովուրդը նաև մեր հայրենիքում իսպառ, եթե չծագեր Սոյեմբերյան կենսատու այգաբացը: Պատմությունը, սակայն, այլ ճակատագիր էր վերապահել մեր ժողովրդին: Իր պատմության ամենաճանր ու ճակատագրական պահին, հայ ժողովուրդը չկորցրեց իր պայծառատեսությունը և իր մեջ իմաստություն գտավ՝ տեսնելու և որդեգրելու փրկության միակ ու ճշմարիտ ճանապարհը:

Նա իր բախտը կապեց ոռու ժողովրդի հետ, երբ թվում էր, թե վերջացել է ամեն ինչ:

Նոյեմբերի 29-ը հաղթանակի և ճշմարիտ վերածննդյան օր է մեր ժողովրդի համար, նրա մղած կյանքի ու մահվան մեծ պայքարում:

Նոյեմբերի 29-ը հայ ժողովրդի ազատագրական պայքարի փառավոր ու հերոսական հանգրվանն է, ոսկի տառերով գրված մեր նոր պատմության մեջ և հայ ժողովրդի սրտում:

Նոյեմբերի 29-ը ճշմարիտ դարձանկետը հանդիսացավ մեր անցյալի թեև հերոսական, բայց արյունոտ տարեգրության և ընդմիջտ փակեց մեր դարավոր ողբերգության ու թշվառության դուռը: Եղեռնի ու բնաջրկշմանը փոխարինեց վերածննդյան այգաբացը, նոր կյանքի արշալույսը:

«Մարդարապատի հերոսամարտով և Նոյեմբերյան լուսաբացով, վերջ գտավ թշվառ ու անտեր վիճակը Մայր Հայաստանի:

1920-ի վերջին ամսու սեմին, ռուսաց եղբայր ազգության հուժկու բազուկը օգնության հասավ քեզի և իսպառ չքացավ վտանգը մահացու: Պայծառացավ երկինքը աշխարհին Հայոց: Ծագեցավ արեգակը արդարության և խաղաղության և շինարար հառաջընթացի: Սկսար աճիլ ու ծաղկիլ, հացով ու լույսով առատ»,—գրում է Հայոց

Հայրապետը Իր հոբելյանական կոնդակում: Մաքառումներով, պարանքներով, խիզախումներով ու մեծագործություններով լի հիսուն տարիներ են անցել այդ պատմական թվականից:

Հայաստանի հիսնամյակը՝ մեր վերածննդյան հիսնամյակն է: Հիսնամյակի խորհրդով ու լույսով են ներթափանցված մեր մշակույթը, արվեստն ու գրականությունը, մեր ողջ կյանքը: Դարերի թափոր է մեր սրտերում և Երևանի պողոտաների վրա:

Հիսուն տարին պատմության մեջ մի սկզբնադրո է. «Հագար ամ յաչս Տեանն որպէս օր մի»: Բայց պատմական եղան մեր հայրենիքի և մեր ժողովրդի նվաճումները: Հիսուն տարիների մեր վաստակը հավասար է հարյուրյակների ճիգին ու քրտինքին:

Անցնող հիսուն տարիների ընթացքում վիթխարի ու մնայուն որակական փոփոխություններ են կատարվել մեր արվեստի, գիտության, գրականության, լուսավորության, առողջապահության, ժողովրդական տնտեսության, արդյունաբերության, քաղաքաշինության և ժողովրդի հոգևոր-բարոյական նոր կյանքի մեջ:

Այսօր մեր արդի Հայաստանը հսկա փարոսի նման լուսավորում է բովանդակ հայության հաղթական երթուղին:

Ինչ ստեղծել է հայ ժողովուրդը հիսուն տարիների ընթացքում, դա անկողոպտելի սեփականությունն է հայ ժողովրդի, որովհետև մեր ժողովուրդը կրկին «Տէր և իշխան կարգեցաւ երկրին իրեանց և հայրենեաց»:

Արդի մեր Հայաստանն է հայ ժողովրդի պայծառ հույսերի, ազգային իդեալների փրկարար հանգրվանը, խաղաղ ու ապահով նավահանգիստը, դարերով երազված և հուսկ ուրեմն գտնված ավետյաց երկիրը:

Այսօր Արարատի դիմաց ահեղ զորությամբ հայրենի հողի վրա հայ ժողովուրդը վառել է իր հավերժության խարույկը և իր սեփական ձեռքերի մեջ է ամփոփել իր ճակատագիրը, եղբայրական ժողովուրդների համերաշխ ընտանիքում:

Այսօր մեր ժողովրդի հոգում բլուր երագներ են ծաղկում: Անցնող յուրաքանչյուր տարի երջանկության, խաղաղության մոռ գաբուններ է բերում մեր երկրին և ժողովրդին: Այսօր պայծառ է մեր ներկան, էլ ավելի հուսալից ու վառ՝ մեր ապագան: Այսօր հպարտորեն կանգնել է հայ ժողովուրդը իր վերածնված մայր հողի վրա, կանգնել է ինքնավստահ, անկոտրում հավատքով դեպի պայծառ ապագան:

Մայր Աթոռ ս. Էջմիածինն էլ մեր օրերի իր վերաշինությունն ու հոգևոր գարթոնքը պարտական է մայր հողի վրա ստեղծված


պետականությանը, խաղաղությանն ու ազգային ապահովությանը:


Հավերժական փառք և օրհնությունն և Էջմիածնից, մեր վերածնված նոր կյանքի ու հողին, մեր սիրելի և «անուշ Հայաստանին»:

Մայր Աթոռ և Էջմիածինը իր հայրենասեր Հայրապետի գլխավորությամբ և համայն հավատացյալ ժողովուրդը հայոց սրտենանդ աղթում են համազգային այս մեծ

տոնի առթիվ հայրենիքի է՛լ ավելի բարօրության և բարգավաճման, հայ ժողովրդի պաշտոնապազայի և աշխարհի խաղաղության համար:

Թող օրհնվի հավետ, պահվի ու պահպանվի նախախնամության հզոր Աջով և հաճ ժողովրդի բազուկներով ու հանճարով «Մրեւելեան կողմն աշխարհիս, Հայրապետութիւն և Հանրապետութիւն հայոց»:





Ա. ՀԱՏԻՏՅԱՆ

**ՄԱՅՐ ԱԹՈՒ Ա. ԷԶՄԻԱԾԻՆԸ ԵՎ ՎԵՐԱԾՆՎԱԾ  
ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ ՀԻՄՆԱՄՅԱԿԸ**

Նոյեմբերի 29-ին լրանում է Հայաստանում սովետական կարգերի հաստատման հիսնամյակը:

Իր ազգային-հոգևոր, մշակութային ու տնտեսական վերածնունդն ապրող հայ ժողովուրդը այս օրերին ազնիվ հպարտության զգացմունքներով է նշում և՛ մայր հայրենիքում, և՛ ախյուրքի ողջ տարածքի վրա այդ պատմական և հիշարժան տարեդարձը:

1920 թվականի նոյեմբերին մահվան եզրին հասած, անօգնական ու դարերով տրորված և անիրավված հայ ժողովուրդը նոյեմբերի 29-ին ոտքի էր կանգնում, ոռու բարի ու ազնիվ ժողովրդի եղբայրական օգնությամբ, և ընդմիջտ թոթափում դարերի ստրկության փոշին, փշրում՝ հարյուրամյակների ազատագրության ծանր շղթան և արևի տակ նվաճում ազատ ապրելու արդար իրավունքը, հայրենիք, պետականություն, խաղաղություն և ազգային վերածննդի լայն հնարավորություն:

Նոյեմբերյան հաղթանակով հայ ժողո-

վուրդը և մեր երկիրը ուր էին դնում նշանրիտ վերածնության փրկարար ողու վրա: Իրականություն էր դառնում հայության դարավոր երազը: Կատարվում էր մեր ժողովրդի մեծագույն իղձը՝ փրկությունը մեր ժողովրդի:

Համազգային այս մեծ սոցիալ առիթով Մայր Աթոռ ս. Էջմիածինն ու հայ եկեղեցին էլ, իր հայրենասեր Հայրապետի գլխավորությամբ, իր սրտագին ուրախությունն է բերում և ջերմորեն աղոթում է՝ «Օրհնեացի և պահպանեացի, և նախախնամեալ պահեացի Հանրապետութիւն Խորհրդային Հայաստանի»:

Մայր Աթոռի պատմության վերջին հիսնամյակը անցել է Հայաստանում սովետական կարգերի հաստատման իրավական ու բնականոն պայմաններում, հայրենի պետականության խաղաղ ու ապահով հովանու ներքո:

Մայր Աթոռ ս. Էջմիածինը սթափ ոգով ու հայրենասիրական անկեղծ զգացմունքնե-

րով 1920 թվականի նոյեմբերին ողջունում էր ստեղծված նոր կացությունը, իրադրությունների ընթացքը և առաջին իսկ րուպեից, որպես հայրենասիրության պատմական օջախ ու կենտրոն, լինում էր իր ժողովրդի և իր հայրենիքի հետ:

Մայր Աթոռ ս. Էջմիածնի համար էլ պարզ էր և հասկանալի, որ Հայաստանում նոր կարգերի հաստատումով, ավարտվում էր դարեր ու դարեր տևող մեր համազգային ողբերգությունը և նոր կարգերի հաղթանակի մեջ մարմնավորվում էին մեր ժողովրդի ներկայի և ապագայի նվիրական, արդար երազներն ու ձգտումները: Մեր ավերակ երկիրը կանգնում էր ազգային վերածնության անսպասարհի վրա և կյանքից, խաղաղությունից զրկված մեր ժողովուրդը անսահման հնարավորություններ էր ստանում կառուցելու իր ներկան ու ապագան, կյանքի նոր ու բազմազան ձևերի ու նպատակներ պայմանների մեջ:

Մայր Աթոռ ս. Էջմիածինը ևս իր պատմության վերջին հիսնամյակում հայրենասիրական ու սրբազան իր պարտքը կատարում էր վերածնված հայոց հայրենիքի և հայ ժողովրդի հանդեպ՝ պատվով, համոզմունքով և խորը գիտակցությամբ:

Մայր Աթոռ ս. Էջմիածնի գլխավորությամբ Հայաստանյայց եկեղեցին, հավատարիմ իր կոչմանը ու իր առաքելությանը, կանգնում էր վերածնված մայր հայրենիքի պաշտպանության դիրքերում, հանդես էր գալիս ազգային միասնության, համերաշխության կոչերով և հայրենակներ գործունեությամբ: Մայր Աթոռն էլ իր հերթին գոհողության և ծառայության իր համետ ու արդար բաժինն էր բերում հայոց ավերակ աշխարհի վերաշինության և, մանավանդ, մեր ժողովրդի դժբախտ մնացորդացի փրկության գործի մեջ, հայրենի պետության շուրջ էր համախմբում, տխուր նակատագրի բերումով աշխարհով մեկ ցրված, հայ ժողովրդի քեկորներին:

Այս ոգով և ուղղությամբ արդյունաշատ գործունեություն են ծավալել անցնող հիսուն տարիների ընթացքում, 1920—1970 թվականներին, երջանկահիշատակ Ս. Գևորգ Ե, Ս. Խորեն Ա, Ս. Գևորգ Զ կաթողիկոսները և արդի մեր կաթողիկոս Ս. Վազգեն Առաջինը:

Հայաստանում նոր կարգերի հաստատման առաջին տասնամյակում, 1920—1930 թթ., զանակալում էր լուսահոգի Ս. Գևորգ Ե կաթողիկոսը:

1920—1921 թվականներին ծանր ճգնաժամ էին ապրում մեր ժողովուրդն ու հայրենիքը:


1921 թվականի հոկտեմբեր 31 թվակիր

կոնդակով (համար 417) Գևորգ Ե-ը դիմում էր ողջ հայությանը, մեծ վշտով նկարագրում իր ժողովրդի գլխով անցած մեծ փոթորիկը, էր «Ամապացավ Մեծ Հայաստանը, կենդանի նահատակների մնացորդները» տարագրվեցին դեպի անապատները, «դատարկվեցին մեր ծաղկուն բաղաբները, ավերվեցին մեր շեն ավաններն ու բարեկից գյուղերը, տաճարներում և եկեղեցիներում լռեցին աստվածապաշտության և աղոթասացության ձայները, հիմնիվեր տապալվեցին մեր առաջինի և հայրենասեր նախնիների հրաշակներս կոթողները... Այս տխուր պատկերի առաջ Հայոց Հայրապետը, որպես այդ օրերի Երեմիա, ողբում էր «Հայաստանի ավերակների վրա» և միաժամանակ, սակայն, ոգևորիչ և ներշնչող հայրենասիրությամբ կոչ էր անում ողջ հայությանը, «հ սեր ազգի և հայրենյաց, սթափվել», արիսնալ, «հ բաց վանել կուսակցական ամեն պաշար, միաբան ոգով ու համերաշխությամբ հետամտու լինել միայն և միայն ափերյալ հայրենիքի վերաշինությանը և մեր ժողովրդի անբախտ մնացորդների վերածնությանը, հայրենասիրական և ազգասիրական ոգով»:

Շատ սրտառուչ կոչով է ավարտվում Գևորգ Ե-ի սույն հայրենասիրական կոնդակը: Այդ դժբախտ ու օրհասական օրերին մեր ժողովրդի և հայրենիքի ապագան ու հույսը, գրում է նա, «սրանք են, մեր ազգի այս բեկորները և մեր հազարավոր որբերը. մեր պարտքն է օգնել, փրկել և պահպանել դրանք, որովհետև, եթե սրանք էլ կորցնենք, էլ մեր ինչի՞ն է պետք հայրենիքը առանց բնակիչների»:

1922 թվականի հունվար 24 թվակիր կոնդակով (համար 54) Գևորգ Ե-ը հրահանգում էր սիլուոթում կազմել այս նպատակով «Հայաստանի օգնության կոմիտե», նշելով, որ «դրանց բոլորի նպատակը մեկ է և գործը՝ համազգային»: Գևորգ Ե-ը կանգնել էր հայրենասիրական առողջ և ճիշտ դիրքերի վրա, էր այս առթիվ իր խոսքը եզրակացնում է. «Մի է մեր հայրենի աշխարհը, մի է մեր լեզուն և աստվածապարզեվ դպրությունը... Իջման ս. սեղանի առաջ ես միշտ աղոթում եմ Հայաստանի ավերակների վերաշինության և իմ կրած և ցամաքած ժողովրդի վերանորոգության համար... աղոթում եմ նաև քեզ համար, պանդուխտ և տարագիր ժողովուրդ հայոց, որպեսզի ողջամբ և հաջողությամբ լինի քո վերադարձը, հայրենիքի ծոցը»:

Եթե Հայոց Հայրապետը 1921 թվականին սրտանմիկ ու սև գույներով էր բնութագրում հայրենիքի և իր ժողովրդի թշվառությունը, ապա 1923 թվականի նոյեմբեր 1 թվակիր



Երևան. Համայնապատկեր

կոնդակով (համար 343) լավատեսության, Միսեոն Ծերունու հավատքով ու տեսիլքով և հայրենասիրական, բերկրալի զգացմունքով ավետում էր ողջ հայությանը. «**Լսեցե՛ք և ձեր սրտերում պահեցե՛ք ընդհանրական ձեր Հայրապետի և Հոր խոսքերը. ո՛չ թե ե՛ս, այլ Տե՛րն է խոսում ձեր ականջներին. տեսա ծարավի անապատը՝ մեր հայրենի երկիրը՝ դարձյալ զգեցամ նոր հարսի զարդերը, որովհետև ոտքի է կանգնել իմ ժողովուրդը իր տառապանքներից, մահից և ապրում է խաղաղության և շինության մեջ. Աստված կրկին երանց դարձրել է Տեր և Իշխան իրենց երկրին և հայրենիքին:**»

Նույն կոնդակում Գևորգ Ե-ը արդարորեն նշում էր, որ մեր ժողովուրդն ու հայրենիքը ազգային վերածնության փրկարար ուղի են բռնել շնորհիվ Հայաստանում հաստատված նոր կարգերի. «**Մխիթարությանը վերահասու եղա, որ Հայաստան աշխարհի Խորհրդային Հանրապետության կառավարությունը հնարավոր ամեն ինչ անում է բարվոքելու համար մեր երկրի անտեսական վիճակը, ավերակ մեր հայրենի երդիկի շինությունը, մեր աշխարհի վերականգնումը, և նաև ծրագրում է հայրենիքի հիմնական կազմակերպության ոգին:**»

Գևորգ Ե կաթողիկոսի գահակալության օրոք, 1927 թվականի նոյեմբերին, լրանում է Հոկտեմբերյան հեղափոխության տասնամյակը: Պատմական այդ նշանակալից տարեդարձի առիթով Գևորգ Ե-ր առաջինը ողջունում էր այդ տարեդարձը և գրում 17 նոյեմբեր թվակիր (համար 944) իր բովանդակալից կոնդակը, նշելով նաև այդ հեղափոխության պատմական նշանակությունն ու դերը մանավանդ հալ ժողովրդի համար. «**Այս տոնը մե՛ծ է առավելապես մե՛ր ժողովրդի և մեր աշխարհի համար,**—գրում էր Գևորգ Ե-ը,—որովհետև համաշխարհային պատերազմը և բանասրկի միջոցով իրար դեմ ոխացած մեր դրացի ազգերի ընդդիմությունները ավեր ու կորուստ դարձրին մեր ամբողջ ազգն ու երկիրը, և մինչդեռ հավիտենական անդունդն ընկնելու վտանգի մեջ էինք, Ամենակալի աջը խնայեց ձեզ և մեր ժողովրդի մնացորդը փրկեց վերջնական կորուստից: Այժմ մեր կիսամեռ, հյուժված ժողովուրդը ավերակների միջից ելավ նոր կյանքի և ի շինություն հայրենյաց՝ շնորհիվ խորհրդային իրավակարգի ձեռքով պարգևված խաղաղության, ազգերի հավասարության և մեր դրացիների համերաշխության»:

Այնուհետև Գևորգ Ե-ը, ազգային հպարտության անկեղծ զգացմունքներով, խոսում էր իր կոնդակում մեր երկրի և ժողովրդի «ետանդագին շինարարության, մայրաքա-

ղաքիս վերաշինության», դպրոցների, ուսումնական բարձրագույն հաստատությունների, գիտական հիմնարկների կառուցման, մեր մտավորական կյանքի, այդ թվում՝ գիտության, արվեստների զարգացման մասին և եզրակացնում էր. «**Այս ամենը պտուղն է Խորհրդային Իշխանության տասնամյա հաստատության և խաղաղության, որը ողջունում ենք և բարեմաղթում, որ առավել ևս պտղաբեր լինի: Հայկազյան սեռի ժողովրդի կենդանության արմատը և հաստատության հիմքը մեր մայր երկիրն է և նրա մեջ բնակված ժողովուրդը: Նախնիքներից սալված է «Ծառն արմատով է ծառ, տունը հիմքով է տուն»:**»

1930 թվականի մայիսի 8-ին վախճանվում էր Գևորգ Ե կաթողիկոսը:

1932 թվականի նոյեմբերի 12-ին ս. Էջմիածնում գումարված ազգային-եկեղեցական ժողովը Ամենայն Հայոց կաթողիկոս էր ընտրում Խորեն արքեպ. Մուրադբեգյանին (1932—1938):

Խորեն Ա կաթողիկոսը 1917 թվականի փետրվարին, Պոլոժենիայի դադարումից հետո, առաջին հայրապետն էր, որ ընտրվում էր նոր հաստատված կարգերի պայմաններում, ուղղակի ազգային-եկեղեցական ժողովի կողմից, և հաջորդ օրն իսկ, կիրակի, նոյեմբերի 13-ին, օծվում և բարձրանում էր հայրապետական Աթոռ, առանց պետական միջամտության ինչպես եղել էր պարագան՝ 1836—1917 թվականներին ընտրված ութ կաթողիկոսների:

Խորեն Ա կաթողիկոսի օրով էլ Մայր Աթոռ ս. Էջմիածինը հայրենի կառավարության հանդեպ իր հայրենասիրական պարտականությունը կատարում էր ազնվությանը և հավատարմությանը:


1933 թվականի հունիսի 1-ին գրած հայրապետական իր անդրանիկ կոնդակում Խորեն Ա կաթողիկոսը նշում էր նախ, որ իր գահակալությանը «բարեբաստիկ նշանների սկզբնավորության» առաջ է գտնվում Մայր Աթոռը, և ապա մասնավոր կարևորությանը շեշտում էր, որ ազգային-եկեղեցական ժողովի գումարումը, կաթողիկոսի ընտրությունն ու գահակալությունը «պարտական ենք Հայաստանի Խորհրդային Կառավարության բարեհաճությանը»:

Խորեն Ա կաթողիկոսը իր վերոհիշյալ կոնդակում, որն ուղղված էր մեր նվիրապետական մշուս Աթոռներին, թեմակալ առաջնորդներին, կազմակերպություններին և բովանդակ հայությանը, հայրենասիրության, խաղաղության, ազգային միության, հայրենիքի վերաշինության և հայրենատարծության սրտագին կոչ էր անում:

Խորեն Ա կաթողիկոսը իր այդ կոնդակում

վշտով անդրադառնում էր նաև սփյուռքի որոշ գաղթօջախներում մեր ազգային-եկեղեցական կյանքում տեղ գտած կուսակցական տխուր պայքարներին և անախորժություններին, և զգուշացնելով մանավանդ թեմակալ առաջնորդներին, ազգային-եկեղեցա-

զավանդում է Խորհրդային Հայաստանի բարեջան կառավարության ջանքերով: Մեր ժողովուրդը իր ավանդական աշխատասիրությունն ու եռանդը ի գործ դնելով վերանորոգում է իր ավերված հայրենիքը, այն բարեփոխելով պտղալից և բարեկեցիկ երկ-



Երևան. Ա. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրերի Մատենադարանը

կան ու թեմական կազմակերպություններին, հորդորում էր. «Մեր հայրենի երկիրն ու սփյուռքի մեր համայն ազգը խաղաղության են կարոտ իրենց ստացած վերքերը բուժելու համար, ուստի պետք է աշխատեք հավատացյալների միջից արմատախիլ անել այն ամենը, ինչ հակառակ է խաղաղության, և թույլ չտալ, որ մեր մայր հայրենիքի հանդեպ թշնամական արարքներ գործվեն»:

Խորեն Ա. կաթողիկոսը իր կոնդակում հալոց աշխարհն ու Մայր Աթոռը համարում էր մեր համայն ժողովրդի «կենդանության սիրտը, հոգևոր և ազգային հառաջդիմության կենտրոններ» և ուրախությամբ ավետում էր, թե՛ «Աստուծո նորոգությանը մեզ շնորհվեց Արարատյան աշխարհը սահմանակից գավառներով, որը օր ավուր բար-

րի»: Նոր կարգերի հաստատումից առաջ, նշում է Խորեն Ա. կաթողիկոսը, աղքատության պատճառով և հանուն մի կտոր հացի, հազարավոր հայեր լքում էին հայրենիքը, իսկ այժմ «մեր երկիրը ոչ միայն բավարարում է մեր հայրենաբնակ ժողովրդի սննդի և կյանքի կարիքները, այլև հետզհետե իր ծոցում է ընդունում օտար սփերի վրա ցրված իր որդիներին»:

1933—1937 թվականներին, երբ ԱՄՆ-ում արեկոծվում էր մեր ազգային-եկեղեցական կյանքը, հակահայաստանյան և հակաէջմիածնական կուսակցական պայքարի հետևանքով, Խորեն Ա. կաթողիկոսը, առաջնորդված միշտ հայ եկեղեցու և հայ ժողովրդի բարձրագույն շահերի գիտակցությունից, դատապարտում էր այդ անդուր ան-

կարգությունները, և խաղաղության ու ազգային համերաշխության կոչեր էր ուղղում իր կոնդակներով և հորդորում, որպես «Հասարակաց Հայր, զգաստանալ, թողնել անօգուտ վեճերն ու երկպառակությունները, հենու մնալ մանախնդր անգուսպ գործողություններին, որոնք վնասաբեր են և անվախել մեր բարեկիրք ժողովրդի անվանը և ոչ օգտակար բնիկ հայրենիքի՝ Խորհրդային Հայաստանի կառավարությանը, կառավարություն, որը մեզ բաժին հասած իրական և թանկագին ժառանգությունն է, խաղաղ ապահովություն, և միաժամանակ հույսի խաբխա և կենդանության արմատ բովանդակ հայության համար»:

1941 թվականի հունիսին պայթում էր Երկրորդ համաշխարհային պատերազմը: Հայրենիքի ազատությանն ու գոյությանն իսկ պայտնացող օրհասական, ծանր այդ պահին, երբ ոտքի էր կանգնել սովետական բոլոր ժողովուրդների հետ նաև հայ ժողովուրդը ի պաշտպանություն հայրենիքի, Մայր Աթոռ ու Էջմիածինը չէր կարող անտարբեր մնալ այդ իրադարձությունների հանդեպ:

Այս անգամ էլ Մայր Աթոռը իր ազգրևտի տեղակալ Գևորգ արքեպ. Չորեքշաբթի գլխավորությամբ կատարում էր իր հայրենասիրական պարտքը հայրենիքի հանդեպ, իր նյութական ու բարոյական նպաստը բերելով պատերազմի հաղթական ելքի համար:

1941 թվականի հուլիսի 5-ին Ամենայն Հայոց ազգրևտի տեղակալը հայրենասիրական կոչեր էր ուղղում բոլոր թեմերին՝ հորդորելով համախմբվել հայրենի պետության շուրջը և պատվով ու արիությանը կատարել պարտքը հայրենիքի հանդեպ, նախնիների հերոսական և ազատասեր ոգով, օժանդակելով նաև մեծ և արդար գործի հաղթանակին:

1943 թվականի փետրվարի 2-ին, տեղակալ տ. Գևորգ արքեպիսկոպոսը «Սասունցի Դավիթ» անունը կրող տանկային շարասյան պատրաստման համար պաշտպանության ֆոնդին էր նվիրում 800 հազար ոտրլու արծողությամբ իրեր, միաժամանակ կոչ էր անում նաև սփյուռքահայությանը՝ իր աջակցությունը բերելու այդ գործին:

1944 թվականի հունվարին տեղակալ սրբազանը հայ ժողովրդին ուղղած իր կոչում գրում էր. «Հայր բացի Սովետական Հայաստանից չունի այլ հայրենիք: Հայր Հայաստանից դուրս չունի այլ հաստատուն կովան, բաց եթե հայ եկեղեցին և նրան զլխավորող Ամենայն Հայոց Հայրապետությունը, ու Էջմիածնի Հայրապետական Աթոռով: Աջակցել Խորհրդային Միության, նշա-

նակում է աջակցել հայրենիքին: Խորհրդային Միության հաղթանակը՝ հաղթանակն է նաև հայ ժողովրդին»:

Հայրենական պատերազմի հաղթական ռաբարտից հետո էլ մեր հայրենիքի խաղաղ, առողջագործական վերաշինության տարիներին ևս և մինչև իր մահը, 1954 թվականի մայիսի 9-ը, Գևորգ Զ կաթողիկոսը (1845-1954) շարունակում էր իր հայրենասիրական գործունեությունը:

1946 թվականի ապրիլ 1 թվակիր հայրապետական իր անդրանիկ կոնդակում Գևորգ Զ-ը իր հայրապետական պատգամը ուղղելով «իր սիրելի հայ ժողովրդին», գրում էր. «Անցան պատմական տատապայից օրերը, գալիս են ուրախության և մխիթարության օրեր: Մի՞թե մխիթարական չէ, որ դարերի հույսերը ապօր իրականացած են տեսնում, ունեն սեփական հայրենիք և հարազատ ազգային պետություն»:


1946 թվականի գարնանը սկսվում էր պատմական մեծ նշանակություն ունեցող հայրենադարձության շարժումը, երբ հայրենի կառավարությունը լայնորեն բացում էր իր դռները սփյուռքի տարագիր հայության առաջ:

Այս առթիվ Գևորգ Զ կաթողիկոսը գրում էր 1946 թվականի հունվարին իր շքաբերական-կոնդակը, շեշտելով հայրենադարձության պատմական նշանակությունն ու անհրաժեշտությունը մե՛ր հայրենիքի և մե՛ր ժողովրդի ապագայի համար. «Հոգեզմայլ է սփյուռքի պատմական հայրենադարձը, — գրում էր նա, — և ով բացահայտ թե գաղտնի դամեր է յարում հայ սփյուռքի հայրենադարձի դեմ, նա ակամա դուրս է մնում հայ ժողովրդի ազգային-հոգևոր միասնականությունից»:

1955 թվականի հոկտեմբերին Լուսավորչի Աթոռի վրա էր բարձրանում Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը, Որն Իր գահակարության առաջին իսկ օրից կարողանում էր Իրեն, Իր Աթոռին և վերաձեզված մայր հայրենիքին կապել ավելի սերտորեն և ամրապես ողջ հայության սիրտն ու հոգին:

Վազգեն Ա կաթողիկոսի գործունեության գաղափարական առանգըր հանդիսացել է ու Էջմիածնի հոգևոր, հայրենասիրական առաքելությանն ու մայր հայրենիքի վերաշինության և ազգային վերածննդյան ապրումը:

1955 թվականի դեկտեմբեր 1 թվակիր Իր անդրանիկ կոնդակում Հայոց նորրևտի Հայրապետը գրում էր. «Համբանքով փոքր, ուրց հոգեով մեծ հույ ժողովուրդը իո նահատեբությունից գիտցավ հաղթանակի վերածե, և ամմ իր նոռ կյանքը կներտն ան, իր նոր հայրենիքին մեշ, գմասանոի աղծա-




Երևան. Կարապի լիճը

նի խոյանքով դեպի ոսկի իր ապագան»:

Վազգեն Ա Հայոց ազգրևտի Հայրապետի գահակալության և գործունեության 15 տարիները եղան ճշմարտապես կենդանի քարոզ բոցավառ Էջմիածնասիրության և մարտի ու իրավ հայրենասիրության:

Իրավ է սիրելիք, Մայր Հայաստանը խաղաղ է այսօր, Մայր Հայաստանը կապրի կենսալի, կապրի կառուցելով, կկառուցե երգելով՝ ողորմությամբ Աստուծո հարցն մերոց և աղոթքներովը Հայաստանցայց առաքելական ս. եկեղեցով: Հայ ժողովուրդը ար-



Երևան. Գոյիտիկանիկական ինստիտուտի շէնքը

Ամեն տեղ ու բոլոր ստիժներով Վազգեն Ա կաթողիկոսը իր կոնդակների, իր քարոզների և պատգամների մեջ բաշխում էր իր ժողովրդին ս. Էջմիածնի լույսն ու կենարար օրինությունը և վերածնված հայոց աշխարհի վերածննդյան, վերանորոգ կենդանության ավետիար:

1957 թվականի ապրիլի 21-ին Երևանի ս. Սարգիս եկեղեցում խոսած իր քարոզում Հայոց Հայրապետը պատգամում էր. «Այստեղ, մայր հողի վրա, վերջապես, հայր կշիռն, կստեղծե իրեն համար: Կշիռն ներկայի ու իր ոսկի ապագային համար: Այստեղ ոչինչ կկորսվի, ոչինչ կպակսի: Ամեն ինչ կմեկտեղվի, ամեն ինչ կկուտակվի, ամեն ինչ կաճի: Եվ ինչ որ այստեղ կշիռվի, այդ կմնա մեզի՝ միայն:

«Ո՛չ երազ է այնս, և ո՛չ ալ պատրանք:

ցունքով սերմանեց և այսօր ցնծությամբ և փառքով կհնճե»:

1967 թվականի նոյեմբերին, Հոկտեմբերի 50-ամյակի առթիվ գրած «Հայրապետին խոսքը»-ում Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը, պատմական գուգախոս անցկացնելով 1915 թվականի ծանր ու ողբերգական և 1920 թվականի Նոյեմբերյան օրերի միջև, գրում էր. «Կես դար առաջ Հայաստան՝ ավերակներու վրա նստած ողբացող մայրն էր հայության:

Եվ այնպիսի պահու մը, երբ 1915-ի Եղեռնի հետեանքով, մեր ազգի ավելի քան կեսը բնաջնջված էր և Արեւմտահայաստանը ամբողջապես դատարկված հաչերե, և երբ հաջորդող ողբերգական այլ դեպքերու բերումով, 1920 թվականին Ալեքսանդրապոլի առեր կապտուար մնացած հայությունը ևս

բնաջնջել, երբ կթվեր ուրեմն, թե այս աշխարհի վրա այլևս կարելի պիտի չըլլա իբրև հայ ապրիլ, եկավ, հասավ այդ իսկ պահուն հրաշքի՝ համազոր փրկությունը մեր ազգին: Երկրորդ մեծ Եղեռնը նույնող ոճրապարտ ուժերը փշրվեցան Հոկտեմբերյան հեղափոխության ու Հայաստանին օգնության հասնող անոր բանակներուն ապառաժին առջև:

**Փրկվեցավ արևելահայությունը: Հիմը դրվեցավ Հայաստանի Խորհրդային Հանրապետությանը:**

Այդ պատմական օրվանից անցան 50 տարիներ: Հայաստանում վերջ գտան սովն ու արհավիրքը: Եկան խաղաղության, ապահովության, հայրենի վերաջինության և ազգային վերածննդյան հուսալի տարիներ: Արարատի նավածքի ներքո մեր ժողովուրդը վառեց իր գոյության ու հավերժության խարույկը:

Հորելյանական այս տարվա առաջին իսկ ամիսներին, 1970 թվականի ապրիլի 24-ին, Հայոց Հայրապետը գրեց Իր բովանդակալից կոմիակր և կոչ արեց հայ եկեղեցու նվիրապետական Աթոռներին, թեմակալ առաջնորդներին, հայրենասիրական կազմակերպություններին և մամուլին՝ բացառիկ հանդիսությամբ նշել մեր ազգային, հոգևոր վերածննդյան փառապանծ 50-ամյակը. «Կըթվեր թե փակված է գիրքը հայոց պատմության և վերջն է Հայաստան երկրի: Բայց, ո՛չ. Աստված չէր լքած քեզ: Նոր հույս, նոր հավատք և նոր ույժ տվավ քեզի և քաջ որդիներդ իրենց սուրբ արյունով կերտեցին,

բարձրացուցին հաղթության նոր կոթողը Մարդարապատի, Արարատին ընծա: Ու թեև պահ մը, Ալեքսանդրապոլի սև թուղթը սպառնաց խեղդամահ ընել քեզ և ոտքի կոխան հայրենիքդ սուրբ, ահա 1920-ի վերջին ամսու սեմին, ռուսաց եղբայր ազգության հուժկու բազուկը օգնության հասավ քեզի և խալառ չքացավ վտանգը մահացու: Պայծառացավ երկինքը աշխարհին Հայոց: Ծագեցավ արեգակը արդարության և խաղաղության ու շինարար հառաջընթացի:


Սկսար աճիլ ու ծաղկիլ, հացով ու լույսով առատ:

Մարդարապատի հերոսները և անոնք որ պատեցին Ալեքսանդրապոլի թուղթը անիրավ, վերջնապես հաստատեցին ամուր հիմքերը հայկական նոր պետությանը:

Մայր Աթոռ ս. Էջմիածնի վերջին 50 տարիների պատմությունը հայրենի կառավարության օրինական, իրավական և հարգալի պայմաններում, ճշմարիտ արտահայտությունն է մեր մեծ Հայրապետների եկեղեցաշեն և հայրենամակեր գործունեության, Հայրապետներ, որոնք ճիգ ու ջանք չեն խնայել իրենց ժամանակի և պայմանների պահանջների համաձայն ծառայելու հայ ժողովրդին, նրա հայրենիքին և մարդկության նվիրական իդեալների կենսագործմանը:

Մայր Աթոռ ս. Էջմիածինը եղել է մայր հայրենիքի հետ ու կլինի միշտ ու հավիտյան՝ առաջնորդված Հայաստանյայց առաքելական եկեղեցու և հայ ժողովրդի զերագույն շահերից:





**ՀՈՒՅՆՆԵՐԻ ԶԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ  
ԱԹՈՒՌՈՒՄ՝ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԻՄՆԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ**

Նոյեմբերի 29-ին լրացավ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 50-ամյակը:

Այս առթիվ գրված 1970 թվականի ապրիլի 24 թվակիր հայրապետական կոնդակի հրահանգի համաձայն Մայր Աթոռ ս. Էջմիածինը, որպես գլուխ և կենտրոն Հայաստանյազ ատաբեյական եկեղեցու, իր օրհնությունն ու սրտագին խնդակցությունն էլ բերում համաժողովրդական այս մեծ տոնի՝ հանդիսություններով, ս. պատարագի մատուցմամբ, հայրապետական կոնդակի ընթերցումով, քարոզով և գոհաբանական մաղթանքի կատարումով, ողջունելով ազգային վերածնունդը հայոց երկրի և ժողովրդի:

**ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ**

Նոյեմբերի 26-ին, հինգշաբթի օրը, ժամը 18-ին, Վեհարանի հանդիսությանը դահլիճում, Հայոց Հայրապետի բարձր նախագահության ներքո, կազմակերպվում է հոբելյանական հանդիսավոր նիստ՝ Սովետական Հայաստանի 50-ամյակի առիթով:

Հանդիսությանը ներկա էին, Մայր տան. սրի լուսարարապետ և Գերագույն հոգևոր խորհրդի առենապետ տ. Հայկազուն արքե-

պիսկոպոսի գլխավորությամբ, Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի, Վերատուգիչ հանձնաժողովի և Մայր Աթոռի մ. առևտրի մարտարապետական հանձնաժողովի անդամները, հոգևոր մեծարանի տեսչական և դասախոսական կազմը. ուսանողությունը, մայրավանքի պաշտոնությունը, բազմ մտավորականներ և արվեստագետներ՝ հրավիրված Երևանից:

Հոբելյանական միստին մասնակցում էին Հայաստանի և ներքին թեմերի թեմակալ առաջնորդները, թեմական և եկեղեցական խորհուրդների ներկայացուցիչներով, այլ թվում՝

Արարատյան թեմի առաջնորդական վոյսանորդ տ. Վահան եպս. Տեղյակը.

Ծիրակի թեմի առաջնորդ տ. Մաշտոց եպս. Թաշիրյանը.

Վրահայոց թեմի առաջնորդ տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանը.

Աղբրեջանի թեմի առաջնորդ տ. Հուսիկ եպս. Սանթրոյանը.

Ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ռուսիայի և Բուլղարիայի թեմերի առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիրոսյանը:

Հանդիսությանը ներկա էին նաև Սովե-

տական Հայաստանի 50-ամյակի առիթով մայր հայրենիք ժամանած սփյուռքահա: մտավորականության հայրենասիրական կազմակերպությունների և մասնույի ներկայացուցիչներ, այդ թվում՝

Լիբանանից՝ պրոֆ. Բարունակ Թովմասյանը՝ իր հարգելի տիկնոջ հետ, «Զարթոնք» թերթի խմբագրապետ Գերսամ Ահարունյանը, հասարակական ծանոթ գործիչ Հարություն Մադոյանը, Եփրեմ Էլլեգյանը, բանաստեղծ Գառնիկ Աղդարյանը, հասարակական գործիչ Հարություն Կուժունիկն, «Արարատ» թերթի խմբագրապետ Ժիրայր Նահիրին, Բենիամին Ժամկոչյանը և ուրիշներ:

Եգիպտոսից՝ հանրածանոթ մտավորական և ծաղրամկարիչ Ալեքսանդր Սարուխանը, «Արև» թերթի խմբագրապետ Ավետիս Յափուջյանը:

Սիրիայից՝ Արամ Մադոյանը, Տիրան Ալիևյանը և ուրիշներ:

Եթովպիայից՝ Հակաբեն Ուոունյանը:

ԱՄՆ-ից՝ Արամ Արաքսը, Լևոն Փափուգյանը, «Պայքար» թերթի խմբագրապետ ղոկտ. Նուբար Բերբերյանը:

Կանադայից՝ տեր և տիկին Հարություն Գավուբյանը, Էլդա Աքքիպրիոսյանը:

Արգենտինայից՝ Բյուզանդ Գեջեկոչյանը, Ազատ Խաչանը և ուրիշներ:

Հորեյլանական հանդիսությանը ներկա էին նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին տարևներ հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը և Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վ. Համազատյանը:

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 50-ամյակին նվիրված հանդիսությունը սկսվում է ՀՍՍՀ պետական հիմնի մվագով, որը երգեհոնի վրա կատարում է Լևոն Աբրահամյանը:

ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Հանդիսությունը բացելով, տ. Հակազուն արքեպ. Աբրահամյանը ասում է.

«1920 թվականի նոյեմբերի 29-ը մեր մայր հայրենիքի և ժողովրդի համար բերեց պայծառ արշալույսը ազգային վերածննդի և հանդիսացավ խաղաղության առաջին ու խոստումնալից օրը: Այնուհետև հիսուն տարիներ շարունակ մեր վերածնված հայրենիքն ու ժողովուրդը ապրեցին խաղաղ ու շինարար աշխատանքով, առանց թշնամիների ոտնձգության և սուպատակությունների: Թեև 1941—1945 թվականներին, Հայրենական պատերազմի տարիներին, վիրավորվեց նաև հայ ժողովրդի սիրտը, սակայն, շնորհիվ ռուս հզոր ժողովրդի օգնության և եղբայրական մյուս հանրապետությունների

համագործակցության և մեր «զինվորյալ մանկանց» անսակարկ արյունին ու զոհողության, կրկին անգամ փրկվեցին Հայաստանի աշխարհն ու ժողովուրդը:

Այս երջանիկ օրվա ուրախությունը լիովին բաժանում է նաև Հայաստանյայց առաքելական եկեղեցին, Մայր Աթոռ ս. Էջմիածնի օրհնությամբ, իր հայրենապետ Հայրապետի գլխավորությամբ:

Կանգնած այս լուսավոր և երջանիկ հանգրվանի սուաջ, մեր բոլորի սրտագին մաղթանքն է, որ բազում նման հոբելյաններ շատ անգամներ տեսնի և նշի մեր ժողովուրդը: Թող մեր հայրենի կառավարությունը առավել ևս հզորանա, շենսնա ու փառավորվի հայրենակներ ճոր նվաճումներով, որպեսզի իրեն ժառանգ թողնված հայրենի այս սրբազան հողը էլ ավելի պտղաբերի և ծաղկի ու նրա վրա ապրող մեր վերածնած ժողովուրդը առավել ևս բազմանա ու արիանա: Թող հայոց լեռների բարձունքներից միշտ ջերմ ու կենսատու արևի պայծառ շողերը սփռվին Հայաստան աշխարհի վրա, որպեսզի մի օր էլ, սփյուռքի մեր հայրենակարոտ եղբայրներն ու քույրերը մեկտեղվին այս լույսի ու հույսի հայրենիքի մեջ, որպեսզի այսուհետև չտեսնին վիշտ ու դառնություն, և իսպառ մոռանան գաղթականի սրտամաշուք տառապանքները»:

ԶԵԿՈՒՑՈՒՄ

Օրվա հանդիսության գլխավոր գեկուցողն էր Գերագույն հոգևոր խորհրդի անդամ Հովհաննես Թոփուզյանը: Հարգելի բանախոսը իր ելույթի սկզբում ասում է.

«Հայ եկեղեցին արդար հպարտության զգացումով է տոնում Հայաստանում սովետական կարգերի հաստատման 50-ամյակը: Արդարև, խարսխված լինելով հանդերձ քրիստոնեության համամարդկային գաղափարների վրա, հայ եկեղեցին կատարել է, այսօր էլ կատարում է նաև գերազանցապես ազգային առաքելության, նրա հազարամյա կամարների ներքո թևածում է կրքոտ, բայց իրապաշտ հայրենասիրությունը, որը և հանդիսանում է մեր եկեղեցականության ներշնչանքի ու կենսունակության աղբյուրը:

Անցյալում հայ եկեղեցին հայկական պետության հզոր հենարանն էր, իսկ հայ պետականության կործանումից հետո նրա լավագույն ներկայացուցիչները աչքի են ընկել, երբեմն էլ առաջնորդող դեր են կատարել հայ ժողովրդի հանուն ազատության, անկախության և ազգային պետականության վերականգնման պայքարում: Փառապանծ 50-ամյակի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ

Հայրասպետի գրած կոնդակում ասված է. «Հայ եկեղեցին և իր սպասավորները երջանիկ են ողջունելու վերածնունդը հայրենի պետության, որ հաղթանակն է հայ ազատագրական սրբազան պայքարին, պայքար, որուն լայն չափերով մասնակցած են բազում անձնուրաց ու քաջ հոգևորականներ, հիշատակության արժանի հերոսությամբ»:

Վերջին հիսնամյակի ընթացքում հայ եկեղեցին, հավատարիմ անցյալի ավանդույթներից, ձգտելով հայ ժողովրդի բարօրությանը և հայրենի պետության հիմքերի ամրապնդմանը, անցել է հայրենասիրական փառավոր ուղի»:

Այնուհետև բանախոսը պատմական փաստերով և հանգամանորեն ներկայացնում է մեր երկրի և ժողովրդի տխուր ու ճակատագրական վիճակը 1917—1920 թվականներին Անդրկովկասում ծավալված բարդ և հակասական իրադարձությունների շրջանակում և վեր է հանում Սարդարապատի հերոսամարտի պատմական նշանակությունը, մեր ժողովրդի մղած կենաց և մահու օրհասական պայքարում, արդարորեն նշելով նաև, որ թեև «Սարդարապատի ճակատամարտը իսկական ժողովրդական ազատագրական պատերազմ էր, սակայն հայ ժողովրդին վիճակված չէր Սարդարապատի հաղթանակով հասնել Հայաստանի անկախությանը և ամբողջականության վերականգնմանը: Հայ ժողովրդի Նոյեմբերյան այգաբացը,—նշում է բանախոսը,—ձևվեց Հոկտեմբերից»:

Մայր Աթոռ ս. Էջմիածինը, ճիշտ գնահատելով Հայաստանում սովետական կարգերի հաստատման բացառիկ նշանակությունը՝ հայ ժողովրդի պատմական ճակատագրի, նրա գոյության և ապագայի համար, հնարավոր բոլոր միջոցներով պաշտպանեց նորաստեղծ սովետական հանրապետությանը, նպաստեց նրա սուսջ ծառայող համազգային խնդիրների լուծմանը:

1920-ական թվականներին Սովետական Հայաստանի կառավարության ամենահրատապ խնդիրն էր՝ հաղթահարել անցյալից ժառանգված տնտեսական ու մշակութային ծայրահեղ հետամնացությունը և բուժել այն վերքերը, որ հայ ժողովուրդը ստացել էր հայ-թուրքական կրկնվող պատերազմներից: Դեռևս 1924 թ. պատմաբան Լեոն իր նամակներից մեկում գրում էր. «Ամեն ինչ կորցրել ենք, մնացել է մի փոքրիկ Հայաստան, որ այսօր գերագույն ճիգեր է թափում ազատագրվելու քաղցի, մերկության, համաճարակների, կոտորածների մի շարք տարիների զարհուրելի հետևանքներից»: Նա ասում է, որ հայ ժողովուրդը դժոխսային կացությունից դուրս էր եկել մերկ ու րնչազուրկ, ա-


ռանց խրճիթի, ստանց մանի, ստանց լրձկանի:

Տարաբախտ հայ ժողովրդին ստաչին հերթին եղբայրական օգնության ձեռք մեկնեց կանի:

Հայաստանի ժողովրդի վերքերը բուժելու գործում զգալի դեր կատարեց նաև սփյուռքահայության օգնությունը՝ Մայր Աթոռի և նրա արտասահմանյան թեմերի միջոցով: 1927 թ. Ամենայն Հայոց Գևորգ Ե կաթողիկոսը, նշելով, որ Էջմիածինը միշտ եղել է և է օրինապահ ու բարչացական Սովետական Հայաստանի և նրա կառավարության նկատմամբ, գրում էր. «Սորհրդային Հայաստանի վերաշինության և հայ ժողովրդի մտավոր ու տնտեսական բարգավաճման գաղափարն ու ջերմ ցանկությունն է եղել միակ դրդապատճառը, որ ինքնաբերաբար մի շարք կոնդակներով միշտ հորդորել են հատկապես արտասահմանյան մեր հոգևոր բարձր ներկայացուցիչներին՝ պատրիարքների, թեմակալ սուսջնորդների ու եկեղեցական-վարչական կազմակերպությունների միջոցով ի սփյուռս աշխարհի ցրված գաղութահայության նյութական լայն օժանդակությունը հասցնել Խորհրդային Հայաստանի կառավարության, Հայաստանը վերաշինելու համար: Եվ այս ուղղությամբ է գործել Էջմիածինը Հայաստանի խորհրդայնացման ստաչին իսկ տարուց սկսած...»:

1921 հոկտեմբերի 31 թվակիր կոնդակով, Գևորգ Ե կաթողիկոսը ի սփյուռս աշխարհի ցրված հայերին կոչ էր անում չհետևել պառակտողական, կենտրոնախուս ուժերին, համախմբվել հայրենի պետության շուրջ: Նա բոլոր հայերին հորդորում էր «ի սեր ազգի և հայրենեաց սրբափյլ և ի բաց վանել յետ այսու գէջ գլիրս և զպաքարս կուսակցականս, զհետ և եթ լինելով միացն և միացն վերաշինութեան ավերեալ հայրենեաց և վերածնութեան անբախտ մնացորդացն մերոց, միաբան ոգով և համերաշխութեամբ»: Այնուհետև Վեհափառ Հայրասպետը հանձնարարում էր օգնության ձեռք մեկնել մեր տարաբախտ ժողովրդի մնացորդներին, որոն տակավին տառապում էր «ոչ ի սրոյ, այլ ի սովո, ոչ ի հրոյ, այլ ի ցրտոյ, ոչ ստողջ վիճակի, այլ ի հիվանդ...»:

Գևորգ Ե կաթողիկոսը Հոկտեմբերյան հեղափոխության տասնամյակի առթիվ գրած կոնդակում հայտնում էր, որ խորհրդային իրավակարգի պարզևած խաղաղության և ազգերի իրավահավասարության շնորհիվ մեր կիսամեռ, հյուծված ժողովուրդը ավերակների միջից ելավ նոր կյանքի և ի շինություն հայրենյաց: Այնուհետև էլ Մայր Աթոռ ս. Էջմիածինը հավատարմությամբ ու սրբությամբ կատարեց իր հայրենասիրական



Երևան. Բազմամասնակի բնակելի շենք

պարտքը հայրենիքի և հայրենի պետության նկատմամբ: 1933 հունիսի 1 թվակիր հայրապետական կոնգրակով, Խորեն Ա կաթողիկոսը կոչ էր անում նվիրապետական Աթոռներին, թեմակալ առաջնորդներին և բովանդակ հայությանը՝ հեռու մնալ ազգաբանդ պայքարից և «վտարել ի միջոյ հավատացելոց զամենայն ինչ, որ հակառակ կա խաղաղութեան և մի թողուլ զթշնամական արարս ընդդէմ մայր հայրենեաց մերոց՝ Խորհրդային Հայաստանի և կառավարութեան նորին»:

Հայրենական պատերազմի տարիներին, հայրենիքի ազատությանն ու անկախությանը ապստեղացող այդ օրհասական պահին, երբ սովետական բոլոր ժողովուրդների հետ միասին ոտքի էր կանգնել նաև հայ ժողովուրդը, հայ եկեղեցին հանդես բերեց հայրենասիրական բուն գործունեություն՝ նրա պատերազմի համար պատերազմի հաղթական էլքին:

1941 թվականի հուլիսի 5-ին, պատերազմը սկսվելուց ընդամենը երկու շաբաթ հետո, Ամենայն Հայոց կաթողիկոսության տեղակալ Գևորգ արքեպիսկոպոսը կոչեր ուղղեց մայր հայրենիքի և սփյուռքի բովանդակ հայությանը՝ հորդորելով հերոսական պայքարի ոգով համախմբվել հայրենի պետության՝ Սովետական Հայաստանի շուրջ և պատվով կատարել հայրենասիրական-քաղաքացիական պարտականությունները, օժանդակել հայրենիքի արդար գործի հաղթանակին, խորապես համոզված, որ այդ հաղթանակից կախված է հայ ժողովրդի ազատությունն ու անկախությունը, նրա ներկան ու ապագան: Այդ և հետագա կոչերը հայրենասիրության հզոր ալիք բարձրացրին սփյուռքահայ գաղթօջախներում:

Հայրենասիրական պարտքի խոր գիտակցությամբ, Մայր Աթոռը հովանավորեց Կարմիր բանակի օգնության ֆոնդի ստեղծման համար 1943 թ. սփյուռքում ծավալված շարժումը: Ա. Էջմիածինը, նախ, ավելի քան 800 հազար ոտքի՝ արժողությամբ առարկաներ նվիրաբերեց «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան ստեղծման օգտին, ապա, կոչ արեց ի սփյուռս աշխարհի ցրված հայությանը առատաձեռն կերպով մասնակցել այդ նպատակով կատարվող հանգանակությանը: «Իմ սիրելի ժողովուրդ, — սաված է այդ կոչում, — դո՛ւ, որ պատերազմի սկզբից նվիրված ես հայրենիքիդ պաշտպանության և ցանկացել ես տեսնել Հայրենական պատերազմի վախճանը, դո՛ւ, որ միշտ հետևել ես ս. Էջմիածնին, դու այսօր էլ անշուշտ առատորեն կբերես քո խնայողությունները, մասնակցելով «Սասունցի Դավիթ» անվան տանկային շարասյան կա-

ռուցմանը»: Ա. Էջմիածնի կոչը լայն արձագանք գտավ սփյուռքի հայրենասեր հայության մեջ, և շուտով շարք մտավ հայկական մեծ Էպոսի հերոսի անունով կոչվող տանկային երկրորդ շարասյունը:

Հայ եկեղեցու, նրա լավագույն սպասավորների աննկուն և իրապաշտ հայրենասիրության վառ օրինակ է 1944 թվականի հունվարին Մայր Աթոռի անունից հայ ժողովրդին ուղղված պատմական կոչը. «...Հայք բացի Խորհրդային Հայաստանից չունի այլ հայրենիք: Հայք Հայաստանից դուրս չունի այլ հաստատուն կովան... Աջակցել Խորհրդային Միության նշանակում է աջակցել հայրենիքին: Խորհրդային Միության հաղթանակը հաղթանակն է նաև մեր ժողովրդի»:

Հայ եկեղեցին իմաստության նույն լույսով առաջնորդվեց նաև հայրենական պատերազմի հաղթական ախարտից հետո, մասնակցելով հայ ժողովրդի և նրա պետության բարգավաճման հետ կապված նոր խնդիրների լուծմանը:

Հայ եկեղեցու հայրենասիրական գործունեությունը նոր որակի բարձրացավ և առավել լայն չափեր ընդունեց Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա. կաթողիկոսի զահակալության տարիներին: Ելնելով հայ ժողովրդի ընդհանրական շահերից, Վեհափառ Հայրապետը ձգտում է հասնել հայ ժողովրդի միասնությանը, նրա ջատագոված գաղափարն է «մեկ հայրենիք, մեկ ժողովուրդ, մեկ եկեղեցի»՝ մայր հայրենիքի վեհ զգացմունքի խարսխի վրա, Մայր Աթոռ ս. Էջմիածնի կենարար լույսի ներքո: Դա է հայության հայրենասիրական ուղին: Այդ ուղիով միայն կարելի է օգնության հասնել բախտի դաժան հարվածով աշխարհի չորս ծագերին ցրված հայությանը՝ սպիտակ ջարդի դեմ:

Սփյուռքահայ հոգևոր և աշխարհիկ հաստատությունների հայապահպանման ձգտող միջոցառումները կլինեն ստավել ազդու և արդյունավետ, եթե դրանք տոգորված լինեն վերածնված մայր հայրենիքի սիրով և Մայր Աթոռ ս. Էջմիածնի պաշտամունքով: Իր հայրապետական անդրաճիկ կոնկրետում Վեհափառը պատգամում էր. «Մեր հասակնետող նոր սերունդները մանավանդ թող արթուն հսկեն և հաստատական մնան հայոց սուրբ հավատքի վեհին վրա, և հպարտությամբ ու ճակատաբաց ապրին ու գործեն որպես հարագատ գավակները համրանքով փոքր, բայց հոգիով մեծ հայ ժողովուրդին, որ իր նախատակությունը գիտցավ հաղթանակի վերածել, և այժմ իր նոր կյանքը կկերտե ան, իր նոր հայրենիքին մեջ, գմայլանքի արժանի խոյանքով դեպի ոսկի

իր ապագան: Հայրենի վերածնունդի և վերաշինության գիտակցությունը խարխիս գգացող մը պետք է դառնա մեր օրերու համարդուն և ի մասնավորի հայ երիտասարդության»:

Մենք կենսականորեն անհրաժեշտ և անհետագձեղի կնկատենք մեր եկեղեցական ներքին միասնության և մեր նվիրապետական Աթոռներու միջև համերաշխ գործակցության վերահաստատումը»:



Լենինական. Տեսարան գլխավոր հրապարակից

Հայապահպանման տեսանկյունից պետք է դիտել և գնահատել նաև այն ջանքերը, որ Վեհափառ Հայրապետը իր գահակալության առաջին օրից գործադրում է ամրապնդելու համար հայ եկեղեցու ներքին միասնությունը: «Սփյուռքի մեջ, մեր տարաբախտ գավակներուն հաշկական հոգիին և գիտակցության պահպանումը մեր առաջ դրված սեպուհ խնդիրն է...,—գրում էր Վեհափառ Հայրապետը Տանն Կիլիկիո աթոռակալին ուղղված իր նամակներից մեկում...:—Եվ այս նվիրական գործը առավել ամուր հիմերու վրա դնելու, և բոլոր կենդանի ուժերը համատեղ օգտագործելու մտադրությամբ է որ

Հայ ժողովրդի և հայ պետականության ընդհանրական շահերից բխում է նաև Մայր Աթոռի դրական վերաբերմունքը մարդկությանը հուզող այնպիսի այժմեական խնդիրների նկատմամբ, ինչպիսին է մանավանդ աշխարհի խաղաղության պաշտպանությունը: Մայր Աթոռը, հանդես գալով այդ կենսական հարցի լուծման օգտին, առաջին հերթին ծառայում է հայ ժողովրդի հայրենասիրական իդեալների կենսագործմանը: Աշխարհում հավանաբար չկա մի այլ ժողովուրդ, որը հայ ժողովրդի չափ տառապած լինի պատերազմներից:

Մայր Աթոռը, անդամակցելով Եկեղեցի-

ների համաշխարհային խորհրդին, ձգտում է բարձրացնել հայ եկեղեցու դերը մարդկությանը հուզող արդիական խնդիրների լուծման գործում: Անվերադարձ անցել-գնացել են եկեղեցիների սեկուլացման հին ժամանակները, սպրում ենք էկումենիզմի ժամանակաշրջանում: Եկեղեցիները մերձեցնում են միմյանց, ուղիներ են որոնում համագործակցության, դիպլոմատի մեջ են մտնում աշխարհի հետ: Սայր Աթոռը արդի էկումենիկ շարժումը դիտում է որպես քրիստոնեական առաջադիմական շարժում:

Գերագույն հոգևոր խորհուրդը ուրախությամբ հաստատում է, որ Վեհափառ Հայրապետը հանդիսանում է արդի էկումենիկ շարժման ակնաւոր ներկայացուցիչներից: Եվրոպական մայրաքաղաքներում նրա արտասանած ճառերը, եկեղեցական և պետական բարձրագույն իշխանավորների հետ նրա հանդիպումներն ու շփումները խոշոր չափով նպաստում են եկեղեցիների համագործակցությանը, նրանց միջև եղբայրական և սիրո կապերի ամրապնդմանը: Այդ ստույծով առանձնապես նշանակալից է Վեհափառ Հայրապետի պատմական այցը Վատիկան և երկու հայրապետների համատեղ հայտարարությունը, որով նրանք ձայն բարձրացրին արդիականության ամենակարեւոր հարցերի՝ սոցիալական արդարության, ժողովուրդների եղբայրության և կայուն խաղաղության պաշտպանության օգտին:

Վազգեն Ա կաթողիկոսի գահակալության տարիներին Մայր Աթոռ ու Էջմիածինը դարձավ հայ եկեղեցու իսկական ղեկավար միտքը, նրա իրապաշտ հայրենասիրությամբ բաբախող սիրտը՝ լիովին համապատասխան «Ամենայն Հայոց» կոչմանը: Միայն դարավոր ավանդության կապով չէ, որ այսօր հայ ժողովուրդը աշխարհի չորս ծագերից ջերմեռանդորեն դեմքը դարձրել է դեպի Մայր Աթոռ ու Էջմիածին: Դրանում, մենք հավատում ենք, որոշիչ դեր է կատարում Վեհափառ Հայրապետի իմաստությունը՝ հայ եկեղեցու հայրենասիրական լավագույն ավանդությունները զարգացնելու գործում: Ազգային և միջազգային ասպարեզներում Վեհափառ Հայրապետի ծավալած հայրենասիրական բեղուն գործունեությունը նրան իրավունք է տալիս դասվելու մեր մեծագործ կաթողիկոսների շարքում»:

Հայաստանի 50-ամյակին նվիրված իր գեկուցագրում Հովհաննես Թոփուզյանը ներկայացնում է նաև 50 տարիների ընթացքում մեր երկրում ստեղծված նոր կարգերի պայմաններում հայ ժողովրդի ձեռք բերած հոգևոր, մշակութային, տնտեսական մեծ առաջընթացն ու հաջողությունները և իր բու-

վանդակալից գեկուցն ավարտում է հետևյալ հաստատումով.

«Գերագույն հոգևոր խորհուրդը, ողջունելով Հայաստանում սովետական կարգերի հաստատման 50-ամյակը, երախտապարտ հայացք է ուղղում այն մեծ ու լուսավոր գաղափարին, որ կոչվում է ժողովուրդների բարեկամություն: Հայրենի վերածնունդը հս ժողովրդի ստեղծագործ հանճարի, նրա քրտնաջան աշխատանքի ու հիանալի տոկունության արդյունքն է, սակայն պետք չէ մոռանալ, որ դրանում մենք շատ ենք պարտական այն եղբայրական դաշինքին, որը միավորում է սովետական ժողովուրդներին»:

**ՈՂՋՈՒՑՆԻ ԽՈՍՔԵՐ**

Սյունահեսև, ողջուցնի խոսքով սուսցիճճ հանդե է գալիս ՀՍՍՀ Մինիստրների սովետին ստընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ **Ս. Գասպարյանը**, որը, հանուն հայրենի կառավարության և Մինիստրների սովետին ստընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի, ջերմորեն շնորհավորում է համազգային մեծ տոնի ուրախ ստիթով Ամենայն Հայոց Հայրապետին և շեղտում՝ անցնող 50 տարիների ընթացքում ընդհանրապես և վերջին 15-ամյակում մանավանդ **Ս. Ս. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի** և **Մայր Աթոռի կատարած հայրենամայեր, խաղաղասիրական մեծ ու շնորհակալ աշխատանքը՝** ի բարօրություն մեր վերածնված հայրենիքի ու հայ ժողովրդի և համրապնդումն սիշուոք-հայրենիք հարաբերություններին:

Հանդիսության ընթացքում Հայաստանի պանճայի 50-ամյակի ազգային մեծ նշանակությանը նվիրված խանդավառ ողջուցնի խոսքերով հանդես են գալիս **Ալեքսանդր Սարուխանը** (Վահրբե), **Հարություն Կուճուրենի** (Բեյրութ), **Եփրեմ Էլեգյանը** (Բեյրութ), **դոկտ. Նուբար Բերբերյանը** (Բուտոն):


**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ**

Ընդհանուր խանդավառության և ծախերի մեջ խոսք է սուճում **Հայոց Հայրապետը՝** Իր օրհնությունն ու խնդակցությունը բերելու հայ ժողովրդի մեծ ու պատմական տոնին.

«Հայոց կաթողիկոսը այս տարի, 24 ապրիլին, ստորագրեց և հրապարակեց հայրապետական կոճակ՝ նվիրված Հայաստանի 50-ամյակին: Այդ կոճակում Հայոց Հայրապետը Իր խոսքը սուսց այս պատմական և հիշարժան տարեթիվի առթիվ: Հառաջիկա կիրակի, հոյնմբերի 29-ին, Մայր տաճարում ստեղի պիտի ունենա հանդիսավոր պատա-

րագ և վերջում՝ գոհաբանական մաղթանքի արարողություն՝ նվիրված նույն պատմական թվականին, իսկ այսօր այս հանդիսությունը կազմակերպեցինք, որտեղ Մենք հաճույքը ունեցանք լսելու բազմաթիվ ելույթներ, որոնք մեր սրտերը լցրեցին ոգևորությամբ և խանդավառությամբ: Կարող են ոմանք հարց տալ, թե ինչո՞ւ Հայոց Հայրապետը, Մայր

բաժանված չի եղել իր ժողովուրդից, իր ժողովուրդի պատմությունից, նրա ճակատագրից, թե՛ ուրախության, թե՛ փառքի, վերելքի, ստեղծագործության շրջաններին և թե՛ դժբախտությանց, ողբերգական մահատալանությանց օրերին: Նույնիսկ մեր ս. Մեսրոպը, չմոռնանք, հոգևորական լինելուց առաջ զինվորական էր, իր հայրենիքի զինվորը,



Սևան. «Աղթամար» հյուրանոցը

Աթոռ ս. Էջմիածին այսբան ամբողջական կերպով մասնակցում են այս տոնակատարության, որ քաղաքական տոնակատարություն մըն է: Կասկած չկա, թե Հայաստանի, նոր Հայաստանի 50-ամյակը պատմական տարեթիվ մըն է: Մեր պատասխանը պետք է լիներ, որ այո, Հայաստանչայց եկեղեցին, գլխավորությամբ Մայր Աթոռ ս. Էջմիածնի և Հայոց Հայրապետի, մասնակցում է այս տոնակատարության: Մենք մասնակցում ենք իբրև հայ հոգևորականներ այս մեծ տոնախմբության, որովհետև զիտակցում ենք ամենայն պայծառությամբ, թե մեր ժողովուրդը նույնքեր 29-ը 1920-ին իսկապես փրկության ճանապարհի սեմին կանգնեց, և սկսավ հայոց սլատմության նորագույն շրջանը: Շատերը արդեն ասացին, բայց Մենք էլ ուզում ենք ընդգծել, թե Հայաստանչայց եկեղեցին իր անունով և իր ծագումով երբեք որևէ ձևով

իսկ հետո՝ արքունիքի քարտուղարը: Եվ տակավին այս շարքը կարելի է երկարացնել մինչև մեր օրերի մոտերը ապրող հոգևորականները, որոնք հայ ժողովուրդի վերածննդի տեսիլքով բոցավառված առաջնորդի դեր կատարեցին՝ ինչպես Ներսես Աշտարակեցին, ինչպես Խրիմյան Հայրիկ, Գարեգին Հովսեփյանց և ուրիշներ: Եվ շատեր ողբերգական պահերին առաջին շարքերի վրա զոհվեցին: Մեկ օրինակ միայն. 1915-ի զարմանը երբ տակավին ստեղծահանության հրամանները հրապարակված չէին, այլ կրպահվեին զգրոցների մեջ զանազան կենտրոններում, Արևմտահայաստանում, որպեսզի նույն թվականին գործադրության դրվի հայ ժողովուրդի ստեղծահանությունը և կոտորածը, այդ շրջանին էր, երբ Մշո առաջնորդ Ներսես եպիսկոպոս Խարախանյան կախադանի դատապարտվածների ցանկի վրա ա-

նաջին տեղը կգրավեր: Պատահեց սակայն, որ Ներսես եպիսկոպոս, այդ հրահանգը գործադրվելուց մի քանի շաբաթ առաջ բնական մահով մեռնի և թաղվի: Սակայն էրբ հրահանգները սկսան գործադրվել, տեղի փաշան հրահանգ տվեց, գերեզմանից հանել Ներսես եպիսկոպոսին մարմինը և կախաղան բարձրացնել այն: Այս զարհուրելի եղելությամբ Մենք ուզում ենք հիշել հայ եկեղեցականության հերոսական կեցվածքը, պայքարը՝ հայ ժողովուրդի ազատագրության ճանապարհի վրա: Արդեն 50 տարի է ավելին անցել են այդ օրերից և մենք գուցե համարյա մոռցած այս տխուր պատմությունները, մեր դեմքը ուղղած դեպի հայ ժողովուրդի անմահության խորհրդանիշ Արարատը, մեր դեմքը ուղղած դեպի աստվածակառույց ս. Էջմիածին, մեր դեմքը հառած դեպի Երևանի լույսերը՝ երջանկությամբ կրխալատանք և հպարտ ենք, որ ահա 50 տարիներն ի վեր Հայաստանը իսկապես ոչ միայն վերածնվեց, այլ նաև վերաշինվեց: 1920—1922 թվականներին Հայաստանի քայքայված և հուսահատական վիճակում, էրբ Երևանի փողոցներում տուն-տեղ չունեցող հազարավոր որբեր կթափառեին, վրտահ եմ, թե շատ ճառախոսներ ոգևորելու համար ժողովուրդին, ասած պետք է լինեն. «Երանի նրանց, ովքեր 50-րդ տարեդարձը պիտի ողջունեն վերածնված Հայաստանի»: Մենք այսօր այդ երջանիկ սերունդն ենք, որ մեր կենդանի աչքերով տեսնում և շոշափում ենք իրականությունը, իրականացած երազը այդ 50-ամյակի: Սակայն Մենք կուզեինք ավելացնել այսօր, այս 50-ամյակին շեմին՝ «Երանի նրանց, ովքեր պիտի ողջունեն 100-ամյակը մեր վերածնված ամենայն հայոց Մայր Հայաստանին»:

Լույս և փառք և օրհնություն մեր մայր հայրենիքին, մեր հայրենի կառավարության և համայն մեր ժողովուրդին ի Հայաստան և ի սփյուռու աշխարհի: Ամեն»:

**ԳԵՂԱՐՎԵՍԱՍԿԱՆ ԲԱԺԻՆ**

Տաղը յուր պե ընդմիջումից հետո սկսվում է հորեկյանական հանդիսության գեղարվեստական մասը:

Մայր տաճարի երգեհոնահար **Լևոն Աբրահամյանը** երգեհոնի վրա բարձր արվեստով կատարում է Բախի ռե մինոր տոկատա և ֆուգան:

Մայր տաճարի երգչախմբի մենակատար Նորա Մելքումյանը խորը ապրումով կատարում է Վերդիի «Տրուբադուր» օպերայից արիա և ապա Բաղդասար Դպիրի «Ի նրնչմանեդ արքայական» տաղը: Դաշնամուրի վրա ընկերակցում է Հասմիկ Տեր-Սիմոնյանը:

Արգենտինահայ բանաստեղծուհի Ալիսիա Կիրակոսյանի «Նամակ առ Հայաստան» քերթվածը խորը հուզականության արտասանում է Սայր Աթոռիս միաբան տ. Գրիգորիս արեղա Բունիարյանը:

Այս երույթ է ունենում Հայֆիլհարմոնիայի պետակազմի կազմակերպչին Գևորգյանը, որը վաստակավոր արտիստ Զարեն Սահակյանի գեղարվեստական ղեկավարությամբ կատարում է Կոմիտաս վարդապետի «Չորսինյաց տաղ» «Ով զարմանալի», ժողովրդական երգ՝ «Հոյ, Նազան ին», Վիվալդիի կոնցերտ ջութակի և թավջութակի համար (Ա, Բ և Գ մասերը):

Այնուհետև երույթ է ունենում Հայկական ՍՍՀ վաստակավոր արտիստուհի և Մայր տաճարի երգչախմբի մենակատար **Լուսինե Զաքարյանը**: Սիրված երգչուհին կատարողական բարձր արվեստով հմայում է ներկայներին. Գլինկա՝ Անտոնիտայի ոտմանը «Իվան Սուսանին» օպերայից, Նարեկացի-Կոմիտաս՝ տաղ Հարության՝ «Սայլն այն իջաներ», Ալան Հովհաննես՝ «Յար Նազանի» և ապա Դոնիսետի տաղը՝ «Բայց մեզ, Տէր»: Երգեհոնի վրա ընկերակցում է Լևոն Աբրահամյանը:

Վերջում հանդես է գալիս **Մայր տաճարի քառաձայն երգչախումբը**, գեղարվեստական ղեկավար՝ **Խորեն Մելխանեջյան**: Երգչախումբը խանդավառորեն և գերազանց վարպետությամբ կատարում է Մոցարտի հատված տղ մածոր պատարագից՝ «Գլորիա», Դիմիտրի Բորտնիանսկի՝ «Քերովբեներ», Ալեքսանդր Հարությունյանի՝ «Հայրենիքիս հետ» (խոսք՝ Հովհ. Թումանյանի, մենակատարներ՝ Լուսինե Զաքարյան և Կոնստանտին Սիմոնյան), Էդգար Հովհաննիսյանի՝ «Հրեթունի-Երևան» (խոսք՝ Պարույր Սևակի):

Երեկոյան ժամը 22.30-ին, խանդավառ ու հայրենասիրական տաք մթնոլորտում, ջերմ ծափերով ավարտվում է Վեհարանի հանդիսությանց մեծ դահլիճում Հայաստանի 50-ամյակի պատվին կազմակերպված հորեկյանական հանդիսությունը:

**ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ, ԶԱՐՈՋ ԵՎ ԳՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՂԹԱՆԲ**

**Մոյեմբերի 29-ին, կիրակի:** Մայր տաճարում, Հայաստանի 50-ամյակի առիթով, հանդիսավոր ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդ տ. **Տիրացր եպս. Մարտիկյանը**:

Աշնանային պայծառ ու արևոտ օր է: Մայր տաճարը և նրա շրջափակը լցվել են



Երևան. Կամուրջ Հրազդան գետի վրա

հավաստացյալ բազմությամբ: Աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղ են գրավել տոնի առիթով Մայր Աթոռ ժամանած թեմական առաջնորդներ, թեմական ու եկեղեցական խորհուրդների անդամներ, Գերագույն հոգևոր խորհրդի, Վերստուգիչ հանձնաժողովի, «Էջմիածին» ամսագրի խմբագրական կազմի անդամներ, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, վանքի պաշտոնեությունը և այլ հրավիրյալներ:

Մայր տաճարի երգչախումբը կատարում է Եկմայանի պատարագի երգեցողությունը՝ խորեն Մելիսանեջյանի շնորհալի դեկավորությամբ:

«Հայր մեր»-ից առաջ տ. Գևորգ վրդ. Սեբաղարյանը Ավագ սեղանի բեմից հանդիսավորապես և տպավորիչ կերպով ընթերցում է Վեհափառ Հայրապետի 1970 թվականի ապրիլ 24 թվակիր սրբատառ կոնդա-

կը՝ գրված Հայաստանի 50-ամյակի առիթով:

Հավարտ ս. պատարագի, Իջման ս. սեղանի առաջ, պատարագիչ տ. Տիրայր սրբազանը քարոզում է «Հայաստան, երկիր դրախտավայր» բնաբանով և վեր հանում Հայաստանի 50-ամյակի պատմական, հայրենասիրական մեծ նշանակությունը:

Այնուհետև Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպիսկոպոսի հանդիսադրությամբ կատարվում է գոհաբանական մատթանք՝ Հայաստանի 50-ամյակի առիթով:



**Ազգիս Վեհափառ Հայրապետը** հոբելյանական այս օրերին Երևանում մասնակցում է Հայաստանի 50-ամյակին նվիրված պաշտոնական հանդիսություններին:

Նոյեմբերի 24-ին, երեքշաբթի օրը, Երեվանում, Արվեստի աշխատողների տանը, տեղի է ունենում Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի հոբելյանական նիստը՝ ի պատիվ Հայաստանի 50-ամյակի:

Հանդիսությանը ներկա էին մայրաքաղաքի հասարակայնության ներկայացուցիչներ՝ արվեստագետներ, գրողներ, գիտնականներ, հոբելյանի առիթով զանազան երկրներից ժամանած սփյուռքահայեր:

Հանդիսությանը ներկա է լինում նաև Հայոց Հայրապետը՝ պատվո նվաստահոգության սեղանին: Ն. Սրբությանն ընկերակցում էին ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Թումանյանի և Բուդղարիայի հայոց սուսօնորդ տ. Տիրայր եպ. Մարտիկյանը, ս. Գեղարդի վանքի վանահայր տ. Նարեկ վրդ. Ծաբարյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիսյանը, Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Պ. Ծահրազյանը:

**ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ**

Հոբելյանական հանդիսության ժամանակ Հայոց Հայրապետը Իր ողջույնի գեղեցիկ ճառի մեջ ասում է.

«Իբրև Հայոց Հայրապետ, Մենք ուրախ ենք այս պահին, սուրբ Էջիածնից ողջույն և օրհնություններ երելու սույն հանդիսությունը կազմակերպող կոմիտեին և բոլոր ներկաներին, Հայաստանից և սփյուռքի տարածքից ժամանած:

Կխորհինք թե Հայաստանի հիսնամյակի տոնակատարության ոգուց և գաղափարից հեռացած չենք լինի, եթե Մեր խոսքը այստեղ կեղորոնացնենք սփյուռքահայ իրակա-

նության և նրա հետ կապված հարցերի վրա:

Հայրենիք-սփյուռք հարաբերությունները բոլորեցին հիսուն տարի: Այս տարիները, գուցե ճշմարիտ կլինեք բնորոշել, որպես մի շրջան, երբ արտասահմանի հայերը, հետզհետե սկսեցին ճանաչել, հասկանալ ու համոզվել թե ծնունդ է առած ու կազմավորված՝ մի նոր հայկական պետություն որ աճում ու զարգանում է քաղ առ քաղ: Սփյուռքի հայերը հետզհետե ավելի խորը կերպով սկսեցին սիրել ու հպարտանալ արդի Հայաստանով, նրան համարելով որպես վերածնված մայր հայրենիքը ամենայն հայոց:

Սփյուռքի հայությունը փորձեց համեստ չափերով, նաև նյութապես օգնել, աստարելու համար հայրենի վերաշինության:

Այս հիսուն տարիների ընթացքին Հայաստանի պետությունը և ժողովուրդը, թեև երբեք անտարբեր չգտնվեցին դեպի սփյուռքը, բայց բնական էր որ նրանք առավելապես իրենց ուժերը կեղորոնացնեին վերականգնելու համար քայքայված երկիրը: Ոչնչից գրեթե, ստեղծեցին նրանք, մեր օրերի Հայաստանը՝ բարգավաճ, պերճ ու ապահով:

Այսօր, հիսնամյակի շեմին սակայն, ժամանակն է որ հայրենիք-սփյուռք հարաբերությունները նոր ձև և նոր բովանդակություն ստանան, շեշտը դնելով սփյուռքի հայության վրա:

Հայրենիքը, այսօր այլևս այնքան ամուր է ու ինքնավատան և ամեն տեսակի միջոցներով հարուստ, որ կարող է՝ իր ուշադրությունը և հոգածությունը ավելի լայն չափերով ուղղել դեպի արտասահմանի մեր պանդուխտ ժողովուրդը՝ գրեթե կեսը մեր ամբողջ ժողովուրդին, առավել ուղիղ ճանաչելու, առավել լավ հասկանալու և ճիշտ գնահատելու նրան, և նեցուկ հանդիսանալու, որպեսզի նա իր գոյությունը կարողանա պաշտպանել ու պահպանել՝ իր պապերի հավատքով, իր մայրենի լեզվով, իր հայրենաբաղձ զգացումներով, մի խոսքով իր հայկական հոգիով:

Հայտնի է բոլորիդ թե Մայր Աթոռ ս. Էջմիածին եկեղեցական գծով, գործում է այս ոգիով, այս գիտակցությամբ, մանավանդ համաշխարհային Բ պատերազմից հետո, և կասկած չկա՝ ո՛չ արհամարհելի արդյունքներով:

Բոլորիս հայտնի է նույնպես թե այդ նույն գիտակցությամբ ու նպատակով մեր հայրենի բարեխնամ կառավարությունը ծնունդ տվեց այս կազմակերպության սփյուռքի հայության հետ մշակութային կապի կոմիտե անվան տակ, որ ահա յոթ տարի է որ յուրջ,

կազմակերպված աշխատանք է ծավալում, որի արդյունքները նույնպես արհամարհելի չեն: Այլևս կարելի չէ պատկերացնել Հայաստանը առանց այս գործարար կոմիտեին:

Այս հիսնամյակի շեմին Մենք կկամենանք ցանկություն հայտնել ու մաղթել որ մայր երկիրը, Հայաստանի մշակութային կազմակերպություններն ու հիմնարկությունները, հայաստանցի մտավորականությունը, ավելի մեծ ճիգեր ի գործ դնեն այս ուղղությամբ:

Միջուքի հայության կյանքին սպառնացող վտանգը այնքան իրական է, այնքան համատարած ու այնքան այժմեական, որ մենք հայաստանցիներս, մշակութային հաստատությունները, մտավորականությունն և եկեղեցի, պետք է անհնարը փորձենք: Պետք է գուցե փշրել ամեն տեսակի նախապաշարումներ, մտածելու և գործելու հին կաղապարները: Պետք է խիզախ մի ուստում կատարել, աննահանջ սիրով ու գուրգուրանքով, նաև համբերատարությամբ դեպի մեր պանդուխտ բույրերն ու եղբայրները, Էնույնքան աննահանջ լավատեսություն ունենալ մեր առաքելությանը նկատմամբ:

Մենք քաջ գիտենք թե դուք բոլորդ, հայաստանցի և արտասահմանցի հայեր, նույն մտորումներով եք ապրում ու գործում, հաճախ տառապելով:

Մենք հիշում ենք օրինակ, մի քանի ամիսներ առաջ, Մարո Մարգարյանի հոգեկան փոթորկումը, կսկիծը, Միացյալ Նահանգներից իր վերադարձին:

Զգայուն ու հայրենասեր բանաստեղծուհին ապրում էր տառապանքը՝ Հայաստանի

«նոր վերքի», ինչպես պիտի ասեր Արովյան:

Մեր վերածնած մայր երկրի ամենահաղթողին ու սքանչելի զարթոնքը թող մեզ բուրիս լուսավորի ու զորացնի՝ նոր ներշնչություններով, նոր տեսիլքներով և մասիսացած հավատքով դեպի ամենայն հայոց ապագան:


Մայր Հայաստանի հիսնամյակի շեմին, թող բոլորիս կարգախոսը լինի՝ ամեն գնով փրկել սփյուռքի հայությունը:


\* \*

Նոյեմբերի 29-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 10-ին, Երևանում, Ալ. Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում, տեղի է ունենում Հայաստանի պանծալի 50-ամյակին նվիրված հանդիսավոր նիստ: **Ամենայն Հայոց Հայրապետը** ներկա է լինում հոբելյանական հանդիսությանը՝ ընկերակցությամբ Վրահայոց թեմի առաջնորդ **տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանի**, Արարատյան թեմի առաջնորդական փոխառորդ **տ. Վահան եպս. Տերյանի** և **ս. Գեղարդի վանքի վանահայր տ. Նարեկ վրդ. Ծաքարյանի**:

Նոյեմբերի 30-ին, երկուշաբթի օրը, երեկոյան ժամը 19-ին, **Վեհափառ Հայրապետը** երևանում, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության դահլիճում, ներկա է լինում Հայաստանի 50-ամյակի պատվին տրված պաշտոնական մեծ նաչկերույթին:

Հայոց Հայրապետին ընկերակցում էին **տ. Կոմիտաս, տ. Տիրայր եպիսկոպոսները** և **տ. Նարեկ վարդապետը**:





## ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՐԳԵՐԻ ՄԵՋ

### ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

#### ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԵՏ

Վաղուց թեև իմ հայացքը Անհայտին է ու հեռվում  
Ու իմ սիրտը իմ մտքի հետ անհուններն է թափառում,  
Բայց կարոտով ամեն անգամ երբ դառնում եմ դեպի քեզ՝  
Մըղկըտում է սիրտըս անվերջ քո թառամչից աղևկեզ,  
Ու գաղթական զավակներիդ լուռ շարքերից ուժասպառ,  
Ե՛վ գյուղերից, և՛ շեներից՝ տըխո՛ւր, դատարկ ու խավար,  
    Զարկվա՛ճ հայրենիք,  
    Զըրկվա՛ճ հայրենիք:

Խըռնվում են մըտքիս հանդեպ բանակները անհամար,  
Տըրորում են քո երեսը, քո դաշտերը ծաղկալիտ,  
Ու ջարդարար ոհմակները աղաղակով վայրենի,  
    Ավարներով, ավերակներով, խընջույքներով արյունի,  
Որ դարձրին քեզ մըշտական սև ու սուգի մի հովիտ,  
Խեղճ ու լալկան քո երգերով, հայացքներով անձրպիտ,  
    Ողբի՛ հայրենիք,  
    Ողբի՛ հայրենիք:

Բայց հին ու նոր քո վերքերով կանգնած ես դու կենդանի,  
 Կանգնած խոհո՛ւն, խորհրդավոր ճամփին նորի ու հընի.  
 Հառաչանքով սրբոյ խորքից խոսք ես խոսում Աստծու հետ  
 Ու խորհում ես խորին խորհուրդ տաճջանքներում չարաղետ,  
 Խորհում ես դու էն մեծ խոսքը, որ տի ասես աշխարհքին  
 Ու պիտ դառնաս էն երկիրը, ուր ձրգտում է մեր հոգին—

Հույսի՛ հայրենիք,

Լույսի՛ հայրենիք:

Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած,  
 Հագա՛ր-հագար լուսապայծառ հոգիներով ճառագած,  
 Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին,  
 Կենսաժըպիտ իր շողերը պիտի ժըպտան առաջին,  
 Ու պոետներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անեծքով,  
 Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով,  
 Իմ նո՛ր հայրենիք,  
 Հըրգո՛ր հայրենիք...

## ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

### Է՛Յ, ԶԱՆ-ՀԱՅՐԵՆԻՔ

Է՛յ, ջան-հայրենիք, ինչքա՛ն սիրուն ես,  
 Սարերըդ կորած երկնի մովի մեջ.  
 Զրերըդ անո՛ւշ, հովերըդ անո՛ւշ,  
 Մենակ բալբերդ արուն-ծովի մեջ:

Քու հողին մեռնեմ, անգի՛ն հայրենիք,  
 Ա՛խ, քիչ է, թե որ մի կյանքով մեռնեմ,  
 Երևեկ ունենամ հագար ու մի կայնք,  
 Հագա՛րն էլ սրբտանց քեզ մատաղ անեմ:

Ու հագար կյանքով քու դարդին մեռնեմ,  
 Բալբերդ մատա՛ղ, մատա՛ղ քու սիրուն.  
 Մենակ մի կյանքը թո՛ղ ինձի պահեմ,—  
 Է՛ն էլ քու փառքի գովքը երգելուն,—

—Որ արտուտի պես վե՛ր ու վե՛ր նախրեմ  
 Նոր օրվա ծեփդ, ազի՛զ հայրենիք,  
 Ու անո՛ւշ երգեմ, բա՛րձր ու զիլ գովեմ  
 Կանաչ արևըդ, ազա՛տ հայրենիք...

## ԵՂԻՇԵ ԶԱՐԵՆՅ

### ԵՍ ԻՄ ԱՆՈՒՇ ՀԱՅԱՍՏԱՆԻ


Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բարձ եմ սիրում,  
 Մեր հին սագի ողբանվագ, լացակումամ լարն եմ սիրում,  
 Արնանման ծաղիկների ու վարդերի բո՛ւրբ վառման,  
 Ու նահրյան աղջիկների հեզաճկուն պա՛րն եմ սիրում:

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե,  
 Արևն ամռան ու ձմովա վիշապաճաչն բուքը վսեմ,  
 Մթում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սև  
 Ու հնամյա քաղաքների հագարամյա բա՛րն եմ սիրում:

Որ է՛լ լինեմ—չե՛մ մոռանա ես ողբաճաչն երգերը մեր,  
 Չե՛մ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր,

Ինչքան էլ տ'ը սիրոս խոցեն արյունարամ վերքերը մեր—  
 Էլի՛ ես որք ու արևավառ իմ Հայաստան-յա՛րն եմ սիրում:

Իմ կարոտած արտի համար ո՛չ մի ուրիշ հեքիաթ չկա.  
 Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա.  
 Աշխա՛րհ անցի՛ր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա.  
 Ինչպես անհաս փառքի ճամփա՛ ես իմ Մասիս սա՛րն եմ սիրում:



Արագած. Մի տեսարան

### ՀՈՎՀԱՆՆԵՍ ԾԻՐԱԶ

#### Ե Ր Ե Վ Ա Ն

Իմ հուշերի մի աչքի մեջ տրդատակերս չքնաղ Անիկ՝  
 Էրեբունի բլրին կանգնած՝ ես հայում եմ Երևանին,  
 Մի աչքովս ետ եմ հայում, մի աչքովս հայում սուսջ՝  
 Կըշտում եմ նորն ու հինը՝ գույգ աչքերով կշեռք դստած,  
 Վեր ու վար եմ անում, սակայն, երկու թաթերն իմ կշեռքի,  
 Զույգն էլ քանզի իրենց վրա վաստակն ունեն հայոց ձեռքի:

Օ՛, չեմ կարող ես մի աչքով նայել ընկած հին հրաշքին,  
 Ում ավերակ մի տաճարն էլ հիացմունք է գոռոզ աչքին,  
 Նորի սոված պատառ հացս թեկուզ լինի կաթն էլ իմ մոր՝  
 Նորից հինը մորս կեսն է, մյուս կեսը ելնողն է նոր,  
 Ընկած մորից երես դարձնե՛ս, լավ է երես դարձնեմ կյանքից,  
 Լավ է թաղվեմ, քան թե մի կեղծ շշուկ ծնվի իմ շրթունքից:

Ու նայում եմ Երևանին, կանգնած բլրին Էրեբունի,  
 Հին Անիս է վերածնվում բարուրի մեջ Երևանի,  
 Վեր կամարվում ժայռաբարուր հազարագեղ գմբեթվելով.  
 Մի նոր հայոց հրաշք դառնում՝ մայր Անիին մտանվելով,  
 Հազար ու մի եկեղեցիք փոխվում են նոյս պալատների,  
 Սուրբ զանգերի դողանջի պես ժխորն է բլուր հայ մուրճերի...

Ելնում է նորն հին ձևից, մասիսաչափ ձվից անմեռ,  
 Մեծ Տրդատից՝ Թամանյանը, Թամանյանից նորերը դեռ,  
 Ասես Մեարոպ Մաշտոցն ինքն է մոնումենտվում նոր արձանով,  
 Վեր գմբեթվում հազարասյուն, հազարաձայն Երևանով:

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

ԵՐԳ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Թե հոկտեմբերյան դրոշի փայլից  
 Չվառվեր ճակատն Արագածի,  
 Իր մութ այրերում շունչը կփչեր  
 Այրերի երկիր Հայաստանս:  
 Մեր երդիկներից ծխի հետ մորից  
 Չէր հյուսվի բույրը ցորեն-հացի,  
 Ծեկ ժայռերի մեջ անհույս կհանգչեր  
 Ժայռերի երկիր Հայաստանս:

Կհանգչեր անհույս և անհիշատակ,  
 Կմեռներ և իր գերեզմանին  
 Գիր չէր ունենա՝ մեարտայան ոսկյա  
 Տառերի երկիր Հայաստանս:  
 Իր երկինք մտած, քարձր սարերից .  
 Գլխիվայր կընկներ վիհերը խոր  
 Սարերին կանգնած, սարերի սովոր,  
 Սարերի երկիր Հայաստանս:

Բոլոր կողմերից սրարշավ եկող  
 Վայրի ցեղերին կույ կզնար  
 Դարերից եկած, դարեր վաստակած,  
 Դարերի երկիր Հայաստանս:  
 Այրուձիների դոփյունների տակ  
 Ծամփեքին ընկած քար կմնար  
 Քարից հաց քամող, քարին թև տվող,  
 Քարերի երկիր Հայաստանս:

Էլ ո՛վ կարող է, ո՛վ կհանդգնի  
 Վայրի մոլուցքով դարձնել նորից  
 Ավերի երկիր, ցավերի երկիր,  
 Խավարի երկիր՝ Հայաստանս,  
 Երբ իր փառապանծ եղբայրների հետ  
 Արև է տանում աշխարհներից,  
 Արևին թիկնած, արևից շիկնած,  
 Արևի երկիր Հայաստանս:

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԾԱՆԱՊԱՐՀԻ ԿԵՍԻՆ

(Հատվածներ)

Դու պիտի վրեժ առնես ապրելո՛վ,  
 Ապրելով համա՛ն, հազարապատի՛կ.  
 Ավերումի դեմ՝ քո ստեղծելո՛վ,  
 Ավեր Վանի դեմ՝ քո Երևանո՛վ,  
 Աքսորների դեմ՝ խույ անապատից  
 Նորից տուն դարձող քո քարավանո՛վ,—  
 Դու պիտի ապրես այսպե՛ս, սրանո՛վ:

Ծեփքի հանդում մորթված որբի տեղ՝  
 Աշնակցի հարսի տասնըչորս որդո՛վ.  
 Մշո դաշտի մեջ սևցած խոփի տեղ՝  
 Քո տրակտորո՛վ, քո ծուփ-ծուփ արտո՛վ,  
 Մարութա սարի մարած թոցի տեղ՝  
 Յոթն աշխա՛րհ ծնող՝ քո լոթ կայանո՛վ.  
 Տաթևի կուրցա՛ծ դարանցի տեղ՝

Բյուր ակնով նայող քո Բյուրականով:  
 Հայոց արցունքաչ «Կոունկի» տեղակ,  
 Սարե-սար փոված սև-սուգի՝ տեղակ՝  
 Հախտ՝ուն, կենսահո՛րոք, սիրտը թո՛ւնդ  
հանող.

Հանճարիդ լույսը աշխարհի՛ն տանող  
 Քո սեգ Սարյանով,  
 Խաչատրյանով,—

Դու պիտի ապրես այսպե՛ս, սրանով:  
 Պատմության երթում՝ անդու, հանապազ  
 Առաջինների շարքո՛ւմ քայլելով.  
 Պատմության հանդեպ՝ երեսդ միշտ պարզ՝

Քո ողջ էությունը նորի՛ն փարվելով,—  
 Քո մաքստեղով,  
 Քո հավատարմով,—  
 Դու, ի՛մ ժողովուրդ. դու ապրել՝ ես,  
կա՛ս,

Այսպե՛ս ապրելով...

Քեզնով եմ ապրում.

Եվ ես՝ բանաստեղծ,  
 Օրհնո՛ւմ եմ բախտս հետին այս երգով,  
 Որ աշխարհի մեջ, երկնքի ներքո  
 Աշխարհը թողած՝ ծնվել եմ այստե՛ղ  
 Ու որդի՛ն եմ քո...

ԳԵՎՈՐԳ ԷՄԻՆ

\*  
\* \*

Մենք փո՛քր ենք, այո՛,  
 Փոքր՝  
 Լեռների ծերպից սուրացող  
 Այն քարի՛ նման,  
 Որ հովտում ընկած  
 Ժայռի ո՛ւժն ունի.

Փո՛քր՝  
 Մեր անասնձ գետակների պես,  
 Որոնք վիթխարի ո՛ւժ են ամբարել,  
 Անձանոթ՝ հովտի ծուլ-ծուլ գետերին:

Փո՛քր ենք,  
 Բայց ինչպես գնդակը՝ փողում,  
 Ինչպես կաղնու սերմն՝  
 Արգավանդ հողում.  
 Ոսկու մի հատիկ,  
 Որ վերկի՛ց է՝ նայում  
 Կապարի ու թուջի քաշին.

Մենք փո՛քր ենք,  
 Սակայն համեմո՛ւնք ենք մենք,

Աղն այն մի՛ պտղունց,  
 Որ հա՛մ է տալիս մի ամբողջ ճաշի:

Մենք փո՛քր ենք, այո՛,  
 Չեզ ո՞վ էր ասում  
 Մեզ սեղմե՛ք այնքան,  
 Որ մենք ստիպված... Աղամա՛նդ դառ-  
նանք.

Ո՞վ էր ստիպում՝  
 Մեզ աստղերի պես ցիրուցա՛ն անեք,  
 Որ միշտ մե՛զ տեսնեք՝  
 Ո՛ր էլ որ գնաք:

Մենք փոքր ենք,  
 Սակայն մեր երկրի՛ նման,  
 Որի սահմանը  
 Բյուրականից մինչ լուսի՛ն է հասնում  
 Եվ Լուսավանդից մինչև... Ուրարտո՛ւ.

Փոքր՝  
 Այն հրա՛ջք Ուրանի նման,  
 Որ դար ու դարեր,  
 Փայր՛ում է, շողո՛ւմ,  
 Սակայն... չի՛ հատնում:

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

ՀՊԱՐՏ ԵՄ ԵՍ

Հպարտ եմ ես նրա համար,  
 Որ փառահեղ՝ պատմությունը,  
 Եվ անուկող այնքան հին է:  
 Հպարտ եմ ես նրա համար,  
 Որ փլվել է թեպետ տունը,  
 Բայց չի խախտվել նրա հիմք:

Հպարտ եմ ես, որ քեզ համար  
 Որդիներդ դարեր ընկան,  
 Որ սուրբ պահեն քո անունը:  
 Հպարտ եմ ես, որ քեզ համար  
 Թանկ է եղել թանաքն այնքան,  
 Որքան կարմիր քո արյունը:

Հպարտ եմ ես քո մատների  
 Ծարտարությունը անհատների,  
 Քեզ թարգմանող քո գրքերով:  
 Հպարտ եմ ես անվամբ քո սուրբ,  
 Լեզվով, որով երբ չես խոսում՝  
 Նույնն ես ասում քո երգերով:

Հպարտ եմ ես քո անցյալի  
 Մաքստումով ու պայքարով,  
 Տոկունությամբ, կամքով համառ:  
 Հպարտ եմ ես քո պանծալի,  
 Քո լուսավոր այս ներկայով,  
 Որ... գալիք է այլոց համար:

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

Հայրենի երկիր, հայրենի իմ հող,  
 Դու՛ մայրական ձեռք՝ օրոցք օրորող,  
 Դու՛ անուշ խաղն իմ մինչև երեկո,  
 Իմ ջրաղացը՝ ուռենու ներքո,  
 Մորս հեքիաթի հրաշք երկիրը,  
 Իմ մեարդատառ առաջին գիրը,  
 Հետո իմ սիրո առաջին բառը,  
 Լուսնյակ գիշերը, այգու պատնեշը,  
 Այն լավ աղջկա քնքուշ նազանքը,  
 Իմ կարոտանքը, իմ երազանքը...  
 Ու հետո, հետո այն ահեղ մարտում  
 Դու՛ կովի տանող դրոշ ու երդում,  
 Դու՛ կովի տանող ցասում ու հավատ,

Դու՛ անեղծ պատիվ, դու՛ խիղճ անա-  
 րատ...  
 Հետո այն օտար դաշտերից մարտի  
 Դու՛ ինձ տուն կանչող հեռավոր բարդի,  
 Դու՛ իմ լեռնային ջինջ լուսաբացը,  
 Դու՛ իմ կրակը, գինին ու հացը,  
 Դու՛ մաքո՛ւր-մաքո՛ւր ժպիտն իմ ման-  
 կան,  
 Դու՛ իմ անցյալը, դու՛ իմ ապագան,  
 Իմ հպարտությունն, իմ ներշնչանքը,  
 Դու՛ ամբողջ, ամբողջ, ամբողջ իմ  
 կյանքը...

ԱԼԻՍԻԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՆԱՄԱԿ ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Երկիր Հայաստան,  
 Ես քեզ գրում եմ  
 Բաւենու-Այրեւ հեռու քաղաքից,  
 Մեր բաժանումից երկու տարի անց:

Եվ հուսով եմ ես,  
 Որ իմ նամակը  
 Քո արևներին  
 Ու քո լեռներին դու պիտի կարդաս,  
 Ինձ պատասխանի պիտի ջրերո՛ւ  
 Մտերիմները  
 Քո արմատների...

Ինձ պատասխանի պիտի քո ոգին  
 Եվ պատասխանի իր մեկ ու միակ  
 Այն ճշմարտությամբ,  
 Որ ի՛մն է նաև:

Երկիր Հայաստան,  
 Դու կանչում ես ինձ,  
 Քեզ է պահանջում ու քեզ է կանչում  
 Նաև արյունս,  
 Եվ ինձ տանջում է տենդը սպասման:

Ուրիշ, այլ սերեր  
 Հուզում են միայն  
 Ակնթարթները իմ ժամանակի,  
 Քոնն է, Հայաստան,  
 Ողջ անձեռնամուխ իմ ժամանակը  
 Եվ ամենաջինջ  
 Իմ արտասուքը:

Երկիր Հայաստան,  
 Երբ ես ուզում եմ քո անունը տալ,  
 Իմ մեջ զարթնում է մի թաքուն աղոթք՝  
 Ամենահինը,  
 Երբ քեզ եմ երգում,  
 Իմ մեջ շարժումն է  
 Սկսում քջիջն իմ ամենանոր:

Չգիտեմ, ճշա՞մ,  
 Թե՞ արտասուքիս խառնեմ լռելյայն  
 Կարոտիս ցավը,  
 Որ անանուն է:

Երազում եմ քեզ,  
 Եվ էությանս թափանցիկ ամպը  
 Քեզ է միանում  
 Եվ գնում հավերժ մի լողարկությամ:

Դեռ քեզ չտեսած,  
 Ծանաչում էի ես քո քարերը,  
 Հետո քեզ տեսա,  
 Քեզ շոշափեցի,  
 Ծնչեցի ես քեզ,  
 Լուծվեցի ջրում  
 Եվ փոշի դարձա քամիներիդ մեջ:

Գիտես,  
 Իմ ու քո միասնությունից  
 Վաղընջական է:  
 Ես կամ առաջին քո հուշերի մեջ:

Ապրել եմ ես քո  
 Հողմակոծ հողում  
 Որպես անխուսափ մի ճակատագիր:  
 Եվ պիտի մի օր վերադառնայի  
 Դեպի սկիզբս,  
 Գտնելու համար անմեղությունն իմ  
 Ու էությունն իմ՝  
 Անդաշն աշխարհի  
 Հարաբերակամ  
 Այս խաղերի մեջ:

Ես այդ աշխարհից  
 Գալիս եմ ահա,  
 Որ օրենքները ի կատար ածեմ՝  
 Իրերի շարժման օրենքները պարզ:

Քանզի այն ամենն,  
 Ինչ որ պատմում է  
 Մայր հողի մասին  
 Ու արյան մասին,  
 Ամպի ու լեռան,  
 Հացի ու փառքի,  
 Աղի ու լույսի,  
 Երաժշտության,  
 Բանաստեղծության,  
 Արցունքի մասին,  
 Անդունդի մասին,  
 Սարսուռի մասին,  
 Ու քարի մասին,  
 Ինձ քո մասին է պատմում շարունակ:

2է՞ որ ես տեսա,  
 Թե Հրազդանը  
 Քարի ու ջրի հավերժ բախումով  
 Ինչ է նկարում,  
 Եվ ամպերի տակ տեսա բաբախը  
 Արարատ լեռան:  
 Արարատ լեռը՝  
 Ահեղ մի պայթյուն,  
 Որ ինձ հրկիզեց  
 Առանց լավայի...

Ինձ հարց են տալիս.  
 «Հայաստանն ի՞նչ է»...  
 Բայց մի՞թե այդքան հեշտ է բացատրել  
 Ամբողջությունը,  
 Մի՞թե հավատը մեկնաբանել է,  
 Թե ի՞նչ է Աստված...  
 Եվ ինչպե՞ս պատմել սարսուռի մասին,  
 Հավատքի մասին,  
 Եվ էությունը ինչպե՞ս մերկացնել,  
 Ցույց տալու համար  
 Կերպարը սիրո:  
 Հիմա ես ու նա  
 Միասնություն ենք  
 Ե՛վ անբողջությամբ մեր ճշմարտության  
 Ե՛վ եթերային վեր երազներով,  
 Անցյալի դեմքով տանջահար ու հեզ

Եվ ճերմակ ու ջերմ օրորոցներով:  
 Եվ պահանջ չունենք խոսքի ու բառի,  
 Զի հոգիները լուռության մեջ են  
 Միանում իրար:  
 Երկիր Հայաստան,  
 Ես բարձրացել եմ քո փառքի թևով,  
 Քո կորուստներով եղել արնաքամ,  
 Աղոթել եմ ես քո մայրերի հետ,  
 Քո վերքերի մեջ կսկիծ եմ եղել,  
 Ծնունդներիդ մեջ՝ բերկրություն մի՝  
 պարզ:

Հինգ հազար տարի  
 Քո տառապանքի հետ եմ ես եղել:  
 Եվ այս ամենը ինչպե՞ս բացատրել  
 Այն մարդկանց, որոնք  
 Ինձ հարց են տալիս.  
 «Հայաստանը քեզ դո՞ւր եկավ արդյոք»:


Ու ես այդ մարդկանց ուզում եմ ասել.  
 —Ես Հայաստանը ապրում եմ, մարդիկ,  
 Ապրում եմ նրա հնազույն մաշկով,  
 Բույրով մենավոր  
 Եվ զգում նրան իմ արմատներով:

Ես չգնացի նրան տեսնելու ու  
 հավանելու,  
 Գնացի այնտեղ նորից ծնվելու  
 Եվ որոնելու լույսն իմ նախնական  
 Եվ սկսելու իմ գրո դարից:  
 Դու, որ ինձ գիտես  
 Եվ հասկանում ես իմ ճիշդ անգամ,  
 Գիտե՞ս, թե որքան դժվարանում եմ  
 Քո մասին խոսել  
 Աշխարհիկ լեզվով.—  
 Մեր հանդիպումը  
 Ամենավերին  
 Երկիւքներում է,  
 Որտեղ խոսում են,  
 Սակայն չեն զգում բայերի կարիք:

Եվ դրա համար  
 Ես իմ լուռության աղոթքներով եմ  
 Միշտ քեզ ողջունում,  
 Ի՛մ ինքնապատկեր:

Ու քեզ օրհնելով,  
 Ես ինձ եմ օրհնում,  
 Քեզ վերապրելով,  
 Վերապրում եմ ինձ,  
 Եվ ճիշտ, ճիշտ  
 Այդ դու ես, որ կաս,  
 Հայրենի իմ հող  
 Եվ իմ դրոշակ՝  
 Երկիր Հայաստան:

Թարգմ.՝ ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ



## Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

**Հոկտեմբերի 30-ին, ուրբաթ.**—Այսօր Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից հրաժեշտ է առնում տ. Ղևոնդ արքեպ. Չեպելյանը, որը շուրջ մեկ և կես ամիս ուխտավորաբար գտնվում էր ս. Էջմիածնում և մայր հայրենիքում, և մեկնում Բելյուս:

\*  
\* \*

**Հոկտեմբերի 30-ին, ուրբաթ.**—Այսօր, երեկոյան ժամը 18-ին, Վեհարանում տեղի է ունենում Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ: Ժողովին մասնակցում էր նաև ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը:

\*  
\* \*

**Հոկտեմբերի 31-ին, շաբաթ.**—Այսօր, ժամը 15-ին, հոգևոր ճեմարանում իր երրորդ դասախոսությունն է կարդում բժիշկ Ստեփան Տեր-Ստեփանյանը: Հարգելի բանախոսի նյութն էր՝ «Մարդու անատոմիան»:

\*  
\* \*

**Նոյեմբերի 1-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում Ռոստովի հայոց հոգևոր հովիվ տ. Գրիգորիս արեղա Բունիաթյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է «Մայր իմ և եղբարք սոքա են, որ զբանն Աստուծոյ լսեն ու առնեն» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

\*  
\* \*

**Նոյեմբերի 4-ին, չորեքշաբթի.**—Այսօր Վեհափառ Հայրապետը, տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի ընկերակցությամբ, մեկնում է Դիլիջան՝ տեղի առողջարանում եռօրյա հանգստի համար: Վեհափառ Հայրապետը և տ. Սերովբե սրբազանը Մայր Աթոռ են վերադառնում նոյեմբերի 7-ին, շաբաթ օրը:

\*  
\* \*

**Նոյեմբերի 8-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ նախորդ օրվա Հրեշտակապետաց տոնի առթիվ:

\*  
\* \*

**Նոյեմբերի 10-ին, երեքշաբթի.**—Այսօր, ժամը 19-ին, Վեհարանի հանդիսությանց դահլիճում Մայր Աթոռի միաբանությանը, հոգևոր ճեմարանի ուսանողությանը և դասախոսական կազմին ու պաշտոնեությանը դասախոսություն է կարդում բժշկական գիտությունների դոկտ.-պրոֆ. Ա. Ծաղարյանը՝ Պետրոս Դուրյանի դիմաբանդակի վերականգնման իր աշխատանքների մասին:

Բանախոսությունից հետո Պետրոս Դուր-

յանի ստեղծագործական կյանքի և վաստակի մասին զեկուցում է բանասիրական գիտությունների թեկնածու Ալբերտ Ծարուրյանը:

**Նոյեմբերի 13-ին, ուրբաթ.**—Այսօր Բեյրութից Մայր Աթոռ է ժամանում Ռումինիայի և Բուլղարիայի թեմերի հալոց առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը: Նա Երուսաղեմում մասնակցել էր եպիսկոպոսաց հանձնաժողովի աշխատանքներին՝ որպես անդամ:

**Նոյեմբերի 14-ին, շաբաթ.**—Այսօր Փարիզ՝ իր թեմն է վերադառնում Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հալոց առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը:

**Նոյեմբերի 15-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քնն. Բելլերյանը: Քարոզում է Ռումինիայի և Բուլղարիայի առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը՝ հայ եկեղեցու դերի և առաքելության մասին հայ ժողովրդի կյանքում:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

**Նոյեմբերի 18-ին, չորեքշաբթի.**—Այսօր, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետին է այցելում տաղանդավոր գրող Մարիետա Ծահիկյանը, որը Հայաստանի 50-ամյակի առթիվ գտնվում էր Երևանում:

Հալոց Հայրապետի և հարգելի գրողի միջև տեղի է ունենում հետաքրքիր գրույց՝ հայ կյանքի ու հայ մշակույթի վերաբերյալ:

**Նոյեմբերի 20-ին, ուրբաթ.**—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ռումինիայի և Բուլղարիայի թեմերի առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը մեկնում է Բաքու՝ ս. պատարագ մատուցելու և Բանին կենաց քարոզությանը միաթարելու հավատացյալներին: Տ. Տիրայր սրբազանին ուղեկցում էր Արարատ սրկ. Գալստյանը: Սրբազանը Մայր Աթոռ է վերադառնում նոյեմբերի 23-ին, երկուշաբթի օրը:

**Նոյեմբերի 20-ին, ուրբաթ.**—Այսօր, ժամը 19-ին, Վեհափառի դահլիճում տեղի է ունենում սամուկի երեկո, որին ներկա էին Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը և Մայր Աթոռի պաշտոնետությունը:

Ելույթ է ունենում Հայկական ՍՍՀ ժողովրդական արտիստ, պետական մրցանակի դափնեկիր, Մոսկվայի պետական ֆիլհարմոնիայի մենակատար, սամուկեղ Սուրեն Քոչարյանը: Համբավավոր արվեստագետ մեծ վարպետությամբ արտասանում է Հովհաննես Թումանյանի «Մարո», «Հառուչանք» պոեմները և հատվածներ «Անուշ»-ից: Երկրորդ մասում տաղանդավոր սամուկեղը կարդում է երգիծական պատմվածքներ Ա. Բակունցից, Հովհ. Թումանյանից, Հ. Ծողոտյանից և ժողովրդական այ հեքիաթներ: Ելույթի ավարտից հետո Վեհափառ Հայրապետը իր ընդունելությանը դահլիճում ջերմ շնորհակալություն է հայտնում Ս. Քոչարյանին՝ բարձրորեն գնահատելով նրա կատարողական արվեստը:

**Նոյեմբերի 22-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Ծնորհք վրդ. Գապարյանը և քարոզում՝ Ակույսի տաճար ընծայման տոնի առիթով «Այսուհետև երանհիցեն ինձ ամենայն ազգք» բնաբանով:

**Նոյեմբերի 28-ին, շաբաթ.**—Այսօր, ժամը 19-ին, Վեհափառ Հայրապետին են այցելում Հայաստանի 50-ամյակի առթիվ մայր հայրենիք ժամանած մի խումբ սիլուոքահայ մտավորականներ, հասարակական գործիչներ, այդ թվում՝ Բեյրութից՝ պրոֆ. Բ. Թովմապյանը իր հարգելի տիկնոջ հետ «Զարթոնք» թերթի խմբագրապետ Գ. Ահարոնյանը, Եթովպիայից՝ Հայկաշեն Ուզունյանը, Եգիպտոսից՝ ծանոթ արվեստագետ Ալեքսանդր Սարուխանը, «Արև» թերթի խմբագրապետ Ավետիս Յափուջյանը ԱՄՆ-ից՝ «Պայքար» թերթի խմբագրապետ ղոկտ. Նուբար Բերբերյանը և ուրիշներ: Հալոց Հայրապետի և հարգելի հյուրերի միջև տեղի է ունենում ջերմ գրույց:

Վերջում Վեհափառ Հայրապետը բարեհաճում է Իրեն սեղանակից դարձնել հարգելի հյուրերին:

Նոյեմբերի 28-ին, շաբաթ.—Տօն Սրբոց առաքելոցն և առաջին լուսատրչացն մերոց Թաղէոսի և Բարթողիմէոսի.

Այսօր Մայր տանարում օրվա տոնի առիթով պատարագ է մատուցում տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը:

Նոյեմբերի 28-ին, շաբաթ.—Այսօր հոգևւոր ճեմարանի ուսանողությունը, տեսչի գլխավորությամբ, այցելում է Սարդարապատի հուշարձանախումբ: Նրանք ծանոթանում են Սարդարապատի հերոսամարտի պատմությանը և հուշարձանների կառուցողական արվեստին:

Նոյեմբերի 29-ին, կիրակի.—Այսօր, ժամը 15-ին, Հայաստանի 50-ամյակի առիթով, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տրվում է ճաշկերույթ, որին ներկա են լինում տ. Հայկազուն, տ. Կոմիտաս, տ. Հուսիկ, տ. Տիրայր սրբազանները, Արարատյան, Ծիրակի, Վրահայոց, Ադրբեջանի թեմական և եկեղեցական խորհուրդների, Գերագույն հոգևոր խորհրդի, Վերստուգիչ հանձնաժողովի, «Էջմիածին» ամսագրի խմբագրական կազմի անդամները:

Ընդունելության ժամանակ հայրենասիրական ջերմ ելույթներով հանդես են գալիս Վեհափառ Հայրապետը, տ. Հայկազուն և տ. Մաշտոց սրբազանները, տ. Ծնորիք վրդ. Գասպարյանը, Արարատյան թեմի թեմական խորհրդի ատենապետ Ս. Արևշատյանը և ուրիշներ:


Ճաշկերույթն ավարտվում է խմբովին երգված «Էջ Միածինն ի Հօրէ» շարականով և հայրապետական օրհնությամբ:

Նոյեմբերի 30-ին, երկուշաբթի.—Այսօր, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետին է այցելում տաղանդավոր երգահան Արամ Խաչատրյանը:

Հայոց Հայրապետի և հոշակավոր երգահանի միջև տեղի է ունենում ջերմ գրույց՝ հայ երաժշտության և հայ մշակույթի վերաբերյալ հարցերի շուրջ:

Նոյեմբերի 30-ին, երկուշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետին են այցելում Հայաստանի 50-ամյակի առթիվ Երևանում գտնվող Իրանի սենատոր Սադեկ Ռեզա Զադե Ծաֆալը և Թեհրանի համալսարանի դասախոս ու Մեջլիսի անդամ Գազիկ Հովակիմյանը:

Ամենայն Հայոց Հայրապետի և հարգելի հյուրերի միջև տեղի է ունենում ջերմ գրույց:





**ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ՎԵՐՋԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ  
ԸՆՏՐՎԱԾ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ  
ԵՐՈՒՍԱՂԵՄՈՒՄ, ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԳԱՐԱՆՈՒՄ**

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի առաջադրանքով, 1970 թվականի սեպտեմբերի 21-ին Երուսաղեմում, հայոց պատրիարքարանում, ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարք հոր նախագահությամբ, գումարվում են եպիսկոպոսաց ժողովի հանձնախմբի նիստերը: 1969 թվականին Մայր Աթոռում գումարված եպիսկոպոսաց ժողովը սեպտեմբերի 28-ին, իր երկրորդ նիստում, հաշվի առնելով, որ չէր կարող սպառել օրակարգի բոլոր հարցերի մանրամասն քննարկումը վեց օրերի ընթացքում, ընտրում էր ութ հոգուց բաղկացած մի հանձնաժողով, հանձնարարելով նրան հանգամանորեն ուսումնասիրել մեկ տարվա ընթացքում ժողովում սպառիչ կերպով չքննված օրակարգի հարցերը և իր եզրակացությունները ներկայացնել Մայր Աթոռ՝ Վեհափառ Հայրապետին, որպեսզի Նորին Արքայությունը դրանք ներկայացնի 1971 թվականի աշնանը Մայր Աթոռում գումարվելիք եպիսկոպոսաց ժողովի քննարկմանը:

Հանձնաժողովի անդամներ են ընտրվում տ. Եղիշե սրբազան պատրիարքը, տ. Հայկազուն, տ. Սերովբե, տ. Բարզեն, տ. Թորգոմ արքեպիսկոպոսները, տ. Ծահե, տ. Տիրայր և տ. Գնել եպիսկոպոսները:

1969 թվականի հոկտեմբերի 11-ին, շա-

բաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է հանձնաժողովի Ա նիստը, որին ներկա է լինում նաև ամենապատիվ տ. Ծնորհք սրբազան պատրիարքը:

Սույն լիազումար նիստում կազմվում է հանձնաժողովի գործունեության ընդհանուր ծրագիրը և քննության են առնվում կազմակերպչական որոշ հարցեր՝ եպիսկոպոսաց ժողովի որոշումների համաձայն:

Հանձնաժողովը երկրորդ անգամ գումարվում է այս տարվա սեպտեմբերի 21-հոկտեմբերի 2-ը Երուսաղեմում: Նիստին մասնակցում են տ. Եղիշե սրբազան պատրիարքը, տ. Հայկազուն, տ. Սերովբե, տ. Թորգոմ արքեպիսկոպոսները, տ. Ծահե, տ. Գնել և տ. Տիրայր եպիսկոպոսները: Բացակայում է միայն տ. Բարզեն արքեպ. Ապատյանը:

Ստորև քաղվածաբար ներկայացնում ենք նիստերին մասնակից Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Արքահայրանի՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին ներկայացրած հոյեմբեր 14 թվակիր գեկուցագրից և հանձնաժողովի Մայր Աթոռ ուղարկած նիստերի արձանագրություններից որոշ տեղեկություններ:

Հանձնաժողովը պատրիարքարանի մեջ

ակտում է իր աշխատանքները ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքի նախագահությամբ և տ. Ծահե եպս. Աճեմյանի ատենադպրությամբ սեպտեմբերի 21-ին, երկուշաբթի օրը:

**Հանձնաժողովը** 11 օրերի ընթացքում գումարում է հաջորդական տասը նիստեր՝ օրական 3—4 ժամ տևողությամբ, որտեղ քննության են առնվում ի մասնավորի Մաշտոցի վերանայման աշխատանքները:

Հանձնաժողովը իր Ա նիստում, լավ արդյունքների հասնելու համար, կատարում է աշխատանքի բաժանում իր անդամների միջև, որպեսզի յուրաքանչյուրը հանգամանորեն ուսումնասիրի իր բաժին աշխատանքը և իր եզրակացությունների արդյունքը բերի հաջորդ օրերի լիազումար նիստի քննարկմանը: Սույն նիստում որոշվում է նաև, որ «Հանձնաժողովի կատարելիք վերջնական հանձնարարությունները դրկվին Վեհափառ Հայրապետին, էրբ հանձնաժողովը ավարտի իր աշխատանքները»:

Այդ որոշման համաձայն հանձնաժողովը Մաշտոցի քննարկման աշխատանքները իր անդամների միջև բաժանում է հետևյալ ձևով.

1. **Տ. Եղիշե սրբազան պատրիարք.**  
«Կանոնի ձեռնարկության և օժման կաթողիկոսի և Հայրապետի Ամենայն Հայոց» և «Կանոն օրհնության սրբալոյս մեռոնին»:
  2. **Տ. Հայկազուն արքեպ. Արրահամյան.**  
Ձեռնարկության Մաշտոցի փոքր աստիճանների տվյալության՝ դպիր, կիսասարկավագ և սարկավագ և եպիսկոպոսական ձեռնարկության կանոնները:
  3. **Տ. Սերովբե արքեպ. Մանուկյան.**  
Մկրտության և աշխարհականաց թաղման կարգերը:
  4. **Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյան.**  
Պսակի կանոնը և ս. պատարագը:
  5. **Տ. Ծահե եպս. Աճեմյան.**  
Վարդապետական մասնավոր իշխանության (4 աստիճան) և ծայրագույն վարդապետական իշխանության տվյալության (10 աստիճան) կանոնները:
  6. **Տ. Գնել եպս. Մերեճյան.**  
Ժամագիրք և հոգևորականաց թաղման կարգը (քահանայաթաղ):
  7. **Տ. Տիրայր եպս. Մարտիկյան.**  
Քահանայական ձեռնարկության և վեղարի տվյալության կանոնները:
- Հաջորդ մի քանի օրերի ընթացքում հանձնաժողովի անդամները բարեխղճորեն և ամենայն բժախնդրությամբ կատարում են ստանձնած պարտավորությունները և իրենց ուսումնասիրությունների արդյունքները ներկայացնում են հանձնաժողովի լիազումար նիստերի քննարկմանը:


Հանձնաժողովը իր հաջորդ ինն նիստերի մեջ կես առ կես ընթերցում և քննության է առնում առանձին անդամների կատարած աշխատանքները և ներկայացված կամ բարեփոխված կանոնը ընդունում՝ համապատասխան որոշումներով՝ մերթ լրացումներով կամ հապավումներով և հաճախ Մաշտոցի հին կանոնի նույնության պահպանումով:

Հանձնաժողովը իր Ը նիստում, սեպտեմբերի 30-ին, քննության է առնում նաև 1969 թվականի սեպտեմբերին Մայր Աթոռում եպիսկոպոսաց ժողովին ներկայացրած արտասովորագի տասը հարցերը, որոնք շուշափում են կանոնական պարագաներ, ինչպիսիք են՝ խառն ամուսնություն, ամուսնալուծման և վերամուսնության կանոնների վերամիավորում և կարգավորում, նոր և գործնական կանոնագրքի կազմություն, ծննդաբերության կասեցում, դիակիզում, անձնապանները չթաղելու սովորության վերանայում, հոգևորականի՝ մի օրում մեկից՝ ավելի պատարագ մատուցելու իրավունքի հարց:

Հանձնաժողովը իր Թ նիստում, հոկտեմբերի 1-ին, քննության է առնում նաև Մաշտոցի, մկրտության, պսակի, թաղման կանոնների օտար լեզուներով թարգմանության հարցը և որոշում է այդ կանոնների թարգմանության աշխատանքները հանձնարարել՝

- Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանին՝ ֆրանսերեն թարգմանությունը.
  - Տ. Հայկազուն արքեպ. Արրահամյանին՝ ռուսերեն թարգմանությունը.
  - Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանին, անգլերեն թարգմանությունը.
  - Տ. Տիրայր եպս. Մարտիկյանին՝ ռումիներեն թարգմանությունը:
- Հանձնաժողովը իր վերջին՝ Ժ նիստը գումարում է 1970 թվականի հոկտեմբերի 2-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, ուր խորհրդակցությունից հետո «ընդունվեցան կրճատված կարգերը ըստ կցված ցուցակներու ներկայացնել Վեհափառ Հայրապետին»:
- Հանձնաժողովը իր աշխատանքները ավարտում է նախագահ ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարք հոր գոհունակության խոսքով և օրհնությամբ:





**Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆԻ  
ՎԵՐԱԲԱՑՄԱՆ 25-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ  
ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ**

**Ս. պատարագ և հոգեհանգիստ.**—Այս տարի լրացավ ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի վերաբացման 25-ամյակը:

Այս հիշարժան տարեդարձի առիթով հոկտեմբերի 15-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 11-ին, Մայր տաճարում մատուցվում է տուրք պատարագ: Պատարագում է հոգեվոր ճեմարանի տեսուչ տ. Ծնորհք վրդ. Գասպարյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է ազգիս Վեհափառ Հայրապետը՝ «Մերոյ լուսաւորութեան լուսաւոր վերակացու» (Մ. Խորենացի) բնութանով:

Վեհափառ Հայրապետը Իր բովանդակալից քարոզում վեր է հանում Գևորգ Դ և Գևորգ Զ լուսամիտ հայրապետների անգնահատելի գործունեությունը, որոնք մեր ուսումնատեղից նախնիների ավանդապահ ոգով գիտության ջահ վառեցին տուրք գրական Արարատի և ս. Էջմիածնի հայացքի ներքո: Վեհափառ Հայրապետը Իր հավատացյալ զավակներին պատմում է ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի կատարած մեծ դերն ու նշանակությունը մեր եկեղեցու պայծառության և ազգիս լուսավորության գործում:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ Մայր տաճարի Ավագ սեղանի առաջ կատարվում է հո-

գեհանգաւտյան արարողություն՝ նվիրված Գևորգ Դ և Գևորգ Զ երջանակահիշատակ կաթողիկոսների հոգու խաղաղության և ֆիշատակին:

**Հորեյանական հանդիսություն հոգևոր ճեմարանում.**—Նույնը օրը, երեկոյան ժամը 18-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությանց արահում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի է ունենում հորեյանական հանդիսություն՝ նվիրված ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի վերաբացման 25-ամյակին:

Հանդիսությանը ներկա են՝ Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը, մայրավանքի պաշտոնեությունը, մտավորականներ և այլ հրավիրյալներ, որոնց թվում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Թեհրանի հայոց թեմական խորհրդի ատենապետ Վահրամ Դավիթխանյանը իր հարգելի տիկնոջ հետ:

Հանդիսությունը բացվում է ՀՄՄՀ պետական հիմնի նվազով: Այնուհետև հոգևոր ճեմարանի երգչախումբը կատարում է «Ճեմարանի քայլերգ»-ը:

Բացման խոսքով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Ծնորհք վրդ. Գասպարյանը և ներկայացնում է ճեմարանի

րանի կատարած դերը, անցյալում և ներկա-  
յիս հայ հոգևորական մատաղ սերնդին  
դաստիարակելու, հայ եկեղեցուն սպասա-  
վորներ պատրաստելու սուրբ գործում:

Հանուն ճեմարանի ուսանողության ելույթ  
է ունենում Գ լսարանի ուսանող Արտաշես  
Մուշեղյանը, որը և կարդում է հետևյալ ե-  
րախտագիտության և շնորհակալության ու-  
ղերձը.

«Վեհափառ Տեր.

Ա. Էջմիածնի հոգևոր ճեմարանի վերա-  
բացման 25-ամյակի ուրախալի առիթով,  
մենք՝ հոգևոր ճեմարանի ուսանողներս, մեր  
սրտագին խոսքն ենք բերում, ի խորոց  
սրտի, սույն հանդիսությանը:

Այսօր կանգնել ենք պատմական մի հան-  
գրքվանի առաջ՝ մեր երախտագիտությունն  
ու հարգանքը բերելու ճեմարանի անցած  
25-ամյա գործունեությանը, հոգևոր և մտա-  
վոր ծառայության սուրբ գործին:

Անցյալ դարերում մեր ժողովրդի մտավոր  
գարգացման պատմության մեջ լուսավոր  
դեր են կատարել մեր հոգևոր ճեմարաննե-  
րը, որոնց հովանու տակ պատրաստվել են  
նաև մեր եկեղեցու հոգևոր սպասին կանչ-  
ված, ուխտապահ հոգևորականների սքան-  
չելի սերունդներ: Այսօրվա մեր հոգևոր ճե-  
մարանը հարգապատ շարունակությունն է եր-  
բեմնի հայոց աշխարհի հին վարդապետա-  
րանների՝ վերաբացված նույն ծառայության  
և առաքելության համար:

Ահա այս մտածումներով է, որ լուսահոգի  
Գևորգ Զ Չորեքչյան հայրենասեր և ուսում-  
նասեր կաթողիկոսը 1945 թվականին վե-  
րաբացեց հոգևոր ճեմարանը՝ շարունակելու  
համար այն առաքելությունը, որ մեզ կտակ-  
վել էր ս. Մեարպից՝ հոգևոր լույս և իմաս-  
տություն ջամբելու հայ հոգիներին: «Ծանա-  
չել զիմաստութիւն և զխրատ, իմանալ  
զբանս հանճարոյ»:

25 տարիներ են անցել հոգևոր ճեմարա-  
նի վերաբացումից: Գևորգ Զ կաթողիկոսի  
ու մանավանդ ազգիս Վեհափառ Հայրապե-  
տի անմիջական ղեկավարության ներքո,  
հոգևոր ճեմարանը ձգտել է հասնել այն  
սուրբ նպատակին, որի համար նա կյանքի  
էր կոչվել: Ծեմարանը ազգիս Վեհափառ  
Հայրապետի սրտին մոտ հաստատություն է  
եղել, որին Նա շրջապատել է Իր հայրապե-  
տական սիրով և հոգատարությամբ:

Մենք՝ այսօրվաններս, մեր սրտի թելա-  
դրանքով եկել ենք այս նվիրական հաստա-  
տությունը՝ մեր վարդապետների և դասա-  
խոսների աշխատանքով մեր կորդացյալ և  
խուպանացյալ հոգիները կրթելու և մշակե-  
լու՝ պատրաստվելու համար մեր ապագա

գործունեությանը, որի գաղափարական գե-  
ղեցկությունը ոգևորել ու խանդավառել է  
մեզ:

Անցնող տարիների ընթացքում ինչպես  
նախորդ սերնդի, նաև այժմ մեզ համար,  
Մեարքայան այրուբենի մտավոր սննդի հետ,  
մեզ ջամբվել է նաև Ավետարանի վեհ գա-  
ղափարների և վարդապետության հոգևոր  
այրուբենը:

Մենք սիրեցինք այս հաստատությունը,  
այստեղ կատարվող գործը և զինվորագրվե-  
ցինք Հայաստանյայց եկեղեցու դրոշին՝ մեր  
նախնյաց ոգով և նախանձախնդրությամբ:

Այսօր թեև չկան Գլխաձորի համալսարանը,  
Տաթևը, Արմաշը, բայց կանգուն է հայրենի  
հողի վրա Նոր Գլխաձորը՝ մեր հոգևոր ճե-  
մարանը, որը շարունակությունն է հանդի-  
սանում այդ կանառների եռամեծ վարդա-  
պետների հայրենամայեր առաքելության:

Այսօր մենք հաշվետվության ենք նստած  
25 տարիների վաստակով, վաստակներ, ո-  
րոնք այժմ մեր աչքի առաջ են, մենք տես-  
նում ենք երեկվա ճեմարանականներին, ո-  
րոնք այսօր մեր ուսուցիչներն են, և դա ոգե-  
վորում է մեզ՝ ճեմարանականներին, ու թելա-  
դրում առավել լրջությամբ, խղճի մտոք  
նվիրվել այս հաստատությանը: Լինել ոչ թե  
սուկ ուսանող, այլ հոգևոր ճեմարանի ու-  
սանող, ժառանգավոր: Ամեն մի ճեմարա-  
նականից ակնկալվում է լինել հավատարիմ  
ծառան մեր ազգի և եկեղեցու, անվարտ  
պահել ճեմարանականի անունն ու պատի-  
վը, հավատավոր ուսմամբ և բարոյական ա-  
ռաքինությամբ ձգտել անմատուց լույսին,  
ձգտել առ Աստված՝ ասելով. «Իմաստութիւն  
Հօր Յիսուս, տո՛ւր ինձ իմաստութիւն զբա-  
րիս խորհել և խօսել և գործել առաջի քո  
յամենայն ժամ»:

Վեհափառ Տեր, Ձեր բազում խնամքի և  
հոգատարության դիմաց մեր շնորհակալա-  
կան և երախտագիտական խոսքերը այս ա-  
ռիթով խիստ փոքր են և աննշան: Ծնորհա-  
կալություն ենք հայտնում, որովհետև մենք  
հեռու ենք մեր ընտանիքներից, իսկ Դուք՝  
Հայր եք ամենքիս. մենք սնվում ու մեծա-  
նում ենք այստեղ տարիներով, իսկ Դուք  
միշտ էլ բարեխնամ Հայր եք եղել, և մենք  
օտար չենք զգում մեզ այստեղ: Ձեր հայրա-  
կան անչափ հոգատարության և մեծ սիրո  
համար մենք մեր մատաղ սրտերն ենք բե-  
րում Ձեզ, որպես խոստում և երդում:

Սրտագին շնորհակալության խոսք  
ունենք նաև ճեմարանիս տեսչությանը, դա-  
սախոսական կազմին, որոնք իրենց բոլո-  
րանվեր հոգատարությամբ ձևավորում են  
մեր միտքն ու հոգին՝ մեզ արժանի դարձնե-  
լով ազգի և եկեղեցու ծառայությանը:

Ուսանողության սրտագին այս խոսքը

վերջացնելուց առաջ, ուզում եմ կրկնել մեր ուխտը հանդիսավոր կերպով, մի՛ անգամ ևս, ո՛ւխտ, որ հավերժական Արարատի դիմաց, ս. Էջմիածնի գմբեթների տակ է հնչել: Ուխտ, որ նախնաց գերեզմաններից է արձագանքվել, ուխտ, որ երկնքով ու երկրով է հաստատվել և վերջապես Աստուծո առջև է կատարվել:

Կրկին ու կրկին ուխտում ենք հավատարի՛մ մնալ ս. Էջմիածնին, մեր սուրբ հայրերի նշխարներին, ոգուն և պատգամներին ու խոստանում ենք նրանց առաքինությանն ու սրբությանը ապակառուցում շխտունել:

Ուխտի այս երդման մեջ հավատարիմ մնալու համար հայցում ենք Աստուծո օգնականությունը և Ձեր բարի աղոթքներն ու օրհնությունը Ձեր այս հոգևոր ժառանգավորության վրա»:

Օրվա գլխավոր բանախոսն է հոգևոր անմարանի ավագ դասախոս արժ. տ. Հովհաննես քհն. Մարտիչանը: Տեղ հայրը իր սեղմ, սակայն բովանդակալից զեկուցման մեջ աւում է.

«Վեհափառ Տեղ,

Ս. Էջմիածնի նվիրական այս հարկի տակ, այսօր, հավաքվել ենք հանդիսավորապես տոնելու հոգևոր անմարանի վերաբացման 25-ամյակը: Վերաբացում ենք ասում, որովհետև այսօրվա հոգևոր անմարանը շարունակությունն է Գևորգյան անմարանի, որը առաջին համաշխարհային պատերազմի պայմանների բերումով փակվել էր 1917 թվականին:

1945 թ. տարված մեծ հաղթանակը թշնամու դեմ քարենպաստ պայմաններ է ստեղծում երջանակահիշատակ Տ. Գևորգ Չ կաթողիկոս Չորեքչյանի օրով, ծրագրելու և իրագործելու Էջմիածնում մեր եկեղեցու համար չափազանց կարևոր մի շարք խնդիրներ:

Այս խնդիրներից ամենակարևորը և հրատապը համարվում էր հոգևոր անմարանի բացումը:

Գևորգ Չ-ը նախքան իր ընտրությունը, 1945 թվականի հունիսին «Բարձրագույն հոգեվոր իշխանության քառամյա գործունեության մասին» ազգային-եկեղեցական ժողովին տրված զեկուցագրում ընդգծում է հոգեվոր անմարանի բացման անհրաժեշտությունը:

«Ս. Էջմիածինը որպես համայն հայության կենտրոն, պիտի ունենա բավարար թվով կուսակրոն հոգևորականություն և քահանայություն: Հոգևոր դաս պատրաստող հաստատությունը Մայր Աթոռի հոգևոր անմարանն էր, որը դադարել է գոյություն ունենալ 1917 թվից, որի հետևանքով մեծ կարիք է զգացվում թե՛ կուսակրոն հոգևորա-

կանության և թե՛ քահանայության, մասնավաճ նիտրեմական ներքին թեմերում և Մայր Աթոռում:

Այսօր ի միփթարություն բոլորիս կարող եմ հայտարարել, որ դժվարագույն խնդիրներից մեկը լուծվել է հիմնական կերպով և օրինական եղանակով ս. Էջմիածնին իրավունք է տրված հոգևոր անմարան ունենալ: Ընդհանրապես Խորհրդային Իշխանության հոգաճու և բարյացակամ վերաբերմունքի տրամադրված է մեզ նախկին մատենադարանը, որպես անմարանի շենք, վերանորոգված և հարմարեցված անմարանի համար: Այլև անմարանի պահպանության դժվարությունն էլ մասամբ լուծել է մեր կառավարությունը՝ խոստանալով անմարանին աջակցություն ցույց տալ և արդեն արձակել է անմարանի համար կահ-կարասիք:

Այս հիմնական աշխատանքը կատարելուց հետո, թվում է, թե իրավունք ունեւ լու՛ էս իմ պարտքս կատարեցի: Պատկառելի ժողովիդ է մնում անմարանի տնտեսական ապահովության կարիքը հոգալ» («Էջմիածին», 1946 թ., Հ. 6—7, էջ 8—9):

Էջմիածնի հոգևոր անմարանի բացումը տեղի է ունեցել 1945 թ. նոյեմբերի մեկին: Բացման հանդեսը նախագահել է տ. Ներսես եպիսկոպոս Աթրահամյանը: Ողջունի խոսքով հանդես եկ կել է տ. Ռուբեն եպիսկոպոս Դրամբյանը և անմարանի տեսուչ Մինաս Մինասյանը:

Հոգևոր անմարանի 25-ամյա գործունեությունը կարելի է բաժանել 3 հիմնական շրջանների՝


Ա շրջան՝ 1945—1954 թթ.:

Բ փոխանցման շրջան՝ 1954—1955 թթ.:

Գ նոր շրջան՝ 1955 թ. մինչև մեր օրերը:

Հոգևոր անմարանի գործունեության առաջին շրջանում հոգևոր անմարանի տեսուչ է նշանակվում Մինաս Մինասյանը: 1945—1946 ու. տարում նորաբաց անմարանը ունեցել է առաջին դասարան 35 սաներով: Պարզ է, որ առաջին տարում նորաբաց անմարանը կանգնած կլիներ որոշ դժվարությունների առաջ, ոչ միայն պետք է լուծվեին շենքի վերանորոգության, գրեմական պիտույքների, ննջարանային պարագաների, հագուստեղենի, վատելանյութի, սննդի հայթայթումը, այլև անհրաժեշտ էր անմարանը ապահովել որակյալ դասախոսական կազմով և մշակել նոր ուսումնական ծրագրեր:

Այդ օրերին և հետագա տարիներին հոգեվոր անմարանում դասախոսելու համար հրավիրվում են բազմաթիվ դասախոսներ, որոնց թվում կարելի է նշել դոկտ.-պրոֆ. Առաքել Առաքելյանի, դոկտ.-պրոֆ. Աշոտ Աթրահամյանի և պրոֆ. Լևոն Սիմյոնովի անունները:



Էջմիածին. Հոգևոր նեմարանի շենքը

1950—51 ուս. տարում հոգևոր ճեմարանը տալիս է իր առաջին հունձքը՝ վեց շրջանավարտներ:

Գևորգ Զ կաթողիկոսի սկսած գործը շարունակվում է մինչև նրա մահվան թվականը:

Հոգևոր ճեմարանը ունենում է իր շատ կարճ միամյա փոխանցման շրջանը: 1954—55 ուս. տարում ճեմարանի տեսուչ է նշանակվում Մարտիրոս Տեր-Ստեփանյանը, որի տեսչության օրոք նույն ծրագրով և դասախոսական կազմով ճեմարանում շարունակվում է ուսումնական աշխատանքը:

1955 թ. հոկտեմբերի 2-ին Մայր Աթոռ ս. Էջմիածնի հայրապետական գահի վրայից վերանում է սգո քողը և ազգրևտիք Հայրապետը՝ Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը, բազմում է այդ գահի վրա: Սկսվում է մի նոր շրջան հոգևոր ճեմարանի պատմության մեջ:

Ազգիս Վեհափառ Հայրապետի մտահոգությունն է լինում իր բարձրության վրա տեսնել հոգևոր ճեմարանը, տեսնել իր բարձր կոչման արժանի հոգևորական նոր սերնդի աճն ու զարգացումը: Վեհափառ Հայրապետի գահակալությունից անմիջապես հետո, Նրա ցուցումներով մասնավոր ուշադրություն է դարձվում ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի ուսումնական ծրագրի բարեփոխման և դասավանդման մեթոդների և դասախոսական կազմի որակավորման վրա:

Հոգևոր ճեմարանը Վեհափառ Հայրապետի արտին մոտ հաստատություն է ո՛չ միայն որպես Հայրապետի, այլև որպես մանկավարժի: Հակառակ իր բազմազբաղ լինելուն, Նա բարեհաճեց իր գահից իջնել և ճեմարանի դասախոսական կազմի գլուխը կանգնել այս նոր շրջանում:

Վեհափառ Հայրապետի մտահոգությունը եղավ առաջին հերթին տեսչի պաշտոնը վստահել բարձրաստիճան մի հոգևորականի: Այս պատճառով 1956—57 ուս. տարում ճեմարանը չունեցավ իր տեսուչը:

1957—64 ուսումնական տարիներին, շուրջ 7 տարի, հայրական հոգատարությամբ ու ձեռնհասությամբ վերատեսչի պաշտոնը վարեց Կ. Հակվազուն արքեպ. Աբրահամյանը:

1964—65 ուս. տարում հոգևոր ճեմարանի տեսչի պարտականությունները կատարեցին Կ. Հովհաննես քհն. Մարությանը և Արթուր Հատիտյանը:

1965—69 ուսումնական տարիներին ճեմարանի տեսչությունը վստահվեց Մայր Աթոռի երիտասարդ միաբան, հոգևոր ճեմարանի նախկին սան Կ. Ներսես Ժ. վրդ. Պոզապալյանին, որը երիտասարդական կորովով ու նվիրումով չորս տարի վարեց այդ պատասխանատու աշխատանքը:

Նոր պաշտոնի նշանակվելու կապակցությամբ, Ներսես Ժ. վարդապետին փոխարինեց արտասահմանից հրավիրված Կ. Շնորհք վրդ. Գասպարյանը, որը 1969 թ. սեպտեմբերից վարում է այդ պաշտոնը բարեխղճությամբ ու սիրով:

Վեհափառ Հայրապետը Հայաստանյայց եկեղեցու վերականգնման, զորացման և կազմակերպման աշխատանքներում մեծ հույսեր է կապել հոգևոր ճեմարանի գոյության և նպատակների հետ: Վեհափառ Հայրապետը իր սրբատառ առաջին կոնդակում, անդրադառնալով հոգևոր ճեմարանին վիճակված մեծ ու պատասխանատու դերին, գրում է.

«Հայրական հոգածությամբ պիտի հետևի լինի ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի մակարդակի բարձրացման, որպեսզի ան առավելագույն չափով արդարացնի իր գոյությունը, և այսօրվան մեր համեստ ու երկչոտ պատանիները, տարիներ հետո, մարմնով աճած ու հոգով զինված, հավատքով և շնորհներով լի, նվիրյալ մշակներ դառնան Տիրոջ Այգիին մեջ»:

Եվ ապա 1956 թ. սեպտեմբերի 9-ին, ճեմարանի նոր ուսումնական տարվա բացման առիթով, Վեհափառ Հայրապետը իր օրհնության խոսքում շեշտում է. «Մենք կհավատանք, որ մեր գործը սուրբ և աստվածահաճո գործ է... Մենք այստեղ կհետապրնդենք հատուկ նպատակ մը, դուք պիտի դառնաք Քրիստոսի այգիին, անոր եկեղեցիին ճշմարիտ մշակները, հայ եկեղեցիի հավատարիմ սպասավորները. հոգևորականի համեստ սքեմին տակ, դուք պիտի դառնաք հայ հավատացյալ ժողովուրդին հոգևոր միխթարություն բաշխող անձնավորություններ: Մենք, ձեր մտքի, արտի, հոգիի ուժերը պիտի հավաքենք մասնիկ առ մասնիկ, զորացնելու համար մեր ս. եկեղեցին»:

Այս շրջանում դասախոսելու հրավիրվեցին դոկտ.-պրոֆեսորներ Արարատ Լարիբյանը, Վարազ Առաքելյանը, Կարո Ղաֆաղարյանը և դոցենտ Համո Հարությունյանը: Այսօր մեր դասախոսական կազմում ունենք 12—20 տարվա վաստակ ունեցող դասախոսներ, որոնցից Արթուր Հատիտյան՝ 20 տարի, Պ. Շահբազյան և Կ. Հովհ. քհն. Մարության՝ 15 տարի, գեր. Կ. Հակվազուն արք. Աբրահամյան, պրն. Գրիգոր Գյուլյան և դոցենտ Սամվել Անթոնյան՝ 12 տարի, որոնք իրենց մյուս պաշտոնակիցների հետ միասին, իրենց իմացական և հոգեկան կարողությունները որպես սնունդ մատուցեցին և շարունակում են մատուցել հոգևոր ճեմարանի սաներին:

Այս շրջանից հոգևոր ճեմարան են գալիս նաև ուսանողներ հայ սփյուռքից, հատկա-

պես Լիբանանից, Սիրիայից, Իրաքից և Ռումինիայից: Այսպիսով հոգևոր ճեմարանը դառնում է համահայկական կրոնական ուսումնական մի կենտրոն:

Առաջին անգամ լինելով այս շրջանին մեր շրջանավարտ ուսանողներից շատերը, նույնիսկ Հայաստանի քաղաքացի ուսանողներ իրենց ուսումը կարողանում են շարունակել Անգլիայի և Ժնևի կրոնական բարձրագույն աստվածաբանական հաստատություններում: Նրանցից շատերը այսօր արդեն կրոնական սքեմ են հագել և սպասավորում են մեր հավատացյալ ժողովրդին:

Սիրելի հանդիսականներ, մեզանից յուրաքանչյուրը շատ լավ գիտի, թե Էջմիածինը մեր դարավոր պատմության մեջ ինչպիսի դեր է խաղացել: Չկա մեր պատմության մեջ մշակութային, կրոնական, լուսավորական և առաջադիմական մի շարժում, որին մասնակցած և գլխավորած չլինի Ամենայն Հայոց Հայրապետությունը: Մենք Էջմիածնի գոյության մեջ տեսնում ենք մեր ժողովրդի կենսունակությունը, իսկ Էջմիածնի կենսունակության աղբյուրը հայրենի հողն է, մեր ժողովրդի հավատքն ու հայրենասիրությունը:

Ս. Էջմիածնի հոգևոր դպրանոցը գոյություն է ունեցել դեռևս 5-րդ դարից: Ս. Էջմիածինը՝ հին Վաղարշապատ քաղաքը, ինուց ի վեր եղել է հայ ժողովրդի քաղաքակրթական և կրոնական կենտրոնը: Այստեղ է նստել կաթողիկոսը և այստեղ է հիմնադրվել քրիստոնեական առաջին հոգևոր դպրոցը, որտեղ եկել են իրենց ուսումն առնելու պատանիներ Հայաստանի այլևայլ գավառներից: Սուրբ Մեսրոպ Մաշտոցի կենսագիրը՝ Կորյունը, գրում է այս մասին. «Ի կողմանց և ի գաւառաց Հայաստան աշխարհի, յորդեալք և դրդեալք հասանէին ի բացեալ աղբիւրն գիտութեան Աստուծոյ, քանզի յԱրարատեան գաւառին բոխեցին հայոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ»:

Թող գարմանալի չթվա ձեզ, երբ գուգահեռ ենք անցկացնում 5-րդ դարի և մեր այսօրվա կյանքի միջև, որովհետև հավատում ենք, որ հայ ժողովրդի ինչպես գիտության, այնպես էլ հավատքի լույսը պիտի բոխի ս. Էջմիածնից և Հայաստան աշխարհից: Մեր ժողովրդի մի մասը բնավեր դարձած այսօր, հայրենի հողից կտրված՝ սփյուռքի պայմաններում գոտեմարտ է մղում իր ֆիզիկական գոյության համար: Եվ ամեն մի հայ, որը կտրված է իր մայրենի հողից և իր հոգևոր կենտրոնից՝ Էջմիածնից, նա դատապարտված է կորստյան: Փաստ է, որ օտար պայմաններում հայ եկեղեցին և հոգևորականությունը իր դիմագիծը փոխելու վտանգի տակ է: Էջմիածնի հոգևոր ճեմա-

րանի բովով անցած սաները պիտի ցույց տան այնպիսի ուղղություն, որպեսզի մեր եկեղեցին իր կրոնական և ազգային դիմագծից չշեղվի:

Հոգևոր ճեմարանը իր 25-ամյա գոյության ընթացքում շեշտը դրել է կրոնաշունչ և հայեցի դաստիարակության վրա: Եթե մինչև նոր շրջանը, այսինքն մինչև 1955 թ., ճեմարանը գտնվում էր նյութական որոշ դժվարությունների առաջ, ապա նոր շրջանում մեկընդմիջտ լուծվել է այդ հարցը: Այս առիթով մեր շնորհակալական խոսքը կուղղենք մեր բոլոր բարերարներին, որոնք իրենց նյութական աջակցությամբ թեթևացրին Վեհափառ Հայրապետի հոգսերը:

Կրոնաշունչ և հայեցի դաստիարակությամբ նոր սերունդ պատրաստելը հեշտ գործ չէ: Պատկերացրեք սփյուռքի տարբեր գաղթօջախներից, Հայաստանի տարբեր շրջաններից և եղբայրական մյուս հանրապետություններից եկած ուսանողները մի հարկի տակ: Ամեն մեկը մի հոգեբանությամբ, կրոնական և հայագիտական գիտելիքների տարբեր պաշարով: Նրանց մի հունի մեջ բերել, միակամ դարձնել, նույն տեսիլքով ու հավատքով խանդավառել այնքան էլ հեշտ չէ: Հոգևոր ճեմարանի տեսչությունը, այս վերջին 15 տարվա ընթացքում, իր կարելիին արեց դասախոսական կազմի հետ միասին, որի գլուխը միշտ կանգնած է մեր սիրելի Հայրապետը, մեր սաների մեջ աշխատասիրություն, կարգապահություն և սեր դեպի Մայր Աթոռ ս. Էջմիածինը սերմանելու համար:

Վեհափառ Հայրապետը 25 հունիսի 1957 թ. ամսվերջի հանդեսի օրը Իր խոսքի մեջ ասում էր.

«...Դուք պետք է գիտություն ամբարեք անհագ ծարավով և սիրով, մանավանդ երեք ուղղությամբ պետք է լավ գիցվիք. ա) սրբազան գիտելիքներով, բ) հայերենով և գ) հայ ժողովրդի պատմությամբ: Դուք ոչ միայն պետք է սորվիք այն բոլորը, այլ տիրապետեք անոնց. հայոց պատմությունը ճեմարանցիի համար, պետք է ըլլայ երկրորդ Ավետարան: Տարիներ հետո, երբ դուք քարոզեք մեր ժողովուրդին, ձեր մեկ ձեռքին պետք է ունենաք Հիսուսի Ավետարանը, իսկ մյուս ձեռքին, հայոց պատմության գիրքը»: Եվ այսպես շարունակում է.

«Այս բոլորեն վերջ, Մենք կապահանջենք նաև ձեզմե ճշմարիտ ժողովրդասիրություն և անկաշառ ու անմահանջ հայրենասիրություն»:

Այս նպատակների իրականացման ոգով են կազմված հոգևոր ճեմարանի ուսումնական և արտադասարանական աշխատանքների ծրագրերը:

Ինչպիսի՞ն է հոգևոր ճեմարանի 25-ամյա հունձքը:

25 տարին կարճ մի շրջան չէ սերունդ հասցնելու համար: 1945 թ. մինչև մեր օրերը կատարված աշխատանքները իզուր չեն անցել: Այս շրջանում ճեմարան են ընդունվել շուրջ 400 սաներ, որոնցից շուրջ 50-ն են ավարտել միայն, սակայն արդար լինելու համար պետք է ընել, որ հոգևորական ասպարեզ չընդգրկվող շրջանավարտներից և թերավարտներից շատերը կյանքում չեն կորել, նրանք գիտության և այլ բնագավառներում աշխատում են՝ այլ կերպ հատուցելով իրենց պարտքը ժողովրդին: Նրանք իրենց հետ Էջմիածնի շունչն են տարել:

Ինչպես տեսնում ենք հունձքը շատ համեստ է, այնուամենայնիվ պիտանի՝ լցնելու համար այն բացը, որ տիրում է հայ եկեղեցու ապաստվորների շարքերում: 25 տարվա ընթացքում հոգևոր ճեմարան ավարտողներից այժմ ունենք 4 եպիսկոպոսներ, 10 վարդապետներ, 8 քահանա հայրեր և 15 ապակավագներ:

Համեստ այս արդյունքը մեզ ներշնչում է այն հավատքը, որ հոգևոր ճեմարանը հետագայում ավելի արդյունավետ է լինելու: Հայրենի երկրում և ափյուրքում ապրող մեր ժողովուրդը աչքի լույսի պես պետք է պահպանի ու Էջմիածինը և նրա հոգևոր ճեմարանը, որովհետև, եթե Ամենայն Հայոց Հայրապետությունը մեր եկեղեցու ուղեղն է, ապա նրա սիրտն է հանդիսանում Էջմիածնի հոգևոր ճեմարանը:

Ամենայն Հայոց հայրենիքը՝ Սովետական Հայաստանը, Ամենայն Հայոց Մայր Աթոռ ու Էջմիածինը լինելով համայն հայության համար հույսի, կյանքի, գոյատևման խորհրդանիշ, հայ ժողովուրդը չի կարող չունենալ ամենայն հայոց հոգևոր ճեմարան, որը պետք է լինի յուրաքանչյուր հայի գուրգուրանքի սուարկան:

Հայրենի կառավարությունը ազատ ասպարեզ է տվել ճեմարանի գոյատևման և արդյունավորության համար. այս առթիվ մեր երախտագետ շնորհակալությունները մեր կառավարության և եկեղեցական գործերի կոմիտեի նախագահ մեծահարգ տիար Սարգիս Գասպարյանին:

Մնում է գիտակցել, որ անհրաժեշտ է ազգի լավագույն զավակներին ուղարկել Էջմիածնի հոգևոր ճեմարան, որպեսզի նրանց հոգին դարբնվի հայրենաշունչ ու կրոնաշունչ դաստիարակությամբ, որպեսզի նրանք դառնան «մշակ առանց ամօթոյ» հայրենիքի և եկեղեցու ու Սեղանների վրա սպասավորելու համար:

Վեհափառ Տեր, կարծեք ուխտի ժամն է այսօր և մի անգամ ևս ամբիոնից ընդօգնե-

լու առիթ, որ հոգևոր ճեմարանի տեսչությունը, դասախոսական կազմը և մեր սիրելի սաները գիտակցում են իրենց դժվարին գործը: Տիրոջ օգնականությամբ և Ձերդ Սրբության օրհնությամբ պիտի կարողանանք մեր ժողովրդի երազները և ցանկությունները իրականացնել:

Սերունդներ և, ինչու չէ՞ նաև հայրապետներ իրենց անունները ոսկե տառերով գրել են պատմության մեջ իրենց շինարար աշխատանքներով, մշակութային արժեքներ ներկայացնող մնացում գործերով և արժանի սերունդ դաստիարակելով: Հավատում ենք, որ մոտիկ ապագայում ու Էջմիածնի, Նրուսաղեմի և Անթիլիասի հոգևոր դպրոցներում հասակ պիտի առնեն նորանոր սերունդներ, որոնք բարձր պիտի պահեն իրենց հայրերի հավատքի և հայրենասիրության դրոշմը: Նրանք պիտի լինեն ավանդապահ, նախանձախնդիր հոգևորականներ:

Սիրելի սաներ, այսօր մեր եկեղեցուց կենդանի նախատակությունն չի պահանջվում, բայց դժվարություններ ամեն մի քայլափոխին մեզ են սպասում: Ձեզ են ուղղված մեր հայացքները, ձեզ է նայում Ամենայն Հայոց Հայրապետը, ձեզ է նայում ամբողջ հայ ժողովուրդը: Արդարացրեք ձեր պատերի հույսերը, որպեսզի ամօթով չմնաք պատմության դատաստանի սուաջ: Եղեք արթնամիտ, ուսումնաստենչ, հավատավոր, կրոնի և հավատարիմ ձեր հայրերի լույս հավատքին: Սիրեցեք ձեր եկեղեցին, ժողովուրդը և հայրենիքը: Ապագան ձեզ է սպասում:

Թույլ տվեք, Վեհափառ Տեր, հոգևոր ճեմարանի 25-ամյակի կապակցությամբ Ձեզ մաղթել քաջաողջություն, հաջողություններ Ձեր հետագա գործունեության համար: Եվ որպես հավատարմությամբ և ուխտի նշան, տեսչության և դասախոսական կազմի կողմից, թույլ տվեք համբուրել Ձեր ու Աջը սակտվ:

Վեցցե՛ Մայր Աթոռ ու Էջմիածինը:  
Վեցցե՛ Ամենայն Հայոց Հայրապետությունը:

Եվ կեցցե՛ Ամենայն Հայոց հոգևոր ճեմարանը:

Հանդիսության ժամանակ ողջույնի խոսքով հանդես է գալիս նաև շուրջ 45 օրեր ուխտավորաբար Մալր Աթոռում գտնվող պրոֆ. Հ. Մ. Սիրունին:


Այս հոգևոր ճեմարանի երգչախումբը կատարում է «Նմանեալ Մովսիսի», «Որք զարդարեցին» շարականները և «Երևան քաղ եմ արել» (Կոմիտաս), «Ծաղկիր, ազատ իմ հայրենիք» (Ա. Այվազյան), «Էրեքունի» (Է. Հովհաննիսյան) խմբերգերը: Գ լսարանի ուսանող Ս. Գոնտրապյանը ապ-

րումով արտասանում է Սիամանթոյի «Գյուտին փառքը» ստեղծագործությունից մի հատված, Գ դասարանի ուսանող Մ. Մարգարյանը՝ Ս. Կապուտիկյանի «Երդում հայոց լեզվին» արձակ բանաստեղծությունը:

Հակոբ և Վարդան սարկավագները դաշնամուրի վրա կատարում են երկու հատված Արամ Խաչատրյանի «Գայանե» քալետիզ, իսկ Արարատ և Հակոբ սարկավագները՝ Բրամսի «Հունգարական պար»-ը:

Վերջում ելույթ է ունենում Վեհափառ Հայրապետը, չափազանց ուսանելի խրատներ ու խորհուրդներ է տալիս ուսանողներին, ինչպես նաև՝ Իր հայրական օրհնությունը բաշխում դասախոսական կազմին, ուսանողությանը և բարեմաղթություններ անում հոգևոր ճեմարանի ապագայի էլ՝ ավելի արդյունավետ գործունեության համար:

Հանդիսությունը վերջանում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով:





## ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՕՐԱԳԻՐԸ ԵՎ ՀՈՒՇԵՐԸ

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի (Մատենադարան) արխիվային բաժնում պահվում է նշանավոր հայագետ (Կիլիկիայի նախկին կաթողիկոս) Գարեգին Հովսեփյանի (1867—1952 թթ.) արխիվային ֆոնդը: Բազմաթիվ արժեքավոր վավերագրերի հետ միասին, ֆոնդում պահվում է նաև Գ. արք. Հովսեփյանի 1917—1921 թվականներին գրած օրագիրը և հուշերը, որը կարելի է բաժանել երեք մասի: Առաջին մասը՝ Գ. արք. Հովսեփյանի կողմից 1917 թվականի մարտի 9-ից մինչև նույն թվականի հուլիսի 15-ը Մոսկվայում, Պետերբուրգում (այժմ Լենինգրադ) և հայրենակ այլ վայրերում՝ Էջմիածնի ձեմարանի, Էջմիածնում թանգարան հիմնադրելու, գիտական հրատարակություններ կազմակերպելու և Արևմտահայաստանից թուրքական կոտորածներից Արևելահայաստան փախած հայերին օգնելու համար հայ կապիտալիստներից գումար հանգանակելու նպատակով՝ հիշյալ վայրերում Գ. արք. Հովսեփյանի կողմից կատարած աշխատանքների վերաբերյալ գրած օրագիրն է, որը պարունակում է հայ-նուս ժողովուրդների գիտական, գրական, քաղաքական կապերի, ժամանակի քաղաքական իրադարձությունների և այլ հարցերի վերաբերյալ արժեքավոր փաստեր: Երկրորդ մասը՝ 1920 թվականի հոկտեմ-

բերի 30-ից մինչև նույն թվականի վերջերին Կարսում գերության մեջ եղած ժամանակի վերաբերյալ Գ. արք. Հովսեփյանի կողմից մատիտով, խտոր և դժվարբերելու գրած օրագիրն է, իսկ երրորդ մասը՝ 1921 թվականի հունվարի 19-ին Գ. արք. Հովսեփյանի կողմից Սարիղամիշից Կարս, ապա մարտի 21-ին Կարսից Ալեքսանդրապոլ (այժմ Լենինական) և ապրիլի 2-ին Ալեքսանդրապոլից Խորհրդային Հայաստան կատարած փախուստի մասին գրած հուշերն է:

Գ. արք. Հովսեփյանի օրագրի առաջին մասի վերաբերյալ 1968 թվականի օգոստոսի 9-ի «Գրական թերթ»-ի 32-րդ համարում մի հոդված հրատարակեց Մատենադարանի գիտ. աշխատող Ա. Բյուշեղյանը: Գ. արք. Հովսեփյանի օրագիրը և հուշերը ամբողջացնելու և դրանց մասին ընդհանուր խոսք ասելու համար մենք կանգ ենք առնելու Կարսում գրած օրագրի և Էջմիածնում գրած նրա հուշերի վրա:

1920 թվականի սեպտեմբերի 18-ին բեմադրական Թուրքիան Օլթիի ուղղությամբ հարձակվում է դաշնակցական Հայաստանի վրա և սկսում է առաջ շարժվել դեպի երկրի խորքը: Թուրքական զերազանց ուժերին դիմադրելով նահանջում է հայկական զորքը: Թուրքերը գրավում են Օլթին, Արդահանը, Սարիղամիշը, Կաղզվանը և մոտենում Կարսին: Վերոհիշյալ վայրերի հաջնակցություն-

նը փախչում և հավաքվում է Կարսում, իսկ մի մասն էլ անցնում է Հայաստանի խորքերը կամ Վրաստան և այլ վայրեր:

1920 թվականի հոկտեմբերի 30-ին, առավոտյան ժամը 10-ին, թուրքական բանակը Կարսի հարավ-արևելյան կողմից ներխուժում է Կարս և կտրում դեպի Ալեքսանդրապոլ (այժմ Լենինական) տանող երկաթուղու և խճուղու ճանապարհները և բարձրանում Կարսի անտիկ բերդը:

Ժողովուրդը փախչում է Կարսի հյուսիս-արևմուտքում գտնված Չոր կոչվող վայրը, որտեղից մի ուրիշ խճուղի է գնում դեպի Ալեքսանդրապոլ: Այդ ժամանակ Կարսում է լինում Գարեգին արք. Հովսեփյանը, որը նույնպես փախչում է Չոր և գերի ընկնում:

Գերության մեջ եղած ժամանակի վերաբերյալ Գ. արք. Հովսեփյանը գրել է իր օրագիրը, որի մի մասը հետագայում որպես հուշ տպագրել է «Կյանքիս ամենադժբախտ օրը և երջանկությանս թուպեն» խորագրով հոդվածում, որ հրատարակվել է 1943 թվականին Բոստոնում լույս տեսած «Պայքար նոր տարվա բացառիկ» վերնագրով ժողովածուում: Տպագրված հուշերում Գ. արք. Հովսեփյանը գրում է, որ ինքը և հայ մի քանի գիտնականներ զբաղված են եղել հայագիտական աշխատանքներով, երբ Թուրքիան 1920 թվականին հարձակվում է Հայաստանի վրա: Իրենք թողնում են աշխատանքը, շտապ մեկնում Կարս և 1920 թվականի սեպտեմբերի վերջերին ներկայանում Կարսի ռազմաճակատի զորահրամանատար գեներալ Դանիել Բեկ Փիրումյանին (1863—1922 թթ.) և առաջարկում իրենց ծառայությունները հայրենիքի փրկության գործում<sup>1</sup>: Դ. Փիրումյանը սիրով ընդունում է նրանց, ապա համապատասխան հանձնարարություններ տալով ուղարկում ռազմաճակատ: Գ. արք. Հովսեփյանը ձի նստած մեկնում է: Նա լինում է Սարիղամիշի և այլ ռազմաճակատներում: Օրհնում հայ զինվորներին, ոգեշնչում և հաղթանակի կոչ անում նրանց և զինվորների հետ կրում բոլոր դժվարությունները, ապա Դ. Փիրումյանի կարգադրությամբ վերադառնում Կարս, շրջում հայկական որբանոցներում, հիվանդանոցներում և օգնում, խրախուսում նրանց: Երբ թուրքական բանակը ներխուժում է Կարս, ինչպես նշեցինք, Գ. արք. Հովսեփյանը ժողովրդի հետ փախչում է Կարսի Չոր կոչված վայրը, տեսնում խուճապի մատնված փախչող ժողովրդին և հայ զինվորներին, զայրացած հարձակվում փախչող զինվորների վրա:

Այդ մասին նա գրում է. «Կատաղությունից և հուսահատությունից ձեռքիս հաստ փաչտով մի քանի անգամ հարված տվի փախչող զինվորներին»<sup>2</sup>: Ապա վազում Չորում տեղավորված հայկական շտաբը՝ գեներալ Դ. Բեկ Փիրումյանի մոտ և ասում. «Գեներալ, որևէ հույս ունե՞նք ինքնապաշտպանության»:

«Ոչ, կորած ենք»: Գեներալը դիմելով Գ. արք. Հովսեփյանին ասում է. «Սիրազան, մի բան պետք է դուք փորձեք, անձամբ պետք է բերդի գլուխը բարձրանաք և հայտնեք մեր անձնատվությունը: Այդ պիտի կատարեք ժողովրդի կյանքը փրկելու համար»<sup>3</sup>: Գ. արք. Հովսեփյանը իր հետ վերցնելով գնդապետ Վահան Տեր-Առաքելյանին և մի օտաչու սպայի, ապա սպիտակ սավանը ամրացնելով մի ձողի, նստում է կառք, պարզում սպիտակ դրոշակը և գնում դեպի բերդի բարձունքը: Ծանապարհին նրանց շրջապատում են թուրք զինվորները՝ մի սպայի դեկավարությամբ, որոնք նրանց տանում են իրենց գնդապետի մոտ: Սրբազանը դիմելով նրան ասում է. «Փաշա (գնդապետի աստիճան ուներ կարծես), պատերազմի մեջ ենք, հաղթել կա և հաղթվել, մենք հաղթված ենք և եկել ենք հայտնելու, թե մենք անձնատուր ենք լինում: Ահա այնտեղ մեր հայ զինվորներին շրջապատել են ձերոնք, կսպանե՞ք, գերի կվերցնե՞ք, ձեր գիտելիքն է, բայց Չորը, տեսնում եք լցված է հասարակ բաղաբացիներով, կանաչք, անմեղ երեխաներ, այնտեղ են մեր որբանոցները: Զինվորականը որքան քաջ, նույնչափ վեհանձն, գթոտ պիտի լինի: Դիմում ենք ձեր մարդասիրությանը և խնդրում դադարեցնել կրակը»<sup>4</sup>:

Գնդապետը քիչ մտածելուց հետո, կարգադրում է դադարեցնել կրակը: Գ. արք. Հովսեփյանը խնդրում է գնդապետին, որ գնա Չոր՝ հայոց գործի հրամանատարի մոտ. նա ասում է, որ թող նա գնա իրենց ընդհանուր հրամանատարի մոտ: Գ. արք. Հովսեփյանը էրք նրան բացատրում է, որ նա

Գնդապետը քիչ մտածելուց հետո, կարգադրում է դադարեցնել կրակը: Գ. արք. Հովսեփյանը խնդրում է գնդապետին, որ գնա Չոր՝ հայոց գործի հրամանատարի մոտ. նա ասում է, որ թող նա գնա իրենց ընդհանուր հրամանատարի մոտ: Գ. արք. Հովսեփյանը էրք նրան բացատրում է, որ նա

<sup>1</sup> Գեներալ Դանիել Բեկ Փիրումյանը եղել է 1918 թվականի մայիսի 22-ի Սարդարապատում թուրքական բանակի դեմ կռվող հայկական բանակի գնդապետը: Բաջաբար կռվելու և թուրքերին հաղթելու համար գնդապետ Դ. Փիրումյանը պարգևատրվում է շքանշանով: Այդ ճակատամարտին մասնակցում է նաև Էջմիածնի միաբանության անդամ Գ. արք. Հովսեփյանը, որը նույնպես պարգևատրվում է շքանշանով: Գնդապետ Դ. Փիրումյանը և Գ. արք. Հովսեփյանը այդտեղ ծանոթանում են իրար հետ:

<sup>2</sup> «Կյանքիս ամենադժբախտ օրը և երջանկությանս թուպեն», «Պայքար նոր տարվա բացառիկ», էջ 208, 1943 թ., Բոստոն:

<sup>3</sup> «Պայքար նոր տարվա բացառիկ», էջ 209:

<sup>4</sup> «Պայքար նոր տարվա բացառիկ», էջ 210:

ավտովթարից վիրավորված է, չի կարող քայլել, գնդապետը պահանջում է նամակ գրել մրան և հայտնել իր առաջարկը: Գ. արք. Հովսեփյանը երկտող է գրում գեներալ Դանիել Բեկ Փիրումյանին, տալիս իր հետ եկողներին և կատրով ուղարկում գեներալի մոտ: Գեներալը իսկույն նստում է կառք և շտապ գնում թուրքական բանակի հրամանատարի մոտ, ապա վերադառնում և հայտնում է, որ համաձայն թուրքական բանակի ընդհանուր հրամանատարի կարգադրության ժողովուրդը պիտի վերադառնա քաղաք՝ իրենց տները, իսկ զինվորականները պիտի հավաքվեն նշանակված տեղերը և սպասեն կարգադրության: Սրբազանը իջնում է Չորը և այնտեղ հավաքված ժողովրդի հետ գնում քաղաք: Ծանապարհին նա սրտի կսկիծով տեսնում է հայ զինվորների և քաղաքացիների նկատմամբ թուրք զինվորների և խուժանի կողմից կատարած բռնությունները և սպառնությունները:

Գ. արք. Հովսեփյանը որպես հայրենասեր, միշտ պատրաստ է եղել կովել հայրենիքի փրկության համար: Կարսի անփառունակ անկումը նրա վրա ծանր և անջնջելի տպավորություն է թողնում: Նա զարույթով է լցվում դեպի հայկական կառավարությունը և ռազմական գործիչները, որոնք առանց կովի թուրքերին հանձնեցին Կարսի անառիկ բերդը:

Այդ մասին նա գրում է.  
 «Ազգերի պատմության մեջ դժվար է գտնել այնպիսի խայտառակ պարտություն, ինչպիսին մերն էր այդ օրերին... լավ կհամարեինք մի քանի հազար կոտորվեինք բերդի տակ, բայց պաշտպանելով մեր հայրենիքը, քան անարգ փախստյանք փրկեինք մեր կաշիները»<sup>5</sup>:

Չորից քաղաք գնալիս Գ. արք. Հովսեփյանը հանդիպում է մի երիտասարդի, որը նրան առաջարկում է գնալ իրենց տուն: Նրանք տեղավորվում են հայրափառա կոչված թաղամասում, հիշյալ երիտասարդենց տանը: Ամեն գիշեր թուրք խուժանը մտնում է հալերի տները, կողոպտում, անարգում բնակիչներին, ոմանց սպանում: Կողոպտում են նաև սրբազանի սպրած տան բնակիչներին: Առալոտյան Գ. արք. Հովսեփյանը գնում է Կարսում գերի մնացած հայ նշանավոր պաշտոնյաների տները, խնդրում է նրանց, որ գնան Կարսում նոր կազմակերպված թուրք կառավարության ղեկավարների մոտ, խնդրեն, որ հայ բնակչության հետ այդպես չվարվեն: Նա վերցնելով իր հետ մի քանի հայ անձնավորությունների գնում

են Բեքիր փառաչի մոտ, վերջինս թուրք մի զինվորի ուղեկցությամբ նրանց ուղարկում է նահանգապետի մոտ, որը տեղավորված է եղել հայկական շտաբի շենքում: Այդտեղ նրանք տեսնում են գեներալ Դանիել Բեկ Փիրումյանին, գնդապետ Վերջովին, Մինիստր Բաբայանին, գեներալ Արարատյանին, գեներալ Ղազարյանին մի շարք հայ կանաձց և երեխաների: Գ. արք. Հովսեփյանը օրագրում գրում է, որ հիշյալ մագդիկ խիստ մեղադրանքով են խոսել Կարսի գրախրամանատար գեներալ Դանիել Բեկ Փիրումյանի և Կարսի նահանգապետ Ստեփան Ալեքսանդր Դորդաձյանի (1865—1925 թթ.) մասին, որոնք միասնաբար չեն գործել և Կարսի անառիկ բերդը առանց կովի հանձնել են թշնամուն:

Կարսի թուրքական նահանգապետը Գ. Հովսեփյանին և նրա ընկերներին գրություն է տալիս՝ Կարսում ազատ շրջելու: Նրանք այցելում են հայ ընտանիքներին, խոսում և հույս տալիս նրանց:

Կարսը գրավելուց հետո թուրքական կառավարությունը խուզարկում է հայերի բնակարանները, երիտասարդ և աշխատանքի ընդունակ մարդկանց առանձնացնում-տանում բանտ և չնչին սնունդով գիշեր-ցերեկ աշխատեցնում: Ծանր աշխատանքի, վատ պայմանների, ծեծի, խտությունների և թեթառնվելու պատճառով մահանում են ոմանք:

Թուրքական կառավարությունը Կարսում եղած հայ բնակչության քանակը իմանալու, մրանց հանգստացնելու և այլ նպատակների համար կարգադրում է Գ. արք. Հովսեփյանին Կարսի հայկական եկեղեցիների զանգերը հնչեցնել և ժամանակագրություն կատարել: Նա կատարում է այդ կարգադրությունը: Չենք կարող ասել քանի անգամ ժամակարգ կատարելուց հետո թուրքերը փակում են եկեղեցիները:

Գ. արք. Հովսեփյանը շրջում է հայ որբանոցները, հիվանդանոցները, այցելում է հայ ընտանիքներին և հնարավորին չափ օգնում նրանց, հույս տալիս, լուրեր հաղորդում, նորություններ լսում նրանցից:

Նա շատ է հետաքրքրվում Հայաստանի վիճակով, տեղական ժողովրդին օգնելու գործով, նրանց գերությունից ազատելու հարցով և արտաքին աշխարհում տեղի ունեցած իրադարձություններով: Նա ամենաժանր օրերին անգամ հետաքրքրվել և զբաղվել է նաև հայագիտական աշխատանքներով, հայկական ձեռագրերով: Այդ տեսակետից կարևոր է Գ. արք. Հովսեփյանի՝ Կարսում գրած օրագրի այն մասը, որը վերաբերում է Կարսում գերի մնացած բժիշկ Նրզնկյանի կողմից Գ. արք. Հովսեփյանին

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 210:

արժեքավոր մի ձեռագրի մասին հաղորդած լուրը: Նա գրում է. «Երեկոյան բժ[իշկ] Երգրնկյանի մոտ էի և իմացա, որ քաղաքից [Կարսից] ձորք փախչելիս կոտորվում է իրենց ֆուրգոնը, թուրքերն սկսում են հարձակվել, ուստի և կնոջը պատվիրում է, ասեն ինչ թողնել և ոտքով ձորն անցնել, մնում է այնտեղ Ագուլից վաճքի պատկերագարդ ճաշոցը, որը լուր կնոջ պապը տվել էր թոռանը նվեր և հիշատակ: Տված տեղեկություններից [պարզվում է, որ ձեռագիրը գարդարված է եղել] կենդանագրերով, թռչնագրերով և ամբողջ երեսի պատկերներով, բայց ավելի խոշոր գրերով, քան տպագրության տատերն են, արդյոք ավելի վա՞ղ են ԺԳ դար[ից]: Համենայն դեպս շատ հետաքրքրական կլինեն ճաշոցների մանրանկարչության ուսումնասիրության համար: Որչափ այսպիսի թանկագին մատյաններ ոչնչացան այս պատերազմի ժամանակ»<sup>6</sup>: Հայ բնակչության, հատկապես հայ երիտասարդների և նախկին շարքային զինվորների հետ շատ վատ էին վերաբերվում թուրքերը: Նրանց աշխատեցնում են ամենածանր աշխատանքներում, որի համար բողոքում և խոտովություն են բարձրացնում հայ գեղի զինվորները, որոնց հետ կապ է ունեցել Գ. արք. Հովսեփյանը և այդ ժամանակ նա աշխատելիս է եղել հիվանդանոցներում: Նա գրում է. «29-ին հայ զինվորները երթևեկում են 7-րդ հիվանդանոցը, որոնց կերակրեցի, հյուրասիրեցի և ճանապարհ դրի ձորում. 30-ին, շաբաթ. չորս կողմից կրակում էին և զնդակները ընկնում էին հիվանդանոցի առաջ. մի՞չն կեսօր ոչինչ հայտնի չէր, թե ո՞վ է հաղթողը, ժողովուրդը փախչում էր, շատերը աղաչում էին ներս մտնել, բայց ամերիկացիների հրամանով ոչ ոքի ներս չբթողին: Մայրապետները և երեխաները սկսին լալ... երեկոյան ժամը 6-ին մեզ շքրջապատել էին տաճիկ ձիավորները և պահանջում էին դուրը բանալ... Առավոտյան ժամը 9-ին եկան երեք ասկյար<sup>7</sup>, իջա, քաղաքավարի ընդունեցի. առաջարկեցին, թե հայ զինվորներ չկա՞: Ներս մտան... իբրև բժիշկ ձևացա: Իսկ թաքնված տղամարդկանց ներկայացրի իբրև ֆելդշերներ և ծառայողներ, որոնց ձեռք չտվին... Ասկյարները գոհ մնացին և զնացին»<sup>8</sup>:

Գ. արք. Հովսեփյանը գերության մեջ եղած ծանր օրերին զբաղվել է նաև հայ մամուլների, պատանիների, երիտասարդների և որբանոցներում ու հիվանդանոցներում ծա-

ռայողների դաստիարակության և կրթության գործերով: Նա ամերիկյան որբանոցներում դասեր է տվել, բարոյականություն է քարոզել, որբերի կրթական գործին է հետևել, մանկավարժական ժողովներ կազմակերպել և այլն: Նա գրում է. «... դասերին ներկա եղա, փոքր ինչ ծանոթացա պարապմունքներին... Այժմ բոլոր որբանոցների դպրոցների վրա նշանակված է հսկող... Այսօր առաջին անգամ խրատ խոսեցի Բ ճաշարանում, որտեղ գալիս են Ե և Ա որբանոցի սաները և կար անող աղջիկները... խոսեցի երախտագիտության մասին դեպի ծնողները, դեպի հայրենիքին: Ծատ մեծ լուռությամբ ու ուշադրությամբ լսեցին»<sup>9</sup>:

Գ. արք. Հովսեփյանի օրագրից պարզվում է, որ նա մի քանի անգամ դիմել է Կարսի թուրքական կառավարությանը՝ իրեն գերությունից ազատելու և Հայաստան գնալու համար, որին մերժել են: Այդ մասին մա գրում է. «...Չորս օր է աշխատում եմ իրավունք ստանալու Երևան գալու, 22-ին վերջապես իմացա, որ ոստիկանությունը չի արձակում... Այս ծանր մղձավանջից ազատվելուց հույսս դարձյալ խորտակվեց»<sup>10</sup>:

Գ. արք. Հովսեփյանը այստեղ ընդհատում է Կարսում գրած իր օրագիրը և գերության մեջ եղած իր կյանքի հետագա դեպքերը տալիս է 1921 թվականի հուլիսի 14-ին Էջմիածնում գրած իր հուշերում, որը նույնպես կարևոր է մեր կյանքի որոշ էջեր և ժամանակի իրադարձություններ լուսաբանելու համար:

Կարսում եղած հայերի անունից, մի մարդու միջոցով, խիստ գաղտնի նամակ են ուղարկում Սովետական Հայաստանի կառավարությանը, որով հայտնում են Կարսի հայերի և Գ. արք. Հովսեփյանի վիճակի մասին և խնդրում իրենց ազատել գերությունից: Թուրքերը բռնում են նամակատարին:

Այդ նամակի և Գ. արք. Հովսեփյանի կողմից Կարսում կատարած հայրենասիրական աշխատանքի համար կալանավորում են նրան, որը փախչում է բանտից և թաքնվում: Նոյեմբերի 18-ին (հին տոմարով)<sup>11</sup> թուրքական կառավարությունը Կարսում խիստ խուզարկություն է կատարում, մի քանի ընկերների հետ բռնում են Գ. արք. Հովսեփյանին և տանում բանտ ու քազմաթիվ հայ կալանավորների հետ աքսորում Սարիղա-

<sup>6</sup> Մատենադարան, Գ. արք. Հովսեփյանի արխիվային ֆոնդ, թղթ. № 91, վավ. № 6գ, Օրագիր, թերթ 51:  
<sup>7</sup> Թուրքական զինվոր:  
<sup>8</sup> Նույն տեղում, թերթ 52:

<sup>9</sup> Նույն տեղում, թերթ 52—53:  
<sup>10</sup> Նույն տեղում, թերթ 53:  
<sup>11</sup> Գ. արք. Հովսեփյանը 1920 թվականին Կարսում գրած օրագիրը գրել և ամիս-ամսաբլերը նշել է նոր տոմարով, իսկ 1921 թվականին Էջմիածնում գրած հուշերը գրել է հին տոմարով, որի պատճառով օրերի և ամիսների տարբերություններ է ստաջացել:

միշտ, որտեղից և փախչում է նա դեպի Կարս և բռնվում: Այդ մասին նա գրում է. «Կարսի առումից հետո բանտից փախել էինք և ուզում էինք Երևանի կողմը փախչել... բայց նոյեմբերի 18-ին սկսվում է զորեղ խուզարկություն թուրքերի կողմից, վեց հոգով թաքնվում էինք Ջամբազյան Զոհրաբի տանիքի տակ: Սակայն ֆինանս. պաշտոնյա Գրիգոր Գրիգորյան թիֆլիսեցի տեղն իմանալով, մատնում է տաճիկներին, որոնք սանդուղք դնելով բարձրանում են կտուր, Արտավազդին խփում են տեղն ու տեղը, որ ալեկի մոտ էր դրան, իսկ մեզ 5 հոգուս բռնում են: Սակայն մինչև բանտ տանելը մերկացնում են մեզ մինչև շապիկ վարտիքը և միացնելով ուրիշ խմբերի հետ, տանում են բանտ: Այնտեղ պատահում ենք Տիգրան Աղամալյանին ֆինանսների միևնույնության ներկայացուցիչ, Արամ Օլթիցյան, որ Կարսի շրջանի դպրոցական տեսուչ... հաշտարար դատարանի նախագահ Մկրտիչ Մարգարյանին, Ամերիկյան կոմիտեի արհեստանոցների կառավարիչ ինժեներ Մելիքսեթյանին, նահանգապետի քարտուղար Տիցիկյանին, քաղաքագլուխ Նոհրադյանին, նորս օգնական Խաչատուր Բզնունուն, քաղաքային ինքնավարության անդամ բժ[իշկ] Ղազանճյանին և ուրիշ բազմաթիվ բժիշկների և մասնագետ անձանց, նաև հոգևորականների, առանց հասակի և կոչման խորության, որպես պատերազմական գերիների... նոյեմբերի 20-ին ինձ 400 գերիների հետ ուղարկեցին Սարիղամիշ. մեր խմբի մեջ էին բժ. Ղազանճյան, Տիգրան Աղամալյան և Մարգարյան, առաջին երկուսին դուրս տարան... նույն գիշեր սպանեցին Ռհուշտի բեյի հրամանով: Նույն օրը երեկոյան հասանք Սարիղամիշ, բոլոր[իս] երկշար կանգնեցրին ձյունների վրա, մինչև հաշվեցին մեզ կողոպտել էին վագոնների պահապանները: Բոլորս դողում էինք ցրտից, իսկ պահապանները հայհոյում էին, որ արժանի ենք այդ պատժին: Կապարանից մեզ առաջնորդեցին փայտի պահեստանոցներում, իրար վրա էինք թափվել, իրար տաքացնելու համար, երեք օր ոչինչ չէինք կերել... բայց մեր հույսը չէինք կորում, և ծրագիր էինք կազմում նույն այդ գիշեր փախչելու... [մեզ] տարան դեպի Կարնո կայարան Կարին գնալու համար... 50 հոգի փախան կամաց-կամաց: Ես էլ երեք հոգով դեպի անտառներ, նախ չորեքշաբթ, բայց մինչև գետը հասնելը կորցրի երկու ընկերներին: Մտա անտառ և Կարսի ուղղություն բռնեցի և սկսեցի քալել: Քիչ առաջ գնացած, լսեցի գայլերի ոռնոցը, մի կերպ ազատվեցի և ուժեղ քայլերով առաջ

անցա չնայած սովածության և մերկության մինչև առավոտ դուրս եկա անտառից և թաքնվեցի քարերի մեջ մինչև երեկոյան վերջալույսը, որ նորից շարունակեմ նահապարհս: Երեկոյան դուրս եկա և շարունակեցի մինչև Եղդիքիլիսա գյուղը, ուր և բռնվեցի»<sup>12</sup>: Գ. արք. Հովսեփյանին բռնում են, խիստ ծեծում, սպա վերադարձնում Սահիղամիշ: Ծեծի պատճառով երեք շաբաթ հիվանդ պառկում է բանտի հատակին, «սպաքինվելուց հետո նրան աշխատանքի են ուղարկում Կարին գնացող վագոններ բեռնելու: Ծանր աշխատանքի, վատ պայմանների, թերսնվելու պատճառով նա հիվանդանում է: Մի քանի օր հիվանդանոցում պառկելուց հետո նորից նրան վերադարձնում են նույն աշխատանքին:

Հուշերում նա նկարագրում է հայ գերիների նկատմամբ թուրք հսկիչների և զինվորների գործարած տանջանքները, ծեծք սպանությունները: Յուրաքանչյուր չնչին բանի համար տեղն ու տեղը գնդակահարում են հայ գերիներին: Երբեմն որևէ քաղաքացի թուրք գալիս-նաչում է մի գերու և նրա մեջ ցանկություն է արթնանում սպանել նրան: Նա բանակցում է հսկիչի հետ, զրկարտում գերուն և տանում սպանում է: Սարսեցուցիչ և տակալի էջեր կան Գ. արք. Հովսեփյանի օրագրում: Նա հիշում է, թե ինչպես հարյուրի չափ թուրք պատանի որբերին բերում են Սարիղամիշ, որոնց բաց ել թողնում հայ գերիների վրա և ասում, որ սրանք են սպանել ձեր ծնողներին, ինչպես ուզում եք վարվեք նրանց հետ: Նա գրում է. «Մի անգամ ցերեկվա աշխատանքի ժամանակ, Էրզրումից դեպի Կարս գնացող մտ հարյուր տանիկ որբերին բերեցին մեզ մոտ և առաջին, որ մենք սպանել [ենք] նրանց ծնողներին և մեր պատճառով նրանք որբ են մնացել, իրավունք տվին, ինչ ու կուզեն, անեն մեզ հետ: Մենք մոտ 300 հոգի, հսկա տղամարդիկ ենթարկվեցինք այդ երեխաների նախատիքին և ծեծին, իսկ պահակները ծիծաղում էին, մենք էլ փախչում էինք, կամ գլուխներս կախ տանում ծեծն ու անարգանքը»<sup>13</sup>:

Թուրքերը ոչ միայն հայ գերիներին ծեծում, անարգում, սպանում, այլ ծաղրում ու սպառնում էին հայ-ոռու ժողովուրդների քարեկամական կապերը: Այդ մասին Գ. արք. Հովսեփյանը գրում է. «Ծննդյան տոնի ա-

<sup>12</sup> Մատենադարան, Գ. արք. Հովսեփյանի արխիվային ֆոնդ, թղթ. № 91, վավ. № 69, Հուշեր, թերթ 54—55:

<sup>13</sup> Նույն տեղում, Հուշեր, թերթ 56:

նավոտ<sup>14</sup> բոլոր գերիներին կանչում են կալարան, նույնիսկ հիվանդներին, պատկեցնում ձյունի և սառույցի վրա, հագարապետը դուրս է գալիս ճառ է խոսում գերիներին, որ գերի և սարուկ վիճակի մեջ ձեր տոնն է, հեզնում է, մեր արդար վրեժն է, որ հատուցվում է ձեզ, դուք և ձեր ժողովորդը, միայն ոռուների հետ համարձակվեցիք հարձակվել մեր գյուղերի վրա... Արգրումն ու Վանն էիք պահանջում, Կարսի նահանգում մեզ դիմադրում, բայց աստծու գորությանը հաղթեցինք ու գերի վերցրինք, իսկ եթե մի օր կատարվի և առողջ վերադառնաք ձեր հայրենիքը, պատմեք այնտեղ մնացածներին և ձեր երեխաներին, որ ձեր ուղիով չընթանան, այլապես հետևանքը կլինի նույնը»<sup>15</sup>:

Հուշերի վերջում Գ. արք. Հովսեփյանը գրում է գերությունից իր երկրորդ փախուստի և Խորհրդային Հայաստան գալու մասին: Նա այլևս չտանելով թուրքերի կողմից հայ գերիների նկատմամբ կատարած բարբարոսությունները, որոշում է նորից փախչել և մտածում է փախուստի նոր միջոցների մասին: Նա օրագրում գրում է, թե ինչպես 1921 թվականի հունվարի 19-ին դիմում է Սարիղամիշի կայարանապետի օգնականին և հայտնում, որ ինքը լուսանկարիչ է, իսկ լուսանկարչական իր գործիքները գտնվում են Կարսում, խնդրում է թույլ տալ գնալ Կարս, բերել գործիքները և նկարել իրենց: Կայարանապետի օգնականը Գ. արք. Հովսեփյանի հետ գնում է Կարս: Սրբազանի նախկին ծանոթ, գթության բույր՝ ոռու Նիւնա Գրիգորենայի միջոցով Գ. արք. Հովսեփյանին հաջողվում է փախչել ամերիկյան հայոց որբանոցը և թաքնվել մինչև փետրվարի 18-ը: Մարդասեր և գթասեր Նիւնա Գրիգորենայան նկատի ունենալով, որ Գ. արք. Հովսեփյանը տանջված և հյուծված է, նրան տեղափոխում է քաղաք, մի թաքստոց, և լավ կերակրում, խնամում նրան մինչև մարտի 21-ը: Այդ ժամանակ Կարսում եղած հայ-


կական բոլոր որբանոցները տեղափոխվում են Խորհրդային Հայաստան: Նիւնայի միջոցով, որբերի հետ ծպտված Ալեքսանդրապոլ (այժմ Լեհինական) է տեղափոխվում նաև Գ. արք. Հովսեփյանը: Ապա նա ապրիլի 2-ին, մի ուղեկցի հետ, դուրս է գալիս Ալեքսանդրապոլից դեպի Կյուսքյանդ գյուղը: Անձրեվի պատճառով մի օր մնում է Կյուսքյանդում և հետևյալ օրը շարունակելով ճանապարհը, հասնում է Նորաշեն գյուղը, որը երկու օր առաջ գրավել էր Կարսի քանակը, որից հետո գնում է Էջմիածին և 1921 թվականի հուլիսի 14-ին գրում սույն հուշերը<sup>16</sup>:


ԱՎԵՏԻՔ ԱՌԱՄՅԱՆ

<sup>15</sup> Կարևոր ենք համարում նշել, որ 1945 թվականի հունիսին Էջմիածնում կաթողիկոսական ընտրության առթիվ Գ. արք. Հովսեփյանը Լիբանանից գալիս է Հայաստան: Նա մի քանի օր աշխատում է Մատենադարանում և ուսումնասիրում է մի շարք ձեռագրեր և արխիվային վավերագրեր: Հայաստանի կառավարության թույլտվությամբ Գ. արք. Հովսեփյանը Մատենադարանում պահվող իր անձնական արխիվային ֆոնդից առանձնացնում է մի շարք վավերագրեր և տանում արտասահման հրատարակելու համար: 1945 թվականի հունիսի 18-ին Մատենադարանում կազմված արձանագրությունից պարզվում է, որ Գ. արք. Հովսեփյանը տարել է 71 միավոր նյութեր: Արձանագրության տակ ստորագրել է՝ Գարեգին կաթողիկոս Կիլիկիո: Հիշյալ օրագիրը և հուշերը, որոնք ամփոփված են եղել ընդհանուր մի տետրում, նա չի նկատել և չի տարել, որի մասին 1946 թվականի մարտի 8-ին Անթիլիասից Հայկական ՍՍՀ Պետական Մատենադարանի դիրեկտոր Գ. Աբովին հասցեագրած նամակում գրում է. «...Մեր բերած թղթերի մեջ չեն երևում Լոռիի վերաբերյալ արձանագրությունների և նկատողությունների տետրակները, օրինակ Դսեղի, Սանահինի, Օձունի: Թղթեր ստանալիս այնքան հոգևած էի և միտս շփոթ, որ չեմ նկատել այդ պակասը: Հավանական է որիշ թղթապահակների մեջ են մնացած, եթե Ձեր ստանալուց առաջ ուրիշի ձեռքը չի անցել: Չերևացավ և Կարսի անկման հետ կապված մեր օրագրական տետրակը, որ ուրիշի մեջ օգտակար կլինի, մինչդեռ մեր ձեռքին հիշեցուցիչ կլիներ մի ամբողջ հողվածաշարքի, որ շատ խնդիրների լուսարանության կժառայեր...» (Տե՛ս Մատենադարան, Մատենադարանի գրասենյակի արխիվ, թղթ. № 81, վավ. № 38դ):

<sup>14</sup> Խոսքը հունվարի 6-ի Ծճնդյան տոնի մասին է, որ հայ լուսավորչականները ամեն տարի կատարում են այդ տոնը:

<sup>15</sup> Նույն տեղում, Հուշեր, թերթ 57:





**Ս. ԱՆԹՈՍՅԱՆ**

(Բանասիրական գիտությունների թեկնածու)

**ՀԱՅՈՑ ԼԵՉՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ  
ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ  
ՍՈՎԵՏԱԿԱՆ ԾՐՋԱՆՈՒՄ**

Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության առարկան հայոց լեզվի՝ պատմական զարգացման ընթացքում կրած փոփոխությունների ամբողջությունն է, այն է՝ նախահայերենը, նախագրաբարը, գրաբարը, միջին հայերենը և աշխարհաբարի կազմավորումն իր գրական արևելահայ և արևմտահայ տարբերակներով: Պետք է խստովանել, որ 19-րդ դարի օտար թե՛ հայ լեզվաբան-հայագետները հայոց լեզվի պատմության ուսումնասիրության կոթողային գործեր և ավանդույթ էին ստեղծել. այսպես՝ պատմա-համեմատական դպրոցի օտար հայագետները, Հայնրիխ Պետերմանից մինչև Հայնրիխ Հյուբշմանը, ճիշտ է, սկզբունքային տարբեր ելակետերից, սակայն ամենայն մանրամասնությամբ քննել էին հայերենի՝ հնդեվրոպական լեզուների հետ ունեցած աղերսակցությունների հարցը: Հայոց լեզվի պատմության տվյալ հարցի վերաբերյալ այսօր էլ իրենց գիտականությունն ու թարմությունը պահած գործեր են հատկապես Հյուբշմանի Armenische Studien (1883 թ.) և Armenische Grammatik (1895 թ.) գործերը, որոնց մեջ հեղինակը, ի հակադրություն իր նախորդների, լեզվական ստատույթի հիման վրա ապացուցեց, որ «հայերենը հնդեվրոպական լեզուների մի ինքնու-

րույն ճյուղ է և ամենից լավ է հնդեվրոպական լեզուների թվարկման ժամանակ արիականի և պալոլեոտոականի միջև հիշել»<sup>1</sup>: Հյուբշմանը միաժամանակ խորահնոտ կերպով կատարեց հայերենի հնչյունաբանության համեմատական քննությունը՝ ճշտելով մոտ 2000 հայերեն բառերի ստուգաբանությունը: Վիեննայի Մխիթարյանները, անմիջականորեն հաղորդակից լինելով եվրոպացի հայագետների գործերին, առավելապես ուսումնասիրեցին նախահայերենի աղերսակցություններն իրեն շրջակա լեզուների հետ, ինչպես նաև հայերենի գրավոր շրջանի պատմական փոփոխությունները՝ ընդհուպ մինչև գրական աշխարհաբարի կազմավորումը: Առաջինի համար որպես օրինակ կարելի է բերել Հակոբոս Տաշյանի «Ուսումն դասական հայերեն լեզվի» (Վիեննա, 1920) քիչ ուսումնասիրված, քիչ ծանոթ հոյակապ աշխատությունը, որն իր տեսակի մեջ, թվում է, հայ լեզվաբանության մեջ անգերազանցելի է: Երկրորդի համար լավագույն օրինակ է Արսեն Այտընյանի՝ համառոտ անվանումով «Քննական քերականություն» (Վիեննա, 1866) հոյակապ աշխա-

<sup>1</sup> Տե՛ս է. Բ. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, և. 1-ին, Երևան, 1958, էջ 237:

տությունը: Հայ լեզվաբանության երկու խոշոր երախտավորներ՝ Մխիթարյան Ղևոնդ Հովնանյանն ու գերմանացի հայագետ Յոզեֆ Կարստը իրենց ուսումնասիրության նյութը դարձրին միջին հայերենը: Առաջինը հրատարակեց «Հետազոտությունք նախնյաց ոսակորեանի վրա» (Վիեննա, 1897) երկու գրքից բաղկացած միջինհայերենյան բնագրեր իրենց լեզվական խորիմաստ բացատրություններով՝ դժբախտաբար վերահաս մահվան պատճառով չհասցնելով գրել տեսությունը: Իսկ Կարստը տպագրեց «Aus-sprache und Vocalismus des Kilikisch-Armenische» (Ստրասբուրգ, 1899) և «Historische Grammatik des Kilikisch-Armenischen» (Ստրասբուրգ, 1901) մեծարժեք և հայ լեզվաբանության մեջ աննախադեպ աշխատությունները, որոնց մեջ միջին հայերենի մասին ունեցած իր էլակետից հանգամանակից քննության ենթարկեց նրա հնչյունաբանությունն ու ձևաբանությունը, քիչ չափով նաև՝ շարահյուսությունը:

Իարավերջին գրաբարի համեմատական քերականությանը էր զբաղվում աշխարհի խոշորագույն լեզվաբաններից մեկը՝ ֆրանսիացի Անտուան Մեյլեն, որը և 1903 թ. (երկրորդ տպագրությունը՝ 1936 թ.) իր հրուչակավոր «Esquisse d'une grammaire comparee de l'armenien classique» աշխատությանը ստեղծեց հայերենի պատմա-համեմատական քերականության մի հետևողական դասընթաց: Նույն այս ձևով Մեյլեն ուսումնասիրեց նաև հին հայերենի շարահյուսությունը՝ հնդեվրոպական լեզուների համեմատությամբ: Իսկ Ռուսաստանում պատմա-համեմատական ուղղության հետևորդությամբ հայոց լեզվի պատմության, հատկապես հայ բարբառների ուսումնասիրությանը աշխատանք ծավալեց Ք. Ռատկանյանը: Եվրոպացի վերոհիշյալ հայագետների հետևողականությանը և նրանց աշակերտելով, լեզվի պատմությամբ, մասնավորապես հայ բարբառների ուսումնասիրությամբ և համեմատական քննությամբ զբաղվեցին հայ և օտար գիտնականներ: Մխիթարյաններից հետո գրաբար լեզվի իրողությունների հմուտ քննության աշխատանքներ տվեց Ստ. Մալխասյանը:

Հայոց լեզվի պատմության ուսումնասիրությանն ուղղությամբ կատարված աշխատանքների այս ամենահամառոտ նկարագրությունն իսկ ցույց է տալիս, որ, ինչպես վերևում ասացինք, հայագիտության այդ գծով ստեղծվել էին կոթողային գործեր և մանավանդ՝ ավանդույթ: Ավելին. թե՛ հայ և թե՛ օտար լեզվաբանների համար հայերենագիտությունը հայոց լեզվի պատմությամբ և համեմատական քերականությամբ զբաղ-

վել էր նշանակում: Սակայն, ինչքան էլ զարմանալի լինի, հայագիտության այս բնագավառում կտրվածք առաջացավ: Միջին հայերենի վերաբերյալ արժեքավոր աշխատանքներ ստեղծած Յ. Կարստը հայ ժողովրդի և հայոց լեզվի մեջ նորագույն տարրերի ի խնդիր խճճվեց իր ստեղծած Atlantica-ի «տեսության» մեջ: Ստ. Մալխասյանը 1922 թ. պատվեր ստացավ կազմելու հայերենի բացատրական բառարան, մյուս կողմից՝ առավելապես լայն բանասիրությանը և գրաբար մատենագրության թարգմանությանը էր զբաղված: Մ. Արեղյանի ուշադրության կենտրոնում ժամանակակից հայերենի տեսական և գործնական հարցերն էին, ապա և տերմինաբանական բառարանների կազմումը:

Սովետական շրջանում, սկզբում հին սերընդի հեղինակություններից հայոց լեզվի պատմության հարցերով զբաղվում էր միայն Հ. Անտոյանը: Այն էլ ասենք, որ մատական լեզվի նոր ուսումնքի տիրապետության պայմաններում գործնականորեն անհնար էր պատմա-համեմատական մեթոդով կատարված ուսումնասիրություն հրատարակել, իսկ լեզվի նոր ուսումնքով անհնար էր հայոց լեզվի պատմության գիտական քննություն կատարել. դրանում համոզվելու համար բավական է այսօր թերթել այդ «տեսության» սկզբունքներով կատարված աշխատությունները: Եվ դժբախտաբար ասուածին շնորհալի մարդիկ իրենց ընդունակություններն օգտագործեցին հայոց լեզվի թուր պատմություն ստեղծելու համար՝ ինչ-որ մարդկանց հանդյանալու համար հայոց լեզվի հանգուցային իրակությունները կապելով անպայմանորեն կա՛մ կովկասյան լեզուների, կա՛մ վրացերենի հետ՝ նրանցից սերած համարելով, ինչպես օրինակ՝ Արմենակ Մուրվալյանը, որը հայերենի եզակի առաջին դեմքի մ վերջավորությունը ծագած էր համարում վրացական (մե) — ես ձևից, որի վրա և ք ավելացնելով, համեցեք, կրստանաք դերանվան հոգնակի մեք ձևը, իսկ կը մասնիկը բխեցնում էր բարթվելական (sic!) կոն //կո («Օկոն» — պիտի) բառից՝ մոռանալով, թե ինչո՛վ և ինչպե՛ս պետք է լցնել Կիլիկիայից Վրաստան եղած տարածությունը: Միայն այսօր կարելի է հասկանալ այդ տարիների անարգասավորությունն ու ամբողջությունը: Հետագայում պրոֆ. Ա. Ղարիբջյանը գնահատելով այդ շրջանի տեսական մարզանքները, ինքնամեղադրականում ասում էր. «Իմ աշխատությունների տեսական բոլոր դրույթները ոչ մարքսիստական դրույթներ են»: Ապա և՛ «Հայերեն լեզվի տարբեր ժամանակների որակական փոփոխությունները բացատրում էի որպես դասա-

կարգային պայքարի արդյունք... Իբրև Հայկ. ՍՍՀ ԳԱ-ի Ն. Մատի անվան լեզվի ինստիտուտի դիրեկտոր, ես ուղղություն էի տալիս նաև երիտասարդ կադրերի գիտա-հետազոտական աշխատանքներին՝ վարելով նրանց դեպի այն փակուղին, որի մեջ էի ես ինքս: Սակայն կաղնու նման աներեր մնաց Հ. Աճառյանը, որը 1939 թ. արդեն ամբողջացրել էր «Հայոց լեզվի պատմություն» երկհատոր աշխատությունը:

Սովետական շրջանում հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ամենախոշոր նվաճումներից մեկն, անշուշտ, Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» հրատարակումն է: Հայտնի պատճառներով այս աշխատանքն ավելի լեզվի պատմության ուսումնասիրության բնագավառին է պատկանում, քան թե բառարանագրությանը: Բառարանը լույս տեսավ այն ժամանակ, երբ դեռ մատակարարությունը չէր թեժացել: Մյուս կողմից՝ «փաստական հարուստ նյութ» պարունակելու հանգամանքով բառարանը արգելքների չէր հանդիպում: Եվ վերջապես՝ Մատն ինքն էլ բառարանի մասին ժամանակին շատ բարձր կարծիք էր հայտնել: Անկեղծորեն պետք է խոստովանել, որ առանց պետական հոգատարության այն ժամանակ անհնար էր հրատարակել մի այդպիսի բառարան: Դրանում համոզվելու համար պետք է կարդալ մեծավաստակ հայագետի բառարանի՝ իր իսկ նկարագրած ողիսականը (տե՛ս Հայերեն արմատական բառարան, 7-րդ հատոր, Հավելված, 1935 թ.): Հ. Աճառյանի հաղորդմամբ՝ 1925 թ. Կենտգործկոմն արտոնել էր «Արմատակա՞նի» հրատարակումը: Բառարանի 6 հատորները լույս են տեսել 1926—32 թթ.: 7-րդ հատորը (տպագիր) լույս տեսավ 1935 թ.: Ինչպես գրում է Հ. Աճառյանը, Հայաստանի խորհրդային իշխանությունը առանց որևէ դժվարության, առանց որևէ գրաքննական ձևականության, սկզբից մինչև վերջ ազատ է թողել գրքի հրատարակությունը (տե՛ս Հավելված, էջ 204): Մենք մեծապես կարող ենք հպարտանալ, որ համաշխարհային չափանիշով լեզվաբանական մի այսպիսի կոթողային գործ մեր հայրենակիցն է գրել, և այն լույս է տեսել Երևանում: Հ. Աճառյանի «Արմատականի» մասին խոշոր հայագետներ շատ բարձր կարծիք են արտահայտել. «Ոչ մի լեզվի համար չկա այսքան ճոխ, այսքան կատարյալ ստուգաբանական բառարան»,—գրել է Անտուան Մեյլեն, որ ինքն էլ լատիներենի արմատական բառարանի հեղինակ է: «Հսկայական գործի մը առջև կը գտնվիմ,—բացակակցում է Ակիմյանը,—...հեղինակը ձեռնամուխ եղած է հանհասարակ: Անհատական ուժը չէր կարող հասնիլ

այս ընդարձակածալ կառուցվածքին կատարման: Բայց Աճառյան հասած է բարձրակ: Նա տված է աշխատություն մը, որ կը մնա աննախընթաց օրինակ նույնիսկ համաշխարհային գրականության մեջ»: Բանասերներն իրավացիորեն սերտ կապ են տեսնում «Արմատականի» և «Հայոց լեզվի պատմության» միջև: 1941 թ. որպես «արժեքավոր տեղեկատու ձեռնարկ» լույս տեսավ «Հայոց լեզվի պատմության» 1-ին հատորը, իսկ 2-րդ հատորը՝ միայն 1952 թ., այն է՝ մատական ուսումնքի քննադատությունից ու վերացումից հետո: Իր համար որոշակիորեն նախագծած լինելով հայերենի բնիկ, հնդեվրոպական տարրը, Հ. Աճառյանը 1-ին հատորում համատոտակի նկարագրում է հնդեվրոպական շրջանը և ապա Հյուսիս-Մեյլեի հետևողությամբ ճշտում հայերենի դիրքը քույր լեզուների միջև: Այնուհետև ըստ վաղեմիության կարգի քննում է հնագույն լեզուների «ազդեցությունը» հայերենի վրա՝ հասցնելով մինչև հունական ազդեցությունների ժամանակները: Իսկ երկրորդ հատորում քննում է գրական հայերենի առած փոխառությունների հարցը հունարենից, երաչեցերենից, արաբերենից, վրացերենից, ռուսերենից, ապա նաև թրքերենից փոխառյալ բառերի հարցը ժողովրդական խոսվածքներում: Հեղինակը ոչոշակիորեն սահմանագծում է անհրաժեշտաբար փոխառյալ բառերը ձուլման քաղաքականության ի նետվածքները թարգմանացած բառերից, այսպես, օրինակ՝ պահլավական 960 փոխառյալ բառերից արդի գրական և խոսակցական հանդերձում գործածական են 581 բառ, մինչդեռ թուրքերենը, որ ավերել է հայ խոսվածքները, գրեթե հետք չի թողել հայ գրական լեզվի մեջ:

Հայ բանասիրության մեջ ոմանք, չափազանցելով փաստերը, Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմությունը» աշխատում են ներկայացնել որպես «Արմատականի» տեսություն, մինչդեռ հայտնի է, որ 2-րդ հատորում հեղինակը քննում է մեր լեզվի պատմության ամենաբազմազան հարցեր՝ փաստական հայերենը, գրաբարը՝ դասական և ետդասական շրջաններով, հայերենի բարբառները և նրանց ծագման ժամանակը, աշխարհաբարի կազմությունն ու «գրապայքարի» շրջանը: Հայոց լեզվի անցած պատմական ուղու ամբողջ տարածքի վրա հեղինակը բացահայտում է մեր լեզվի բարեշրջական փոփոխությունները, լեզվական ու պատմական առատ փաստերով ցույց է տալիս, որ աշխարհաբարը, ուստի և արևմտահայ ու արևելահայ նոր գրական լեզուները նախնյաց հայերենի՝ գրաբարի դարավոր բնականոն, իր բառերով սասած՝ «լոկ բարև-

շրջական» փոփոխությունների հետևանք են և բառական, քերականական ու արտահայտչական իմաստով՝ աղերսակցվում են գրաբարին: Նույնպես և բարբառների վերաբերյալ: հայերենի բարբառային իրողությունների քննությամբ բացահայտում է, որ մերկա բարբառները գոնե որպես լեզվական ամբողջական կառուցվածքներ գրաբարից են սերած, գրաբար լեզվի ճյուղավորումներն են: Վերևի բոլոր խնդիրները քննելիս ի մի է բերում արտահայտված տեսակետները և լեզվական փաստերի վկայակոչումով ամուս է առարկայական եզրակացություններ: Այս բոլորից բացի, սույն աշխատության մեջ Հ. Աճառյանը տվել է հայոց լեզվի պատմության ուսումնասիրությունն ամբողջացնելու ծրագիր՝ մատնանշելով այն բոլոր հանգուցային հարցերը, որոնց վրա պետք է աշխատեն հայերենագիտությանը զինվորագրված մասնագետները: Ցավել կարելի է, սակայն, որ միջին հայերենը ներկայացնելիս Հ. Աճառյանն անքննադատաբար վկայակոչում է օտար հայագետ Յ. Կարստին, որի ասածը դուրս չափով իսկ նսեմացնելու նպատակ չունենալով հանդերձ, նշենք, որ նա շատ ու շատ փաստեր ու օրինակափություններ չի նկատել կամ ճիշտ չի արժեքավորել:

Ոչ միայն հայ լեզվաբանության, այլ նաև համաշխարհային լեզվաբանության մեջ եզակի գործ է Հ. Աճառյանի «Լիակատար քերականություն հայոց լեզվի» համեմատության մեջ 562 լեզուների» աշխատությունը: Աշխարհի բոլոր լեզվաբանները երազել են մի հեղուս հանճար, որ կատարեր աշխարհի բոլոր լեզուների համեմատական քննությունը: Հպարտությամբ պիտի նշենք, որ աշխարհի լեզուների իրեն մատչելի ուսումնասիրությունների համակ օգտագործմամբ առաջին խիզախողը եղավ Հ. Աճառյանը: Պրոֆ. Է. Աղայանի բարեխիղճ խմբագրությամբ պարբերաբար լույս են տեսնում այս աշխատության հատորները: Արդեն լույս են տեսել «Ներածություն» հատորն ու լեզուների ձեվաբանության համեմատական քննությանը նվիրված 6 հատորները: «Ներածություն» հատորի (որն ի դեպ ոչ միայն լեզվաբանների, այլ նաև ընդհանրապես հասարակական գիտությունների բոլոր ներկայացուցիչների համար սեղանի գիրք է) առաջին մասում ի մի են բերված լեզվի վերաբերյալ գիտության մասին պատմա-համեմատական մեթոդի բոլոր նվաճումները, հանգամանորեն քննված է լեզուն իր հատկանիշների ամբողջության մեջ: Իսկ երկրորդ մասում ըստ հնդեվրոպաբանության ընդունած լեզուների ցեղակցության սկզբունքի տրված են լեզվաբնուստնիքները, նրանց բնորոշումն

ու նախալեզուների և մեկ ընդհանուր նախալեզվի գիտական վերականգնման փորձերը: Մնացած հատորներում հնարավոր ամենալայն կերպով պատմական քննության է ենթարկված հայերենի ձևաբանությունը իր բոլոր արտահայտություններով՝ ըստ պատմի համեմատվելով աշխարհի 562 լեզուների հետ: Եթե աշխարհի լեզուների քերականական իրողությունների վկայակոչումները հանենք էլ, թեկուզ միայն հայերենի իրողությունների պատմական քննության տեսակետից այս աշխատությունը դարակազմիկ է, ամենամբողջականն ու ամենակատարյալը հայ լեզվաբանության մեջ: Ի տես այս աշխատության, Հ. Աճառյանի երախտավոր ուսուցիչ Հյուբշմանը պիտի բացակայեր, անշուշտ. «Աշակերտը գերազանցեց ուսուցչին»: Այս առումով ինչքան գեղեցիկ է պրոֆ. Է. Աղայանի հետևյալ գնահատականը. «Եթե Հյուբշմանի ուղղությունը պատկերացնենք իբրև մի պուն, որի պատվանդանն են հանդիսանում Հյուբշմանի ուսումնասիրությունները, ապա Աճառյանի աշխատություններն այդ պունի խոյակն են կազմում... դարեր կանցնեն, շատ գործեր կրկորցնեն իրենց արժեքը և մոռացման կրտրվեն, բայց Աճառյանի գործերը միշտ էլ կունենան իրենց պատվավոր տեղը հայագիտության մեջ, միշտ էլ կպահպանեն իրենց արժեքը» (Լիակատար քերականություն, Ներածություն, էջ XVIII):

Հայոց լեզվի պատմությունն անհնար է փոքրիշատե ամբողջական ներկայացնել առանց բարբառների լեզվական իրողությունների: Ահա ինչու Հ. Աճառյանը սովետական շրջանում շարունակեց հայ բարբառների ուսումնասիրությունը, մոտ երկու տասնամյակում նա լույս ընծայեց հայերենի մոտ 10 բարբառների նկարագրական ուսումնասիրությունները՝ բացահայտելով հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության համար հետաքրքրություն ներկայացնող լեզվական մի շարք երևույթներ: Հիշելի է հատկապես Վանի բարբառի հնչյունաբանության հայտնի երևույթը, որ իր իսկ անվանմամբ հայտնի է «Աճառյանի օրենք» անունով: «Հայոց լեզվի պատմության» 2-րդ մասում ևս, ի տարբերություն «Հայ բարբառագիտության», նկարագրված են հայերենի 36 բարբառներ, հարստացված է հատկապես էլ ճյուղը: Գործնական աշխատանքներին զուգահեռ, հեղինակն անդրադարձել է նաև բարբառագիտության տեսական հարցերին: Այդ հատորում «Հայ բարբառների ծագման ժամանակը» գլխում լայնորեն քննարկում է արդի հայ բարբառների ծագման ժամանակաշրջանի հարցը, ճշտորեն եզրակացնելով, որ դրանք բոլորն էլ գրաբար

լեզվի գյուղավորումներն են՝ մեծ մասամբ ձևավորված 12-րդ դարից հետո, երբ գրաբարն արդեն դադարել էր խոսակցական լեզու լինելուց, և նոր լեզվամտածողության հիման վրա՝ գումարելով նաև հայերի մեծ արտագաղթը, հաղորդակցության կապի կտրվելը հայության միջև, պետական-քաղաքական կենտրոնի պակասը, փոքրաթիվ հայ ժողովրդի մեջ առաջ եկան մեծաթիվ բարբառներ: Այստեղ մեկ անգամ ևս քննելով բարբառների դասակարգման սկզբունքի հարցը, հաստատում է դեռևս 1909 թ. իր իսկ առաջարկած ձևաբանական դասակարգման սկզբունքի գնտությունն ու գիտականությունը հայ բարբառների վերաբերյալ:

Պետք է ընդունել նաև, որ Աճառյան բարբառագետը ուղեցույց ու օրինակ հանդիսացավ Հայաստանում թե՛ տեսական և թե՛ գործնական բարբառագիտության զարգացման համար: Նրա հետևողությամբ և բարբառների ուսումնասիրության համար մեզանում կանոնական դարձած իր սխեմայով երիտասարդ հայագետներն ուսումնասիրեցին հայերենի մի քանի տասնյակ բարբառներ, առավելապես այսպես կոչված արևմտաձայն բարբառներ, որոնք լեզվական նորանոր գեղեցիկ փաստեր տվեցին հայոց լեզվի պատմության ամբողջական ուսումնասիրության համար: Իսկ բարբառագիտության տեսության հարցերով զբաղվեցին նախապես պրոֆ. Ա. Ղարիբջանն ու պրոֆ. Ա. Ղալայանը: Առաջինը տվեց բարբառների հրճուհարանական դասակարգումը, այլև Աճառյանի ձևաբանական սկզբունքից ելնելով դեռևս 1939 թ. Ել գյուղից առանձնացրեց Ս գյուղը, իսկ հետագայում Կը գյուղից առանձնացրեց Կա և Հա գյուղերը և 1953 թ. լույս ընծայած «Հայ բարբառագիտության» մեջ հայերենի 50-ից ավելի բարբառներ խմբավորեց վերոհիշյալ 6 գյուղերի մեջ (գրաբարակերպ՝ Խոտրջուր)՝ տալով Կա և Հա գյուղերի պատկանող մի քանի բարբառների հնչյունաբանական-ձևաբանական առավել համառոտ նկարագրությունը: Ավելի ուշ՝ մեր վերոհիշյալ հեղինակներն իրարից անկախ առաջարկեցին հայ բարբառների դասակարգման նոր սկզբունք, այն է՝ **դերբայավոր**—այն բարբառները, որոնք իրենց սահմանականի ներկան և անկատարը կազմում են դերբայով և են օժանդակ բայի ձևավերով. 2) **մասնիկավոր**—այն բարբառները, որոնք սահմանականի նույն ժամանակները կազմում են գրաբարյան ձևերի վրա **կը, կա, հա** մասնիկների ավելացումով. 3) **գրաբարակերպ**—բարբառ, որ վերոհիշյալ ժամանակների համար օգտագործում է գրաբարյան ձևերը: Դոցենտ Ա. Գրիգորյանը ևս բարբառագիտության իր կազմած դասա-

գրքում անդրադառնում է բարբառագիտության տեսական մի շարք հարցերի:

Հարկ է նաև նշել, որ տեսական բարբառագիտության մեջ նոր խոսք է պրոֆ. Գ. Զահուկյանի «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատությունը, որտեղ բազմահատկանիշության հիման վրա, ներքին վերականգնման մեթոդով, բոլորովին նոր սկզբունքով են քննվում հայերենի բարբառների 100-ից ավելի առավել կարևոր և տեսակարար կշիռ ունեցող լեզվական երևույթները:

Հայ բարբառների տեսության ուսումնասիրման առավել կարևոր երևույթը նրանց բաղաձայնական համակարգի վերաբերյալ ծավալված բանավեճն էր, որը բառի ամենալայն հիմաստով միջազգային չափանիշով բանավեճ դարձավ, քանի որ դրան մասնակցեցին ոչ միայն մեր մի շարք լեզվաբանները, այլև պատմա-համեմատական ուղղության տարբեր երկրների բարձր հեղինակություններ: Բանավեճի համար դուռ բացեց պրոֆ. Ղարիբջանի այն ձևակերպումը, թե շնչեղացած ձայնեղներ ունեցող (հնդեվրոպական բաղաձայնական համակարգին հարազատ կամ նրան առավել մոտ) հայ բարբառներն ուղիղ գծով կապվում են նախահայերենի հետ, այն է՝ առաջացել են գրաբարյան համակարգից առաջ և «կոնսերվացված» ձևով ներկայացնում են մեր թվականությունից առաջ 15-րդ—7-րդ դարերի համակարգը: Սրան համապատասխան էլ՝ գրաբարյան բաղաձայնական համակարգ ունեցող բարբառները առաջացել են գրաբարի կազմավորման հետ միաժամանակ, իսկ գրաբարի բաղաձայնական համակարգից հետագամ բարբառները՝ գրաբարից հետո: Իր այս տեսությունը հաստատելու համար պրոֆ. Ղարիբջանն աշխատում է վկայակոչել հայոց լեզվի բազմաթիվ փաստեր, որոնք դժբախտաբար հաճախ սխալ են ներկայացված և մեկնված: Ե՛վ պրոֆեսորներ Աղայանը, Զահուկյանը, Սևակն ու Ղազարյանը, և՛ մի շարք օտար հայագետներ համոզիչ փաստերով և ճիշտ վերլուծումներով ապացույցեցին, որ արդի հայ բարբառների մեջ չկա ոչինչ, որ համակարգային արժեքով նախորդած լինի գրաբարին, և մեր այսօրվա բարբառները որպես լեզվական համակարգեր հետգրաբարյան են, գրաբարի լեզվական գյուղավորումները: Ահա ինչու պրոֆ. Ղարիբջանի առաջ քաշած այդ վարկածը, որն, ի դեպ, ապացուցվելու դեպքում մեծ ներդրում կարող էր լինել ընդհանրապես պատմա-համեմատական լեզվաբանության համար, մնաց լուր որպես հեղինակի առաջ քաշած վարկած:

Հայոց լեզվի պատմության ուսումնա-

սիրման մի բոլորովին նոր, ինքնուրույն դպրոց աշխատեց ստեղծել պրոֆ. Գ. Ղափանցյանը: Չընդունելով հայերենի հնդեվրոպական լեզու լինելու իրողությունը՝ տասնամյակներ շարունակ նա առանձին ուսումնասիրություններ գրեց հայերենի ոչ-հնդեվրոպական բառաշերտի, այլև քերականական այլևայլ իրողությունների վերաբերյալ: Դրանց մեջ առանձնապես կարևոր են «Chetlo-armeniaca»-ն (1931 թ.), «Հայասան-հայերի բնօրրանը» (1947 թ.), «այս նաև ետմահու լույս տեսած «Հայոց լեզվի պատմություն, հին շրջան» (1961 թ.) ամփոփիչ աշխատությունը: Պետք է խոստովանել, որ պրոֆ. Ղափանցյանը հետազոտեց հայոց լեզվի պատմության քիչ ուսումնասիրված մի բնագավառ՝ տալով մի շարք բառերի ճիշտ ստուգաբանություններ, հայերենի աղերսները հնագույն մի շարք լեզուների հետ, դրանով իսկ ընդարձակելով հայոց լեզվի ուսումնասիրության շրջանակները: Սակայն պրոֆ. Ղափանցյանը, ոգևորված իր տեսությանը, երկրորդականը շփոթեց էականի հետ և, շրջանցելով հայերենի հնդեվրոպական լեզու լինելու անհերքելի իրողությունը, հայտարարեց ասիականական՝ բուրգոսիկ կերպով առավելապես կապելով կովկասյան լեզուների, մասնավորապես մեգրեղերենի ու վրացերենի հետ: Ըստ պրոֆ. Ղափանցյանի Հայաստանի լեզուն նույնական է հայերենի հետ, իսկ առաջինը ցեղակից է խեթերենին, որը, իր կարծիքով, հնդեվրոպական չէ: Այսպիսով, հայերենը ոչ թե հնդեվրոպական լեզու է, այլ միայն «ունի ուժեղ չափով շեշտված հնդեվրոպական նկարագիր, որը նստել է տեղական փոքրասիական (ասիանիկ) լեզուների վրա, այդպիսով կազմելով մի յուրատեսակ խաչավորված նոր լեզու («Հայոց լեզվի պատմություն», հին շրջան, էջ 11—12): Այն չափով, որ պրոֆ. Ղափանցյանի հիմնած այս տեսությունը ոչ մի հետևորդ չունեցավ, չարժե, անշուշտ, դրա էությունը հանգամանորեն ներկայացնել: Սակայն արժե մի քանի խոսք ասել այն սխալ տեսական ելակետների մասին, որ գործադրում է պրոֆ. Ղափանցյանը: Նախ՝ առանց գործնականորեն ապացուցելու, սխալ էր հայտարարում համեմատական դպրոցի ներկայացուցիչների, մասնավորապես Հր. Աճառյանի հարյուրավոր ստուգաբանությունները՝ հայերենում ընդունելով ընդամենը մոտ 400 հնդեվրոպական բառեր: Արդ, պրոֆ. Ղափանցյանի կարծիքով 10000 արմատներ ունեցող լեզվի համար 400 բառը չի կարող դիմագծող համարվել, մանավանդ որ չբնագրաբանված են մնում հայերենի 5000 արմատներ, որոնք նրա կարծիքով անպայման ասիականական են: Նախ՝ պետք է դիտել, որ

լեզուների ցեղակցության հարցերը պարզելիս շատ ավելի կարևոր ու էական են քերականական կառուցվածքի նյութական միավորների ընդհանրությունները, որ ի մի է բերել պրոֆ. Աճառյանն իր «Հայոց լեզվի պատմության» 1-ին գրքում: Պրոֆ. Ղափանցյանն ընդունում է, անշուշտ, որ «հայերենը իր քերականական մասով ավելի է հնդեվրոպական», սակայն, այնուամենայնիվ, այստեղ էլ ճեղքվածք առաջացնելու համար գրաբարի առավել կարևոր ձևաբանության ց-ն կապում է վրացերենի -th վերջավորության, իսկ հոգնակի 3-րդ դեմքի Գ-ն՝ նույնպես վրացերենի arlan «են» ձևի վերջահանգ Գ-ի հետ: Երկրորդ՝ հայտնի է, որ բառապաշարը լեզվի ամենափոփոխուն մասն է. բառապաշարի հիման վրա լեզուների ցեղակցության հարցը վճռելիս պետք է ելնել ոչ թե լեզվի բառապաշարից ընդհանրապես, այլ հնագույն բառապաշարի այն բառերից, որոնք լեզվի հնագույն փնակը և այն կրող ժողովրդի քաղաքակրթության մակարդակն են պատկերում, այսինքն՝ տրվյալ դեպքում հարկավոր էր պարզել, թե հայերենի հեղց պրոֆ. Ղափանցյանի ընդունած հնդեվրոպական մոտ 400 բառերը նախահայերենի ընդհանուր արմատների մեջ ի՞նչ տեսակարար կշիռ ունեն: Վարչաձևի, պաշտամունքի, կենցաղի և այլնի փոփոխությանը համապատասխանորեն լրացվում է լեզվի բառապաշարը փոխառությունների հաշվին, սակայն դրանք ցեղակցության հարցերը պարզելիս մեզ օգնել չեն կարող կամ առավելագույն դեպքում կհաստատեն միայն, որ տվյալ լեզվի հետ ծագումնաբանական ընդհանրություններ չունեն: Հայերենում պահված 927 (ըստ պրոֆ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմության» մեջ արած հաշվումների) բառերն են ներկայացնում քաղաքակրթության այն աստիճանը և հնարավոր օգտագործելի այն արմատները, որ ուներ նախահայերենը հնդեվրոպական լեզուներից բաժանվելու շրջանում: Ի դեպ նշենք, որ «Արմատականի» հրատարակումից հետո նոր ստուգաբանություններով այդ բառերի թիվն զգալապես ավելացել է: Արդ, ինչ գնահատական պետք է տալ պրոֆ. Ղափանցյանի ուղղությանը: Պրոֆ. Է. Աղայանն իր «Հայ լեզվաբանության պատմություն» խիստ արժեքավոր աշխատության մեջ ճիշտ ու ճիշտ տվել է այդ գնահատականը: Մասնավորապես «Հայոց լեզվի պատմության հարցերը նորագույն ուսումնասիրություններում» գրախոսության մեջ (տե՛ս Պատմաբանասիրական հանդես), հանգամանորեն մերկուծելով պրոֆ. Ղափանցյանի ետմահու լույս տեսած վերոհիշյալ աշխատությունը, գրում է. «Միանգամայն դրական է այն, որ

հեղինակը մեծապես ընդարձակում է հայոց լեզվի ուսումնասիրության շրջանակները, քննում և վեր հանում հայերենի և փոքրասիական ու կովկասյան լեզուների կապերը, սակայն իր հայտնաբերած փաստերը նա մեկնաբանում է մեթոդաբանական ոչ ճիշտ մոտեցմամբ՝ լեզուների խաչավորման տեսության դիրքերից ելնելով: Իր ստուգաբանությունների հիմնական համեմատություններ է կատարում, թեև այդ չի նշանակում, որ նա ճիշտ ստուգաբանություններ չունի... [նրա մոտ] ճշմարիտը գտնելու և օգտագործելու համար անհրաժեշտ է խիստ զգուշավորություն»: Այսպես ուրեմն՝ սովետական շրջանում հայոց լեզվի պատմության ուսումնասիրություններն արվում էին իրարից բոլորովին տարբեր երեք մեթոդներով, այն է՝ պատմա-համեմատական (պրոֆ. Հ. Անտոյան), սահմանական (պրոֆ. Գ. Ղափանցյան) և մտական (պրոֆ. Ա. Ղարիբջյան): Այս վերջինի մասին արդեն վերևում խոսեցինք հենց հեղինակի իսկ գնահատությամբ:

Այնուամենայնիվ հայոց լեզվի պատմությունն իբրև առարկա դասավանդվում էր և երիտասարդ շատ մասնագետների համար նախասիրություն դարձավ: Միջին սերնդի մերկայացուցիչների մեջ առաջին հերթին պետք է հիշել վաղամտիկ լեզվաբան պրոֆ. Ա. Ղազարյանին, որը 1954 թ., մտական նախապաշարումներից ձեռքբազառված, հրատարակեց «Հայոց լեզվի համառոտ պատմություն» աշխատությունը: Սա ավելի շուտ ուսումնական մի ձեռնարկ է ուսանողության համար, որտեղ հեղինակը պատմա-համեմատական լեզվաբանության հետևիվորությամբ, ըստ պատեհի նաև նրա քննադատությամբ, առավել ընդհանուր գծերի մեջ նկարագրում է հայոց լեզվի զարգացման երեք հիմնական փուլերը, այն է՝ գրաբարը, միջին հայերենը, հայոց ազգային լեզուն (գրական աշխարհաբար): Հարկ է նշել, որ աշխատանքն առավելապես նկարագրական է, գուրկ տեսական ընդհանրացումներից, մանավանդ որ քննարկվող հարցերի վերաբերյալ հեղինակը չունի իր սեփական կոնցեպցիան: Խոսելով հայոց լեզվի բնույթի մասին, հեղինակն ընդունում է, որ նա հնդեվրոպական լեզու է, սակայն գտնում է, որ անդրենաժին է, քանի որ «նստակյաց ժողովուրդների գոյացման հարցը չի կարելի կտրել այն տերիտորիայից, որտեղ կազմավորվում են տվյալ ժողովուրդները: Ըստ նրա, արմեն-հայասա ցեղերն սպրում էին Հայկական բարձրավանդակում Ուրարտու պետությունից դեռ շատ առաջ, և վերջինիս կործանման հետևանքով հզորա-

նում են, կազմում են հայասա-արմենական ցեղային միություն, որը դառնում է հայ ժողովրդի կորիզը, որի մեջ ձուլվել են բազմաթիվ ցեղեր, որոնք և ի հետևանք խաչավորման՝ բառապաշարով, նույնիսկ բառակազմական, հնչյունական ու շատ այլ իրողություններով հարստացրել են հայերենը՝ չփոխելով, սակայն, հայերենի հնդեվրոպական բնույթը: Այստեղից էլ՝ «այն տեսակետը, ըստ որի միայն հնդեվրոպական արմատներն են համարվում հայոց լեզվի հիմնական բառաֆոնդի կորիզը և նրան հարազատ, իսկ մնացած բոլոր բառերը՝ ոչ հարազատ, ճիշտ չէ: Հայոց լեզվի կազմավորման շրջանում հայերենի բաղկացուցիչ տարրերը կազմած բառերի այն մասը, որը անհրաժեշտ է եղել հայ ժողովրդի տարբեր հատվածների հաղորդակցման պահանջները կատարելու համար և մտել է հայոց լեզվի հիմնական բառաֆոնդի մեջ, չպետք է նույնացնել ավելի ուշ շրջանում հայերենին աճած և հայոց լեզվի հիմնական բառաֆոնդի մեջ չմտած բառերի հետ: Այդ բառերը պետք է համարել հայերեն և ոչ թե անհարազատ... ինչպես օրինակ՝ աշխարհ, նամակ, սպուխտ, կնիք և այլն» (անդ, էջ 42): Անհասկանալի է, թե լեզուների գեղակցության սկզբունքն ընդունելու հետ ինչպես կարելի է հաշտեցնել վերոհիշյալ տեսակետը... Ընդհանրապես պետք է նկատել, որ պրոֆ. Ղազարյանի տեսական եզրակացությունների մեջ ոչ հստակ և խառնիխուռն շատ բաներ կան: Այսպես, օրինակ՝ նույն աշխատության 259-րդ էջում, խոսելով միջին հայերենի երկաստիճան բաղաձայնական համակարգի մասին, հայտարարում է. «Միջին հայերենի երկաստիճան սխտեմը խոսում է նաև այն մասին, որ միջին հայերենը գրաբարի պարզ շարունակությունը չէ, որ նա սկսել է կազմավորվել հայերենի բարբառների (ո՛ր—Ա. Ա.) հիման վրա և ոչ թե գրաբարն է աղավաղվել ու դարձել աշխարհիկ բարբառ, միջին հայերեն»:

Սակայն, այնուամենայնիվ, պետք է ընդունել, որ այդ աշխատությունն իր մատչելիությամբ մեծապես նպաստեց մեզանում հայոց լեզվի պատմության հարցերի հանդեպ հետաքրքրությունների աշխուժացմանը: Պրոֆ. Ղազարյանը հետագայում ևս ռադիկալ հայոց լեզվի պատմության հարցերով նա նպատակ ուներ ի նորոք քննել միջին հայերենը և ահա 1960 թ. յույս քննադատեց «Միջին հայերեն» (գիրք Ա.) աշխատությունը: Եթե նկատի ունենանք, որ մինչ այդ բացի Կարստից ոչ ոք առանձին ուսումնասիրության նյութ չէր դարձրել միջին հայերենի հնչյունաբանությունը, սպա ակնառու կդառնա այս աշխատանքի կարևո-

րությունը: Եվ իրոք, անխտիր կերպով իրար կողքի դնելով 10—17-րդ դդ., ի տարբերություն գրաքարի, եղած բոլոր հնչյունական փոփոխությունները, հեղինակն աշխատել է տալ հայերենի և՛ ձայնավորների, և՛ երկբարբառների ու եռաբարբառների, և՛ բաղաձայնների հնչյունափոխության համապատասխան պատկերը: Հեղինակը միջին հայերենի վերաբերյալ որպես լեզվական համակարգ ունի իր, նույնիսկ Կարստին և ուրիշների հակադրվող, տեսակետը. «Մենք չենք պաշտպանում այն լեզվաբանների կարծիքը, որոնք գտնում են, թե եղել են տարբեր միջին հայերեններ, թե միջին հայերենի այդ տարբեր ձևերից մեկը՝ Կիլիկյան բարբառը գրականության աստիճանի բարձրացավ և պահպանվեց, իսկ մնացած ձևերը գրի չառնվեցին ու չհասան մինչև մեր ժամանակները» (անդ, էջ 92),—գրում է նա: Այնուհետև՝ «Միջին հայերեն տերմինի տակ մենք հասկանում ենք 10—17-րդ դարերի գեղարվեստական, գիտական, այլև պատմական գրականությանը ավարտված լեզվական այն բազմազան տարրերի ամբողջությունը, որը հասկանալի էր տարբեր բարբառներով խոսող հայ ժողովրդի տարբեր հատվածներին» (էջ 92—93): 10—17-րդ դդ. միջին հայերենին ինչպես «Հայոց լեզվի համատար պատմության», այնպես էլ «Միջին հայերեն» աշխատության մեջ վերագրում է երկաստիճան իլլազուրկ համակարգ, այն է՝ գրաքարի ձայնեղ հպակազմերի վերածում շնչեղ-խուլերի (բ>փ, գ>ք, դ>թ....), իսկ խուլերի վերածում ձայնեղների (պ>բ, կ>գ, տ>դ....), անշուշտ, գրաբարյան շնչեղ-խուլերի պահպանմամբ: Իսկ նորագույն ուսումնասիրությունները պարզում են, որ այդքան էլ հեշտ չէ վերջնականապես լուծված համարել միջին հայերենյան բաղաձայնական համակարգը, և որ վերևի համակարգի հետ միաժամանակ միջին հայերենին հատուկ են եռաստիճան անտեղաշարժ, եռաստիճան տեղաշարժ-տեղափոխությամբ, քառաստիճան և այլ բաղաձայնական համակարգեր (տե՛ս Հ. Մուրադյանի «Միջին հայերենի բաղաձայնական համակարգի հարցի շուրջը» հոդվածը. Պատմա-բանասիրական հանդես, 1969 թ., թիվ 2): Եթե միջին հայերենը մի ամբողջական միասնություն է, այդ դեպքում ինչպե՛ս բացատրել միևնույն ժամանակաշրջանում հնչյունաբանական-ձևաբանական տարբեր համակարգ ունեցող լեզվական ամբողջությունների առկայությունը, համակարգեր, որոնք արձանագրված են գեղարվեստական գրականության և մանավանդ արձանագրությունների և հիշատակարանների մեջ: Պետք է ճշտել նաև հետևյալ հարցը. 10—

17-րդ դդ. պատմագրության լեզուն գրաբարն է՝ միջին հայերենյան որոշ իրությունների ներթափանցումով: Ինքը միջին հայերենն էլ, ինչպես ճիշտ կերպով դիտել է Ղևոնդ Հովհանյանը, հեղինակից հեղինակ տատանումներ է տալիս ուսմակախոս գրաքարից մինչև գրաքարախոս ուսմկորեն: Վերևի սկզբունքային ելակետերն ենք գրտնում նաև հեղինակի «Հայոց գրական լեզվի պատմություն» (Երևան, 1961) աշխատության մեջ:

Սովետական շրջանում հայոց լեզվի պատմության ուսումնասիրության հարցերին նվիրված առավել կարևոր աշխատություններից է պրոֆ. Ա. Աբրահամյանի «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» (Երևան, 1953 թ.) վերագրով մենագրությունը, որտեղ իրենց ամբողջության մեջ պատմականորեն քննված են գրաքարի, միջին հայերենի, բարբառների և աշխարհաբարի բոլոր դերբայները: Գրավոր հնագույն վկայություններից սկսելով՝ հեղինակը ցույց է տվել գրաբարյան դերբայների կիրառություններն ու ձևափոխությունները միջին հայերենում և աշխարհաբարում, այլև բացահայտել ինչպես միջին հայերենին, այնպես էլ միայն աշխարհաբար լեզվի գրական արտահայտություններին հատուկ դերբայների լեզվաձևային առկայությունները գրաբարում, ինչպես նաև նրանց կիրառությունները: Աշխատանքը կատարված է սկզբունքային ճիշտ ելակետից և ցույց է տրված, որ հայոց լեզվի դերբայները պատմական զարգացման մի անընդհատ շղթա են կազմում: Նույն հեղինակին է պատկանում նաև սովետական շրջանում ստեղծված գրաքարի ամենակատարյալ դասագիրքը, որտեղ լեզվի պատմության հարցերի վերաբերյալ ըստ պատեհի արված են բազմաթիվ արժեքավոր դիտողություններ: Արժեքավոր է նաև նրա «Փաստեր հայերենի պատմական հնչյունափոխության վերաբերյալ» (ԳԱՏ, 1957, № 4) հոդվածը, որտեղ քննված են հայերենի պատմական հնչյունափոխության մի քանի երևույթներ:

Սովետական շրջանում հայոց լեզվի պատմության ուսումնասիրության հարցերի մեծ երախտավոր է պրոֆ. Է. Աղայանը: Դեռևս 1944 թ. նա որպես դոկտորական դիսերտացիա գրում է «Հայ լեզվաբանության պատմություն» երկհատուր մենագրությունը, որը բարեբախտաբար հրատարակվեց ավելի ուշ. 1-ին հատորը՝ 1958 թվին, իսկ 2-րդ հատորը՝ 1962 թ.: Հասկանալի է, որ աշխատության գրությունից մինչև հրատարակումը մեր լեզվաբանական գիտության մեջ տեղի էին ունեցել արմատական տեղաշարժեր, որոնք և իրենց արտացոլումը

գտան հատկապես 2-րդ հատորում, որ նվիրված է հայ լեզվաբանական մտքի դրսևելորմանը Սովետական Միությունում: Պրոֆ. Աղայանի սույն աշխատանքի մեծագույն արժանիքն այն է, որ հայ լեզվաբանության մեջ առաջին անգամ լինելով ստեղծեց հայ լեզվաբանության պատմության մի հետևողական դասընթաց, որն անցած տասնամյակում մեծապես օգնեց մասնագետներին ու ուսանողությանը իրենց գիտելիքները հարստացնելու հայագիտության այդ բնագավառի վերաբերյալ: Պրոֆ. Աղայանն իր այս աշխատության մեջ չի բավականանում հայ և օտար հայագետների գործերի սուկ նկարագրությամբ և վերլուծությամբ, այլ կատարում է հայ լեզվաբանական մտքի զարգացման շրջանաբաժանումներն իրենց դպրոցներով, ապա և հախտուն կերպով միջամուխ լինելով արտահայտված լեզվաբանական տեսակետներին, անհրաժեշտ բացատրություններով ու քննադատական խոսքով ըստ էության գնահատում է մասնակի կամ ընդհանուր տեսակետներ: Այս տեսակետից առավելապես աչքի է ընկնում 2-րդ հատորը, որտեղ քննարկված ժամանակաշրջանի լեզվաբանական երևույթներին ախանառես և մասնակից է հեղեց ինքը հեղինակը: Հասկանալի է, որ մեթոդաբանական տեսակետից ճիշտ ուղու վրա կանգնած լինելով՝ պրոֆ. Աղայանը մեծապես օգտակար գործ է կատարել եկող սերունդների համար՝ լեզվաբանական գիտության պատմության բարձունքից գիտականորեն և խղճի մտքը գնահատելով մեր լեզվաբանական գիտության պատմության մեջ: Մնում է հուսալ, որ պրոֆ. Աղայանը շարունակի 2-րդ հատորը՝ այն ամբողջացնելով, ապա և, ինչպես խոստանում է 2-րդ հատորի «Երկու խոսքում», մի առանձին հատոր էլ (3-րդ հատոր) նվիրի ժամանակակից արտասահմանյան հայերենագիտությանը:

Պրոֆ. Աղայանը «Գրաբարի քերականություն» (հատոր 1-ին, գիրք Ա, հնչյունաբանություն, Երևան, 1964) արժեքավոր աշխատությանը հայոց լեզվի պատմության ուսումնասիրության հարցում մեծ հեռանկար խոստացող բոլորովին նոր ուղղության ռահվիրան հանդիսացավ: Խնդիրն այն է, որ լեզվաբանական նորագույն մեթոդների կիրառությամբ ձեռնարկել է գրաբարի համաժամանակյա ու պատմական քննությունը: Սույն հատորում ի նորոք քննված են գրաբարի հնչյունաբանությունը, հնչյունաբանությունը, հնչյունափոխությունն ու ուղղագրությունը: Նշենք նաև, որ պարբերական մամուլում պրոֆ. Աղայանը հանդես է գալիս հայոց լեզվի պատմության առավել կարևոր և հանգուցային հարցերի շուրջ հողվածներ:

րով: Պետք է խոստովանել, որ հայ բարբառների բաղաձայնական համակարգի վերաբերյալ նրա հողվածը շատ բանով հասկացրեց թե՛ հողեր՝ միաժամանակ նպատեղով այդ հարցի շուրջ լայն բանավեճի ծավալմանը: Արժեքավոր են նաև ինչպես «Բարբառային հնագույն տարբերություններ հայերենում» (ԳԱՏ, 1958, թիվ 5), «Հայերենի հնչյունային համակարգի պատմությունից» (ՊԲՀ, 1960, թիվ 2) և շատ ուրիշ հողվածներ:

Հայոց լեզվի պատմության հարցերը լայնորեն ուսումնասիրվեցին պրոֆ. Գ. Զահուկյանի աշխատություններում: Բայց ծանոթ լինելով դասական և մի շարք հնագույն մեռած լեզուների, նա ի նորոք ուսումնասիրեց հայոց լեզվի պատմության մի շարք հանգուցային և կնճոռո հարցեր: Դեռևս 1954 թ. նա լույս ընծայեց «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում» արժեքավոր աշխատությունը, որի մեջ ինչպես տպագիր, այնպես էլ ձեռագիր վիճակում մեզ հասած աղբյուրների հիման վրա հանգամանորեն ուսումնասիրված են հայ քերականական մտքի զարգացումն ու թարգմանական և ինքնուրույն քերականագիտական աշխատությունները Հայաստանում 5—15-րդ դդ.: Ծուտով պրոֆ. Զահուկյանը հրատարակեց «Հին հայերենի հողվածն սխառեսր և նրա ծագումը» (Երևան, 1959 թ.) աշխատությունը:

Ծիշտ է, որ պրոֆ. Լ. Աճառյանն իր «Լիակատար քերականության» 3-րդ հատորը (1957 թ.) նվիրել է գույակակի ու նրա քերականական կարգերի համակողմանի քննությանը, սակայն պրոֆ. Զահուկյանի սույն աշխատությունը նրանից բոլորովին անկախ է ստեղծված և թեև 1959 թ. է լույս տեսել, սակայն պատրաստ է եղել շատ ավելի շուտ: Հեղինակը ելնում է այն ճիշտ դրույթից, որ հին հայերենի հողվածն համակարգը համակողմանիորեն քացահատեսու համար պետք է նաև քննել պատմականորեն նրա հետ առնչված լեզուների երթաշերտային, առշերտային և վերնաշերտային նստվածքները: Աշխատության մեջ հին հայերենի համար ընդունված հողվածն երկու տիպերին (ձայնավորահանգ և ձայնորդահանգ) նա իր կողմից ավելացնում է «անտողիկ՝ ձայնավոր ու ձայնորդահանգ հիմքով կամ տարահիմք տիպ, որ գուգորդում է երկու հիմնական տիպերի ստանձնահատկությունները»: Մյուս կողմից՝ քննադատելով հին հայերենի հողվածն համակարգի ծագման մեկնաբանության անցյալի լեզվաբանական գիտության միակողմանիությունը, պրոֆ. Զահուկյանը ճշտորեն նկատում է, որ

այդ հարցն ուսումնասիրելիս պետք է հաշվի առնել ինչպես հնդեվրոպական շրջանից եկող օրինաչափությունները, այնպես էլ միայն նախահայերենին ու հին հայերենի զարգացմանը յուրահատուկ ներքին օրինաչափությունները: Միաժամանակ նա սահմանում է յոթը օրենք, որոնք ենթադրում են այս կամ այն բառի այս կամ այն հոլովման ենթարկվելու իրողությունը: Մասնավորապես 5-րդ գլուխը, որտեղ քննված է շեշտը որպես հոլովման համակարգում կարևոր դեր խաղացած երևույթ, պրոֆ. Ադայանի գնահատությամբ «հայագիտական ուսումնասիրությունների մեջ այդ հարցին նվիրված ամենահանգամանակից ու առավել ամբողջական քննությունն է» (տե՛ս նրա «Հայոց լեզվի պատմության հարցերը նորագույն ուսումնասիրություններում» հոդվածը, ՊԲՀ): Հայոց լեզվի պատմության առավել կննդոտ հարցերից են նրա աղերսակցություններն ու ազգակցությունը հայասերենի, խեթերենի, խուրիտերենի և նախահայերենին ժամանակակից մի քանի մեռած այլ լեզուների հետ, մի բնագավառ, որ պահանջում է այդ լեզուների իմացություն: Այս, կարելի է ասել, terra incognita-ն համարվում է պրոֆ. Ջահուկյանի գտալ իր բարի մշակին: Դեռևս 1961 թ. գրած «The Hayasa Language and its Relation to the Indo-European Languages» («Հայասպի լեզուն և նրա հարաբերությունը հնդեվրոպական լեզուներին» հոդվածում) (Archiv orientální, 1961 թ., թիվ 3), ապա և «Урартский и индоевропейские языки» («Ուրարտերենը և հնդեվրոպական լեզուները» աշխատության մեջ (Երևան, 1963 թ.) պրոֆ. Ջահուկյանն աշխատել է բացահայտել հայասերենի հնդեվրոպական բնույթը, ապա և հնդեվրոպական - ուրարտական - խուրիտական ցեղակցական կապերը, որով և հնարավոր դարձավ սահմանազատել հայերենում եղած ուրարտական և խուրիտական փոխառությունները, ապա և բացահայտել հայասական տարրը հայերենում: Այնուհետև «Очерки по истории дописьменного периода армянского языка» («Ակնարկներ հայոց լեզվի նախագրային շրջանի պատմության») աշխատության մեջ (Երևան, 1967 թ.), որը հեղինակի գնահատությամբ, «պրոբլեմատիկայով կապված է վերոհիշյալ աշխատությունների հետ», մատնանշելով հնդեվրոպական ծագումով բազմաթիվ բառեր, որոնք հայոց լեզվի հայտնի օրինաչափությունների հիման վրա բացատրելի չեն, պրոֆ. Ջահուկյանը հիմք է առնելով հայերենի բառապաշարում գտնելու հայասական, ուրարտական, խուրիտական շերտերը, ինչպես նաև վերականգնելու հայասական և

ուրարտական շերտեր, որոնք վկայված չեն ծանոթ գրավոր հիշատակարաններում: Միաժամանակ հեղինակը նորագույն տրվյալների ներառումով ամենայն մանրամասնությամբ քննում է հայերենի բաղաձայնական համակարգի հարցերը՝ ի մի բերելով հանրահայտ օրինաչափությունների համեմատ եղած բոլոր շեղումները: Ավելացնենք, որ այս երեք աշխատությունները ուսերեւն գրված լինելով՝ համայն աշխարհում ավելի շատ մասնագետների մատչելի դարձան: Կասկած չկա, որ պրոֆ. Ջահուկյանի վերոհիշյալ աշխատությունները ներդրում են ընդհանրապես ամբողջ պատմա-համեմատական ուղղության մեջ: Պրոֆ. Ջահուկյանը միաժամանակ տվեց հայոց լեզվի զարգացման նոր շրջանաբաժանումը: Դեռևս 1956 թ. պետական համալսարանի գիտական աշխատությունների ժողովածուում հրատարակած «Հայոց լեզվի պերիոդիզացիայի հարցերը» հոդվածը որոշ վերափոխումներից հետո հրատարակեց որպես առանձին աշխատություն «Հայոց լեզվի զարգացման փուլերը» վերնագրով (Երևան, 1964 թ.): Վերջերս հրատարակված «Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» (Երևան, 1969 թ.) աշխատության 1-ին բաժնում մեկ անգամ ևս անդրադառնալով այդ հարցին՝ տալիս է մեր լեզվի զարգացման հետեւյալ բաժանումը. 1) Հին շրջան՝ ա) դասական (5-րդ դ., մինչև կեսերը), բ) էտրուսական (6—7-րդ դդ.), գ) նախամիջին ենթաշրջան (8—11-րդ դդ.), 2) Միջին շրջան՝ ա) կլիկյան նորմավորման ենթաշրջան (12—14-րդ դդ.), բ) աշխարհաբարսցման ենթաշրջան (15—16-րդ դդ.), 3) Նոր շրջան՝ ա) վաղ աշխարհաբարսի ենթաշրջան (17-րդ դ. սկզբներից մինչև 19-րդ դ. կեսերը), բ) երկնյուղ աշխարհաբարսի ենթաշրջան (19-րդ դ. կեսերից մինչև 1920 թ.), գ) ժամանակակից հայերենի ենթաշրջան (1920 թ. մինչև մեր օրերը): Հարկ է նշել, որ պրոֆ. Ջահուկյանն արդի հայերենի վիճելի հարցերի վերաբերյալ բանավեճեր ղեկավարելով՝ մեծապես օգնեց մեզանում լեզվաբանական մտքի աշխուժացմանը: Մյուս կողմից՝ հայերենի նյութի հիման վրա մեր լեզվաբանության նվաճումներն աշխարհի սեփականությունը դարձնելով, մեծ ավանդ է ներդրում սովետական լեզվաբանական գիտության մեջ ընդհանրապես:

Ուշադրության արժանի է նաև պրոֆ. Հ. Կուսիկյանի «Очерки исторического синтаксиса литературного армянского языка» («Գրական հայերենի պատմական շարահյուսության ակնարկներ», Մոսկվա, 1959 թ.) աշխատությունը: Նախ նշենք, որ

հեղինակը մեր օրերում ոռոսական հայագիտական դպրոցի գեղեցիկ ավանդույթների շարունակողն էր և ուշի-ուշով հետևում էր ու ամեն կերպ քաջալերում ու օգնում հայ լեզվաբանական գիտության ծաղկմանը Հայաստանում: Պրոֆ. Կուսիկյանի այս աշխատությունը հատկապես ուշագրավ է նրանով, որ փաստորեն հայերենի պատմական շարահյուսության ուսումնասիրման առաջին փորձերից մեկն է: Ծիշտ է, Ա. Մելեի մասին խոսելիս ասել ենք, որ նա գրադվել է հայերենի շարահյուսության հարգերով, սակայն նա միայն գրաբարի՝ շարահյուսության համեմատական քննություն է կատարել, մինչդեռ պրոֆ. Կուսիկյանը հայերենի շարահյուսությունն ուսումնասիրում է իր մեջ՝ փյապապական շրջանից մինչև արդի հայերեն: Ի պատիվ Կուսիկյանի պետք է ասել, որ առանց որոշակի վիճակագրության, լեզվական երևույթների զգացողությամբ ճշտորեն դիտել տվեց, որ սկսած 5-րդ դարից որոշիչը որոշյալից հետո կիրառելու ձգտումը կենդանի լեզվից հետանալու և լեզվական աահպանողականության երևույթ է: Պրոֆ. Ադալանն իր «Հայ լեզվաբանության պատմություն» աշխատության մեջ քննադատում է Հ. Կուսիկյանի այս տեսակետը: Պետք է խոստովանել, սակայն, որ իրավացի է պրոֆ. Կուսիկյանը: Այս հարցի վրա լույս է տրոսում Հենրիկ Ավետիսյանը, որն իր «Որոշիչ-որոշյալի կապակցությունը գրաբարում» դիսերտացիոն աշխատության մեջ վիճակագրությունից բխող անատարկելի փաստերով ցույց է տալիս, որ 5-րդ դարում գերակշռող ոչ թե որոշիչների կատաաս կիրառությունն է, այլ՝ նախադաս: Ի դեպ, հեղինակն այս եզրակացության է եկել 5-րդ դարի հատկապես ինքնուրույն երկասիրությունների լեզվի փաստերի քննությունից, բանի որ մնացած երկերը մեծ մասամբ հունարենից թարգմանված լինելով՝ հունարենի հետևողությամբ կատաաս համաձայնեցված որոշիչներ են օգտագործել:

Հասկանալի է, որ դեռևս 5-րդ դարում գերակշռող այս երևույթը շարունակվել է նաև հետագայում՝ ինչպես ստույգ վիճակագրությամբ ցույց է տվել Հ. Ավետիսյանն իր աշխատանքում: Ուստի և, այս հարցի վերաբերյալ մեր լեզվաբանության մեջ շրջանառության մեջ դրված՝ լոկ լեզվական տպավորությամբ արված եզրակացությունները պետք է փոխարինել վիճակագրությունից բխող անատարկելի եզրակացություններով, այն է՝ 5-րդ դ. և հետո, գրաբարի տևողության ամբողջ ժամանակաշրջանում հայերենին հատուկ են նախադաս չհամաձայնվող (և միավանկ) որոշիչները:

Անցած տասնամյակն ամենաարդյունա-

վորը եղավ հայոց լեզվի պատմության ուսումնասիրության տեսակետից: Վաստակավոր հայագետների պատրաստած երիտասարդ մասնագետները գրաբարի, հատկապես նրա շարահյուսության այլևայլ հարցերի մասին գրեցին ոչ միայն մի շարք արժեքավոր դիսերտացիաներ, այլև տպագրեցին մեծագրություններ, ինչպես՝ Թ. Ղարազյույանի «Հին հայերենի խոնարհման համակարգը» (Երևան, 1961), Լ. Խաչերյանի «Գրությունն արվեստի լեզվա-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում» (Երևան, 1962) կն, կն: Արևելահայ աշխարհաբարի կազմավորման շրջանի պատմությանն է նվիրված Ս. Գալստյանի «Ակնարկներ աշխարհաբարի պատմության» (1850—1860-ական թթ.) երկասիրությունը (Երևան 1963 թ.): Այս բոլորից դուրս, հայոց լեզվի պատմության առանձին հարցերին են անդրադարձել մի շարք լեզվաբաններ: Ուշագրավ են հատկապես Ա. Մարգարյանի՝ կրեղանակիչի և -ում վերջավորությամբ ակնարարի առաջացմանը նվիրված հոդվածները (տե՛ս նրա «Հայերենի հարադիր բալերը», Երևան, 1966 թ.):

Հայոց լեզվի պատմության առանձին հարցերի, մասնավորապես եղանակիչների ծագման մասին հետաքրքրական տեղեկություններ ունի Մ. Արեղյանն իր «Հայոց լեզվի տեսություն» արժեքավոր աշխատության մեջ:

Գրաբար լեզվի 10-րդ դարի վիճակը լավագույնս ներկայացված է Վ. Առաքելյանի՝ հանձարեղ Նարեկացու ստեղծագործությունների լեզվի քննությանը նվիրված մեծագրության մեջ: Նույն հեղինակին են պատկանում գրաբար երկերի թարգմանությունների մասին գրած գրախոսություններում արված բանասիրական մի շարք արժեքավոր դիտումներ:

Կուզենալիք մասնավորապես խոսել հայոց լեզվի պատմության ուսումնասիրության հարցերով գրադվող երիտասարդ մի խումբ մասնագետների աշխատանքների մասին: Խոսքը մեր հանրապետության գիտությունների ակադեմիայի լեզվի հնատիտոտի հայոց լեզվի պատմության բաժնի աշխատակիցների մասին է. այս բաժնում ծրագրված է գրական հայերենի պատմությունն ուսումնասիրել իր ամբողջության մեջ: Այժմ արդեն մամուլի տակ է բաժնի աշխատակից Ա. Մուրադյանի «Հունարան դպրոցը և նրա դերը գրաբարի քերականական տերմինաբանության ստեղծման գործում» արժեքավոր աշխատությունը: Քաջ տիրապետելով ինչպես գրաբարին, այնպես և հին հունարենին, հեղինակը շատ կողմերով լուսաբանել

Է հայոց լեզվի պատմության մի շատ կարե-  
վոր հարց:


Բաժնի ուշադրության կենտրոնում է հատ-  
կապես միջին հայերենի ուսումնասիրու-  
թյունը: Հայտնի է, որ միջին հայերենն ու-  
սումնասիրել է միայն օտար հայագետ Յ.  
Կարստը: Միջին հայերենի նոր հետազոտու-  
թյունը էականապես տարբերվում է նախոր-  
դից: Բանի որ միջին հայերենն ինքն էլ  
զարգացման իր շրջաններն ունի, ուստի  
նախ ուսումնասիրվում է նրա 12—14-րդ դդ.  
լեզվական վիճակը, որն առավելապես ներ-  
կայացված է կիլիկյան հայերենով, ապա և  
15—16-րդ դդ. ժամանակաշրջանը, երբ  
զգայապես ներթափանցում են բարբառային  
տարրերը: Մամուլի տակ է արդեն «Ակ-  
նարկներ միջին գրական հայերենի պատ-  
մության» խորագրով աշխատանքը, (շուրջ  
35 մամուլ), որտեղ հանգամանորեն ուսում-  
նասիրված են միջին հայերենի կազմավոր-  
ումն ու հնչյունաբանությունը (Հ. Մուրադ-  
յան), բառագիտությունը (Մ. Մուրադյան),  
խոնարհումն ու չթեքվող խոսքի մասերը (Ս.  
Անթոնյան):

Կառուցվածքային լեզվաբանության՝ սկզբ-  
բունքների խելացի օգտագործմամբ միջին  
հայերենի անվանական հոլովման համա-  
կարգի մասին շատ հաջող աշխատանք է  
գրել նաև բաժնի աշխատակից Լ. Հովսեփ-  
յանը: Ուշադրության կենտրոնում են նաև  
միջին հայերենի շարահյուսության հարցե-  
րը. բաժնի երկու աշխատակիցներ ուսում-  
նասիրություններ են գրում մեր լեզվի այդ  
շրջանի պարզ և բարդ նախադասություննե-  
րի կապակցման օրենքների վերաբերյալ:  
Այս բոլորից դուրս, բաժնի աշխատակից-  
ներն այժմ աշխատում են առաջին անգամը  
լինելով մեր լեզվաբանության պատմության  
մեջ ստեղծել հայոց լեզվի պատմական քե-  
րականություն՝ քննելով մեր լեզվի բոլոր հ-  
րողություններն իրենց պատմական փոփո-

խությունների անընդհատականության մեջ:

Ինչքան էլ զարմանալի լինի, մեր լեզվի  
արևմտահայ հատվածի կազմավորման և  
պատմական փոփոխությունների մասին  
գրված մեծագրություններ չկային: Տ. Ծահ-  
բազյանն առաջինը խիզախեց՝ 1963 թ.  
տպագրելով «Արևմտահայ աշխարհաբարի  
ստաշագումը» ուսումնասիրությունը՝ ստա-  
վելապես քննելով ինչպես միջին հայերենի,  
այնպես էլ արևմտահայ բարբառների և  
մասնավորապես պոլսահայ բարբառի աղեր-  
սակցությունների հարցը արևմտահայ գրա-  
կան աշխարհաբարի հետ: Սրանից էապես  
տարբերվում է բաժնի աշխատակից Վ. Ա-  
ննիյանի արևմտահայերենի վերաբերյալ  
կատարած հետազոտությունը: Հայտնի է, որ  
գրական արևմտահայերենը միատարր հա-  
կացություն չէ. նա ունեցել է իր կազմավոր-  
ման, նորմավորման և զարգացման շրջան-  
ները: Այդ տեսանկյունից էլ ուսումնասիր-  
վում է. արդեն իսկ մամուլի տակ գտնվող  
«Արևմտահայ գրական լեզվի կազմավոր-  
ումն ու զարգացումը 1700—1870 թթ.» աշ-  
խատության մեջ բացառիկ բարեխղճությամբ  
և հանրապետության մեջ այդ նյութին վե-  
րաբերող գրականության անմնացորդ օգ-  
տագործմամբ հեղինակին հաջողվել է հան-  
գամանորեն ուսումնասիրել արևմտահայ  
լեզվաշինարարների պայքարը՝ նոր գրա-  
կան լեզու կազմավորելու, նրա բառապա-  
շարն ու քերականությունը մշակելու ու կա-  
յունացնելու համար:

Մենք ջանացինք միայն ստավել ընդհա-  
նոր գծերի մեջ ներկայացնել հայոց լեզվի  
պատմության և համեմատական քերակա-  
նության ուսումնասիրմանը նվիրված աշխա-  
տանքները: Հասկանալի է, որ մեկ հոդվա-  
ծով անհնարին է սպասել խոսք ասել այդ  
հարցի մասին, սակայն արդար հպարտու-  
թյամբ կարելի է ասել, որ արդյունավոր է  
եղել հայագիտության այդ քննազավտը,  
խոստումնալից է նաև ապագան:





ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Հայաստանում սովետական կարգերի հաստատման հիսնամյակի առթիվ . . . . .	3
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Վերածննդյան խորհուրդն ու հրաշքը . . . . .	6
Ա. ՀԱՏԻՏՅԱՆ—Մայր Աթոռ ու Էջմիածինը և վերածնված Հայոց աշխարհի հիսնամյակը Հոբելյանական հանդիսություններ Մայր Աթոռում՝ Սովետական Հայաստանի հիսնամյակի առթիվ . . . . .	9
ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՐԳԵՐԻ ՄԵՋ	
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ—Հայրենիքիս հետ . . . . .	30
ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ—Է՛յ, ջան-հայրենիք . . . . .	31
ԵՂԻԾԵ ՉԱՐԵՆՑ—Ես իմ անուշ Հայաստանի . . . . .	31
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԾԻՐԱԶ—Երևան . . . . .	32
ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ—Երգ Հայաստանի . . . . .	33
ՍԻՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ—Մտորումներ ճանապարհի կեսին . . . . .	33
ԳԵՎՈՐԳ ԷՄԻՆ—Մենք փո՛քք ենք, ա՛յո . . . . .	34
ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ—Հպարտ եմ ես . . . . .	34
ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ—Հայրենիք . . . . .	35
ԱԼԻՍԻԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ—Նամակ առ Հայաստան . . . . .	35
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ . . . . .	37
Եպիսկոպոսաց վերջին ժողովի կողմից ընտրված հանձնախմբի գումարումը Երուսաղեմում, հայոց պատրիարքարանում . . . . .	40
Ա. Էջմիածնի հոգևոր ճեմարանի վերաբացման 25-ամյակին նվիրված հանդիսություններ Մայր Աթոռում . . . . .	42
ԱՎԵՏԻՔ ԱԴԱՄՅԱՆ—Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի օրագիրը և հուշերը . . . . .	50
Ա. ԱՆԹՈՍՅԱՆ—Հայոց լեզվի պատմության և համեմատական քերականության ուսումնասիրումը սովետական շրջանում . . . . .	56

ԿՐԹԱԳՐԱԿԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՅԵՆ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ  
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».  
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտագրության 4/XI 1970 թ.: Ստորագրված է տպագրության 28/XII 1970 թ.,  
տպագրական 4,25 մամուլ + 2 ներդիր, թուղթ 60x84<sup>1</sup>/<sub>8</sub>, պատվեր 842

Մայր Աթոռ ու Էջմիածնի տպարան